ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2007

Զարգացումը
Վերահսկողությունը
Կարգավորումը

2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և կարգավորումը 5

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 18

Վերահսկողությունը 2007 թվականին 32

Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 36

ՀՀ ֆինանսական համակարգը 2007 թվականին 39

ՀՀ բանկային համակարգը 2007 թվականին 39

Բանկային համակարգի կապիտալը 41

Բանկային համակարգի պարտավորությունները 43

Բանկային համակարգի ակտիվները 46

Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները 51

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 54

ՀՀ ֆինանսական շուկայի այլ մասնակիցները 2007 թվականին 58

ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները 58

ՀՀ ապահովագրական շուկան 59

ՀՀ արժեթղթերի շուկան 69

ՀՀ տարածքում գործող գրավատները 70

Արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետերը և արժութային դիլերները 70

Դրամական փոխանցումներ և վճարային գործիքներ ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ 71

Վճարահաշվարկային համակարգ 73

Վերահսկողության զարգացման հեռանկարները 84

Հավելվածներ 91

ՆԱԽԱԲԱՆ

2007 թվականին ՀՀ ֆինանսական համակարգում շարունակվել են դրական զարգացումները: ՀՀ ֆինանսական համակարգի համընդհանուր ակտիվների մեծության մոտ 92%-ը բաժին է ընկել բանկային համակարգի ակտիվների մեծությանը:

Հաշվետու տարում մակրոտնտեսական միջավայրում դարձյալ շարունակվել են վերջին տարիներին ձևավորված կայուն զարգացման միտումները, որոնք բարենպաստ ազդեցություն են ունեցել նաև բանկային համակարգի զարգացումների վրա: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալները ավելացել են տնտեսության բոլոր ճյուղերում, ընդ որում՝ վերջին տարիներին պահպանվում են տնտեսության ճյուղերի վարկավորման սեզոնային դրսևորումները: Ինչպես 2006 թվականին, այս տարի ևս ամենաբարձրը հիփոթեքային վարկավորման աճի տեմպն էր (125% աճ): Ծավալային ամենամեծ աճը ապահովել են սպառողական վարկերը, որին նպաստել է 2007 թվականին համախառն ազգային եկամտի բարձր՝ 17.4% աճի մակարդակը:

2007 թվականին իրական ՀՆԱ աճը կազմել է 13.7%, ընդ որում՝ ՀՆԱ աճին մեծապես նպաստել է շինարարության ճյուղը (բաժին է ընկել աճի 4.5 տոկոսային կետը): Չնայած շինարարության ճյուղի աճը հիմնականում ապահովվել է ոչ թե բանկային համակարգի վարկավորման (բանկային համակարգի տրամադրած վարկերում շինարարության ճյուղին բաժին է ընկնում 5%-ը), այլ մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորված շինարարության ծավալների աճի հաշվին, այնուամենայնիվ շինարարության ոլորտում թողարկման իրական 27% աճին զուգահեռ, բանկային համակարգի կողմից ճյուղի վարկավորումն ավելացել է 91%-ով:

Տարվա ընթացքում ՀՀ տնտեսությունում ֆինանսական միջնորդության մակարդակը բավականին աճել է. բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունը ավելացել է 4.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 24.4%, բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ հարաբերակցությունը ավելացել է 4.4 տոկոսային կետով և կազմել 13.0%: Ֆինանսական միջնորդության մակարդակը Հայաստանում դեռևս ցածր է, սակայն տնտեսության կայուն զարգացման պայմանները և բնակչության եկամուտների աճը ՀՀ ֆինանսական համակարգի ընդլայնման լուրջ հիմքեր են ստեղծում:

2007 թվականին բանկային համակարգի հատկանշական դրսևորումներից են եղել.

- Վարկերի աննախադեպ աճը. տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալներն ավելացել են 78%-ով:
- Զուտ արտաքին ակտիվների (ԶԱԱ) նվազումը. ԶԱԱ-ն նվազել է 87 մլրդ դրամով և կազմել -76 մլրդ դրամ, ընդ որում՝ ոչ ռեզիդենտներից (հիմնականում օտարերկրյա բանկերից) ներգրավված այդչափ միջոցները առավելապես տրամադրվել են ներքին տնտեսության վարկավորմանը: Հատկանշական է, որ մինչև 2007 թվականը ԶԱԱ մեծությունը ՀՀ բանկային համակարգում միշտ եղել է դրական:
- ՀՀ դրամայնացումը. ՀՀ դրամային ակտիվների տեսակարար կշիռը աճել է 6.1 տոկոսային կետով, ՀՀ դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը՝ 7.7 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել են ընդհանուր ակտիվների 63.0%-ը ու պարտավորությունների 51.7%-ը (մինչև 2007 թվականը պարտավորությունների կազմում արտարժութային միջոցների տեսակարար կշիռը գերազանցել է ՀՀ դրամային միջոցների տեսակարար կշիռը):

Ընդհանուր առմամբ, վարկերի կտրուկ աճի պայմաններում ակտիվների որակի վատթարացում չի արձանագրվել. ստանդարտ դասի ակտիվների տեսակարար կշիռը տարեվերջին կազմել է ընդհանուրի ընդամենը 97.6%-ը (նախորդ տարվա վերջին՝ դարձյալ 97.6%), իսկ տարվա ընթացքում իրականացված զուտ մասհանումների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կազմել է ընդամենը 0.6% (նախորդ տարվա վերջին՝ 0.4%):

2007 թվականին շարունակվել է ապահովագրական շուկան անառողջ ապահովագրական ընկերություններից «մաքրելու» գործընթացը: Դադարեցվել է ևս 6 ապահովագրական ընկերությունների լիցենզիաների գործողությունը: Չնայած դրան, ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են 1.3%-ով, շահույթը՝ 113.3%-ով, պայմանագրերի քանակը՝ 39.5%-ով:

Կապիտալի շուկայում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունը Հայաստանի ֆոնդային բորսայի և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի բաժնետոմսերի 100 տոկոսի ձեռքբերումն էր շվեդական հայտնի բորսայական օպերատոր Օ-էՄ-էՔՍ-ի կողմից (OMX AB publ.): Սրա համար նախադրյալներ էին ստեղծվել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ նոր օրենքով, որի համաձայն՝ Հայաստանի ֆոնդային բորսան և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան վերակազմավորվեցին և դարձան բաց բաժնետիրական ընկերություններ, այսինքն՝ նրանց ոչ առևտրային կարգավիճը փոխվեց առևտրայինի: Բացի այդ, 2007 թվականի ընթացքում 6 ընկերություններ իրականացրին պարտատոմսերի թողարկումներ, իսկ 1 բանկ՝ նաև բաժնետոմսերի առաջնային հրապարակային առաջարկ (IPO): Այսպիսով, 2007 թվականի ընթացքում կապիտալի շուկայի զարգացման ակնկալիքներն ավելի իրատեսական դարձան:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ֆինանսական վերահսկողություն իրականացնող և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումների խնդիրներն ու գործառույթները

Կենտրոնական բանկի կարևորագույն խնդիրներից է ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության, վճարահաշվարկային համակարգի անխափան գործունեության ապահովումը: Ներկայումս ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու և վերահսկողական գործընթացին աջակցող ԿԲ հիմնական ստորաբաժանումներն են՝ Ֆինանսական վերահսկողության, Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների, Վիճակագրության, Իրավաբանական վարչությունները: Հատկանշական է, որ 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի՝ ըստ ինստիտուտների (բանկեր, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք և այլն) վերահսկողությունից անցում կատարեց նոր՝ ֆունկցիոնալ կարգավորման/վերահսկողության մոդելի (կանխարգելիչ և շուկայի արդարության ապահովմանն ու ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կարգավորման/վերահսկողության գործառույթների տարանջատում):

Անմիջական վերահսկողություն իրականացնողը Ֆինանսական վերահսկողության վարչությունն է, որի հիմնական խնդիրներն են.

- ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, արժեթղթերի շուկայում գործող մասնագիտացված անձանց, գրավատների և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում:
- Լուծարվող (ինքնալուծարվող) բանկերի, ապահովագրական ընկերությունների և վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում:
- ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրողների, ներդրումային ծառայություններից օգտվող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն:
- Արժեթղթերի արժանահավատ գնագոյացման և արժեթղթերով գործարքների վճարահաշվարկային, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի հաստատագրման և հաշվառման համակարգերի գործունեության ապահովում՝ համակարգում առկա ռիսկերի բացահայտման, գնահատման և կանխարգելման միջոցով:
- Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և արժեթղթեր թողարկողների գործունեության թափանցիկության ապահովում:

Իրավաբանական և Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչությունների կողմից նախագծվում են օրենսդրական և ենթաօրենսդրական բարեփոխումներ, ըստ որի՝ վերոնշյալ վարչություններն աջակցում են ֆինանսական վերահսկողության գործընթացին՝ մեթոդաբանական, վերլուծական և իրավական առումներով: Վիճակագրության վարչությունը ԿԲ կողմից լիցենզավորված անձանցից հավաքագրում է տեղեկատվություն և ամփոփում:

Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչության հիմնական նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունությանը և զարգացմանը խոչընդոտող համակարգային խնդիրները և սպառնացող ռիսկերը, հետազոտել և առաջարկել դրանց լուծումները:

Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչության հիմնական խնդիրներն են.

- կատարելագործել և/կամ մշակել ու ներդնել ֆինանսական համակարգում ռիսկերի նվազեցման համար արդյունավետ վերահսկողության մեթոդաբանություն,
- հետևել ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման միտումներին, ախտորոշել և գնահատել ֆինանսական կայունությանը սպառնացող առկա և հնարավոր ռիսկերն ու խնդիրները,
- կատարելագործել և/կամ ձևավորել բանկային (նաև այլ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների) ռիսկերի նվազեցման ու դրանց կայուն գործունեության համար համարժեք կարգավորման դաշտ և վերջինիս կիրարկումն ապահովող համակարգված մեթոդաբանական բազա,
- կատարելագործել և/կամ ձևավորել ֆինանսական միջնորդության ընդլայնման, ֆինանսական համակարգի կայուն զարգացման համար նպաստավոր և միջազգային բանկային հանրության (նաև այլ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների) կողմից ընդունված չափանիշներին համապատասխանող գործունեության ինստիտուցիոնալ տարրեր (հարաբերություններ, գործիքներ, մեթոդներ, մոդելներ, մոտեցումներ),
- հետևել համաշխարհային ֆինանսական շուկայում ձևավորվող միտումներին ու զարգացումներին, նոր ֆինանսական տեխնոլոգիաներին և մշակել համապատասխան առաջարկներ ՀՀ ֆինանսական համակարգում դրանց հնարավոր ներդրման վերաբերյալ:

Իրավաբանական վարչության հիմնական խնդիրներն են.

- Կենտրոնական բանկի կողմից ընդունվող նորմատիվ և անհատական իրավական ակտերի համապատասխանության ապահովումը ՀՀ օրենսդրության նորմերին,
- Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների և կնքվող գործարքների համապատասխանության ապահովումը ՀՀ օրենսդրության պահանջներին,
- Կենտրոնական բանկի շահերի պաշտպանությունը ՀՀ կամ այլ պետությունների դատարաններում,
- ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, արժեթղթերի շուկայում գործող մասնագիտացված անձանց, գրավատների և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց լիցենզավորման, դրանց տարածքային ստորաբաժանումների գրանցման (հաշվառման) աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- ՀՀ բանկային, արժութային, ապահովագրական, արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, ինչպես նաև Կենտրոնական բանկի գործունեությանը առնչվող այլ օրենքների և իրավական ակտերի ստեղծմանն ու կատարելագործմանն օժանդակելը, Կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերի համակարգումը և դրանց կանոնակարգման վերաբերյալ առաջարկությունների մշակումը,
- Կենտրոնական բանկի միջազգային կապերի իրավական ապահովումը:

Վիճակագրության վարչության հիմնական խնդիրներն են.

- տնտեսական վիճակագրության հավաքագրում, մշակում և վիճակագրական վերլուծություն (հարթեցում, դասակարգում, կանխատեսում, տարբեր ինդեքսների հաշվարկ և այլն),
- տնտեսական վիճակագրության արժանահավատության ապահովում վարչության իրավասության շրջանակներում,
- հավաքագրված և մշակված վիճակագրության ներկայացում լայն հասարակությանը՝ Կենտրոնական բանկի վիճակագրական և այլ հրապարակումների միջոցով,
- Կենտրոնական բանկի ստորաբաժանումների, կենտրոնական բանկից դուրս այլ կազմակերպությունների միջև (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև արտասահմանյան երկրների) տեղեկատվության փոխանակման ապահովում և կանոնակարգման կազմակերպում,
- որոշակի երևույթների ուսումնասիրման համար վիճակագրական հարցումների իրականացում (անհրաժեշտության դեպքում՝ պարբերաբար),
- վարկատուների կողմից Վարկային ռեգիստրին տրամադրվող տվյալների մուտքագրման, մշակման, օգտագործողներին տրամադրման և ստացվող տեղեկատվության արժանահավատության ապահովում, Վարկային ռեգիստրի զարգացում:

Վերոնշյալ վարչությունները, իրենց առջև դրված հիմնական խնդիրներից ելնելով, իրականացնում են իրենց իսկ կանոնադրությամբ ամրագրված գործառույթները:

Ֆինանսական վերահսկողության, Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների և Իրավաբանական վարչությունների ղեկավարները ԿԲ լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներ են, որը հանդիսանում է ԿԲ նախագահի կամ խորհրդի խորհրդակցական մարմին և ունի իր իրավասությունների սահմաններում որոշում ընդունելու իրավունք:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննարկում է.

- ✓ ֆինանսական կազմակերպությունների ստեղծմանը նախնական հավանություն տալու, գրանցելու և լիցենզավորելու հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների կանոնադրություններում փոփոխությունների գրանցման հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորման և մասնագիտական համապատասխանության հարցերը,
- ✓ հաշվետու թողարկող կազմակերպությունների արժեթղթերի գրանցման ազդագրերի գրանցման հարցերը,
- ✓ Կենտրոնական բանկի կողմից գրանցված կամ լիցենզիա ստացած անձանց, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձանց կողմից թույլ տրված խախտումները, առկայության դեպքում՝ նրանց բացատրությունները և առարկությունները, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարությունը,

- ✓ ֆինանսական կազմակերպություններում իրականացվելիք տեղերում ստուգումների ծրագրերը,
- ✓ Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններից բխող հարցեր:

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Նիստի արձանագրությունը պատրաստվում է նիստի օրվան հաջորդող չորս օրվա ընթացքում: Հանձնաժողովի եզրակացությունը տրվում է բաց քվեարկության արդյունքներով՝ նիստին ներկա գտնվող անդամների ձայների 2/3-ով:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներն են՝ ՀՀ ԿԲ նախագահը (հանձնաժողովի նախագահն է), ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը (հանձնաժողովի նախագահի տեղակալն է), ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության պետը, ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչության պետը, ՀՀ ԿԲ իրավաբանական վարչության պետը: Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը

Կենտրոնական բանկի խորհուրդը ԿԲ կառավարման բարձրագույն մարմինն է: Խորհուրդը ընդունում է նորմատիվ և անհատական որոշումներ, իսկ ԿԲ նախագահը՝ անհատական և ներքին իրավական ակտեր՝ որոշումներ և կարգադրություններ:

Խորհուրդը կազմված է ԿԲ նախագահից, նրա տեղակալից և հինգ անդամներից: Խորհրդի անդամը պատասխանատվություն է կրում ԿԲ խորհրդի կողմից գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն վերապահված պարտականությունների իրականացման համար: ԿԲ խորհրդի իրավասություններից[1] է նաև.

- տալիս է բանկային գործունեության և այլ լիցենզիաներ, ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչում դրանք, սահմանում է բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգը,
- օրենքով սահմանված կարգով բանկին, վարկային կազմակերպությանը կամ ապահովագրական ընկերությանը ճանաչում է անվճարունակ, հարուցում է դրանց սնանկության վարույթ,
- հաստատում է բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը,
- նախնական համաձայնություն է տալիս կամ մերժում է բանկերի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը,
- սահմանում է բանկերում և ապահովագրական ընկերություններում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները,
- հաստատում է բանկերի և ԿԲ կողմից լիցենզավորվող և վերահսկվող այլ անձանց կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունների ձևերը:

ԿԲ խորհուրդը, ըստ անհրաժեշտության, գումարում է նիստեր՝ նախագահի, նրա տեղակալի կամ խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: ԿԲ խորհուրդը իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա են խորհրդի անդամներից առնվազն հինգը, այդ թվում՝ ԿԲ նախագահը կամ նրա տեղակալը:

---

[1] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը:*

Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումը

Բանկերի և վարկային կազմակերպությունների լիցենզավորումը.

Բանկերի և վարկային կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի, «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի հիման վրա:

Բանկային գործունեության լիցենզավորման գործընթացը բաղկացած է երեք փուլից.

Առաջինը լիցենզիա ստանալու նախնական հավանություն ստանալու փուլն է, որի ընթացքում նախաձեռնող անձինք Կենտրոնական բանկ են ներկայացնում միջնորդագիր, ստեղծվող բանկի կանոնադրության նախագիծը, ստեղծվող բանկի գործունեության տնտեսական ծրագիրը՝ առաջիկա երեք տարիների համար, ինչպես նաև ստեղծվող բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ տվյալներ:

Կենտրոնական բանկի խորհուրդը հավանություն է տալիս այնպիսի ֆինանսական կազմակերպությունների հիմնադիրների միջնորդագրին, որոնց.

- ✓ հիմնադիրները չունեն վատ համբավ և քրեորեն հետապնդելի չեն,
- ✓ կապիտալում կատարված ներդրումներն ունեն օրինական ծագում,
- ✓ գործադիր մարմնի և ղեկավարների մասնագիտական պատրաստվածության մակարդակը բավարարում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
- ✓ տնտեսական ծրագիրը իրատեսական է և բավարարում է Կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևին,
- ✓ ներկայացված հիմնադիր փաստաթղթերը արժանահավատ են և չեն պարունակում կեղծ տվյալներ,
- ✓ և այլն:

Երկրորդ փուլը բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցումն է Կենտրոնական բանկի կողմից: Այս փուլում Կենտրոնական բանկ են ներկայացվում գրանցման դիմում, ստեղծվող բանկի կանոնադրությունը, ղեկավարների ցուցակը և նրանց գործունեության մասին տեղեկանք, Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ փաստաթղթեր: Կենտրոնական բանկը որոշում է ընդունում բանկի գրանցման մասին, եթե ներկայացվել են բոլոր պահանջվող փաստաթղթերը և դրանցում արտացոլվել են արժանահավատ տվյալներ, ինչպես նաև բանկի նշանակալից մասնակիցներն իրենց ֆինանսական վիճակով կամ հեղինակությամբ բացասաբար չեն ազդի բանկի ֆինանսական վիճակի վրա կամ չեն խոչընդոտի Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

Երրորդ փուլը լիցենզիա ստանալու փուլն է, որի համար բանկը կարող է դիմել Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Կենտրոնական բանկը գրանցված

բանկին լիցենզիա է շնորհում, եթե բավարարվել են մի շարք պայմաններ, մասնավորապես՝ համալրվել է բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը, բանկային գործունեության համար ստեղծված տեխնիկատնտեսական պայմանները բավարարում են սահմանված չափանիշներին, բանկի ղեկավարների որակավորումը համապատասխանում է սահմանված պահանջներին և այլն:

Վարկային կազմակերպությունների լիցենզավորումն ու գրանցումն իրականացվում է մեկ փուլով: Լիցենզիա ստանալու նպատակով, նոր ստեղծվող վարկային կազմակերպության հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում գրանցման և լիցենզավորման դիմում, վարկային կազմակերպության կանոնադրությունը, ղեկավարների գործունեության մասին տեղեկանք, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած ձևով ու կարգով, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը:

Մեկամսյա ժամկետում Կենտրոնական բանկը լիցենզավորում և գրանցում է վարկային կազմակերպությունը, եթե ամբողջությամբ վճարվել է կանոնադրական կապիտալը, վարկային կազմակերպության գործունեության վայրը համապատասխանում է սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին, ղեկավարների որակավորման մակարդակը բավարարում է սահմանված չափանիշներին, վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցները ստացել են Կենտրոնական բանկի համաձայնությունը:

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց լիցենզավորումը

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց լիցենզավորումը իրականացվում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի և «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 17-րդ բաժնի հիման վրա: Ընդհանուր առմամբ, այս փաստաթղթերով սահմանված է հետևյալ կարգը. մասնագիտացված անձինք իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում գրանցվելուց հետո դիմում են ԿԲ՝ լիցենզավորման համար, լիցենզավորումը կատարվում է մեկ փուլով՝ մեկ ասվա ընթացքում: Լիցենզավորման համար ԿԲ են ներկայացվում հետևյալ երկու հիմնական խումբ փաստաթղթերը.

ա) Մասնագիտացված անձի կապիտալի 5%-ից ավելի բաժնեմաս ունեցող սեփականատերերի, ղեկավարների, խորհրդատուների և մասնագիտացված գործունեություն իրականացնող աշխատակիցների (բրոքերներ, դիլերներ) վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

բ) Մասնագիտացված անձի կապիտալի և ֆինանսական ցուցանիշները, նպատակային ֆինանսավորման և մուտքերի մեծությունները, որոնք, ըստ էության, պետք է հնարավորություն տան ԿԲ-ին գնահատելու մասնագիտացված անձի ներկայիս ֆինանսական վիճակը ԿԲ սահմանած պահանջները բավարարելու տեսանկյունից:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների լիցենզավորման դաշտի բարեփոխումները 2008 թվականին կիրականացվեն նոր կանոնակարգերի հիման վրա, որոնք արդեն իսկ մշակվել են և 2008 թվականին կհաստատվեն ԿԲ խորհրդի կողմից: Նախատեսվելու է «մեկ պատուհանի» սկզբունքով լիցենզավորման և գրանցման կարգ:

Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կազմակերպությունների նշանակվող կամ ընտրվող ղեկավարների թեկնածուների մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից: Որակավորման պահանջները յուրաքանչյուր տարի թարմացվում և արդիականացվում են: Արժեթղթերի շուկայի մասնակիցների համար 2007 թվականին մշակվել է և 2008 թվականին ՀՀ ԿԲ խորհրդի կողմից կհաստատվի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու

ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը:

Ապահովագրական ընկերությունների և միջնորդների լիցենզավորումը

Ապահովագրական ընկերությունների և միջնորդների լիցենզավորումը իրականացվում է 2007 թվականին Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգ 3/01-ի[2] համաձայն: Լիցենզավորման կարգը հնարավորինս համապատասխանեցվել է մյուս ֆինանսական կազմակերպությունների (բանկերի և վարկային կազմակերպությունների) լիցենզավորման կարգերին, ինչպես նաև լիցենզավորման եվրոպական ստանդարտներին:

Մասնավորապես, ապահովագրական ընկերությունների համար սահմանված է «մեկ պատուհանի» սկզբունք, այսինքն՝ ընկերության գրանցումը և լիցենզավորումը իրականացվում է մեկ սուբյեկտի՝ Կենտրոնական բանկի կողմից: Լիցենզավորման և գրանցման գործընթացը իրականացվում է մեկ փուլով և տևում մեկ ամիս:

Լիցենզավորման նոր կարգը գնահատում է լիցենզավորվող անձի սեփականատերերի և ղեկավարների համապատասխանությունը և նրանց մտադրությունները: Ըստ այդմ էլ, լիցենզավորման համար պահանջվում է հիմնականում երեք խումբ տեղեկատվություն.

ա) սեփականատերերի մասին՝ նրանց կողմից ընկերության բնականոն գործունեությունը չխաթարելու տեսանկյունից օրենսդրության պահանջներին (պատշաճ որակավորում, հեղինակություն և վարքագիծ) համապատասխանության ստուգման նպատակով և

բ) ղեկավարների մասին՝ նրանց կողմից ընկերությունը պատշաճ կառավարելու տեսանկյունից օրենսդրությամբ սահմանված պահանջներին (պատշաճ որակավորում, հեղինակություն և վարքագիծ) համապատասխանության ստուգման նպատակով,

գ) գործարար ծրագիր՝ սեփականատերերի մտադրությունների իրատեսականությունը՝ բնականոն գործունեության հնարավորությունը գնահատելու նպատակով:

ԿԲ կողմից այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումը

ԿԲ կողմից իրականացվում է նաև այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորում, որոնց գործընթացների մանրամասները զետեղված են.

- ✓ «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգում»,
- ✓ «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում,

---

[2] *«Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ծևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը.*

- ✓ «Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ում,
- ✓ «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ում,
- ✓ «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ում,
- ✓ «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ում,
- ✓ «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ում և
- ✓ «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ում:

Ֆինանսական կազմակերպությունների վերահսկողությունը

Կենտրոնական բանկի վերահսկողական մարմինը իրականացնում է ռիսկայնության վերահսկողություն՝ նպատակ ունենալով բացահայտել ֆինանսական կազմակերպություններում անթույլատրելի մակարդակում գործող ռիսկերը և վերջիններիս կանխման միջոցներ ձեռնարկել:

Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունների փաստաթղթային (այսուհետ՝ հեռակա) վերահսկողությունը և վերստուգվող անձանց մոտ (այսուհետ՝ տեղերում) ստուգումներն իրականացվում են Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից (առանձին դեպքերում՝ նաև ԿԲ այլ ստորաբաժանումների աջակցությամբ):

Կենտրոնական բանկը որպես սկզբունք ամրագրել է Բազել-2 համաձայնագրին անցման գաղափարը, և արդեն 2008 թվականի հունվարի 1-ից ներդրվելու է բանկային համակարգի գործունեությունը կարգավորող նոր նորմատիվային դաշտ, որն, ըստ էության, հիմնված է նշված համաձայնագրի սկզբունքների ու տրամաբանության վրա: Վերջինս հնարավորություն կտա բանկերին առավել ճկուն և արդյունավետ կառավարելու իրենց ռիսկերը:

Հեռակա վերահսկողությունը իրականացվում է ֆինանսական կազակերպություններից ստացված տեղեկատվության հիման վրա: Հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկերի ֆինանսական վիճակի շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է՝ բանկերի հնարավոր կորուստները կանխատեսելու և/կամ նվազեցնելու նպատակով: Ընդ որում՝ յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպության հեռակա վերահսկողությունն իրականացվում է կոնկրետ վերահսկողների կողմից, որոնք մասնագիտացված են տվյալ կազմակերպության վերահսկողության գործընթացում: Վերջինս հնարավորություն է տալիս վերահսկողին ավելի ամբողջական պատկերացնելու տվյալ ֆինանսական կազմակերպության գործունեությունը, դրա առանձնահատկությունները և ռիսկերը:

Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Հեռակա վերահսկողության իրականացման» ձեռնարկի կանոններին համապատասխան, որով սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթաց-

ները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Հեռակա վերահսկողության իրականացման համար, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև ըստ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի պահանջների, վերահսկվող մարմինները Կենտրոնական բանկի վիճակագրության վարչություն են ներկայացնում հաշվետվական ձևեր՝ սահմանված բովանդակությամբ և ներկայացման ժամկետներով, որոնք, համապատասխան ստուգումներից հետո, տրամադրվում են Ֆինանսական վերահսկողության և Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչություններին: Նշված վարչությունները վերահսկողական և վերլուծական աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտվում են նաև Վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունից, նախորդ ժամանակաշրջաններում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններից, նախորդ և ընթացիկ ժամանակաշրջաններում բանկից ստացված գրություններից, ծանուցումներից, հեռանկարային զարգացման ծրագրերից, հրապարակված ֆինանսական հաշվետվություններից և դրանց կցված աուդիտորական եզրակացություններից, վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգումների արդյունքներից և այլ միջոցներով ստացված տեղեկատվությունից:

Բանկերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում յուրաքանչյուրի համար կազմվում են ներքին ամփոփ հաշվետվություններ, որոնցում բացահայտվում են բանկի գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, ներկայացվում են գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, իրականացվում է բանկերի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի գնահատում, նշվում են բանկի առջև ծառացած հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները: Հեռակա վերահսկողության ընթացքում բացահայտվում են ոչ միայն բանկի ֆինանսական ցուցանիշների շարժերը, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային ակտերով ամրագրված սահմանաչափերից շեղումները, այլ նաև ուսումնասիրվում են դրանց պատճառները, գնահատվում են դրանց փոփոխությունները և մշակվում համապատասխան միջոցառումների պլան՝ բացահայտված ռիսկերը կառավարելու նպատակով:

Ամսական հեռակա վերահսկողության հիմնական նպատակն ամսվա ընթացքում բանկի գործունեության և ընթացիկ իրական ֆինանսական վիճակի գնահատումն ու վերլուծությունն է: Վերջինս, մասնավորապես, ենթադրում է ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխան գործելու հնարավորության, բանկի ռիսկերի վերլուծության միջոցով բանկի ցուցանիշների ամփոփ գանահատականի (ՔԱՄԵԼՍ) գնահատում և վերլուծություն: Ամսական վերահսկողության ընթացքում տեղեկատվության վերլուծությունը պետք է ունենա հստակ կարգավորման ուղղվածություն այն իմաստով, որ վերահսկողի կողմից պետք է մշակվեն և առաջարկվեն բացահայտված էական խնդիրների վերացման, ազդեցության թուլացման և ապագայում դրանց ի հայտ գալը կանխելու ուղիներ: Նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների կտրուկ շեղումների դեպքում վերահսկողի կողմից կատարվում է մանրակրկիտ վերլուծություն՝ շեղումների պատճառները բացահայտելու համար[3]:

Եռամսյակային հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատումն ու վերլուծությունն է: Եռամսյակային հեռակա վերահսկողությունը

---

[3] ՔԱՄԵԼՍ-ի գնահատականը տատանվում է 1-5 միավորանոց սանդղակում, ընդ որում՝ գնահատականի՝ 3 միավորից պակաս արդյունքը ՀՀ կենտրոնական բանկի համար կարող է բանկի տարածքային ստորաբաժանումների բացման միջնորդագիրը մերժելու, առավել խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ կամ պատժամիջոցներ սահմանելու, ինչպես նաև որոշ գործարքների իրականացման սահմանափակման հիմք հանդիսանալ: Բանկի ամփոփ գնահատականի՝ 2 միավոր և ցածր լինելու դեպքում բանկը համարվում է անվճարունակ:

պետք է ուղղված լինի բանկի՝ շարունակական գործելու հնարավորության գնահատմանը, որը ենթադրում է բանկի գործունեության, ֆինանսական վիճակի փոփոխության, բանկին ներհատուկ ռիսկերի և ֆինանսական կայունության գնահատում ու վերլուծություն: Եռամսյակային հեռակա վերահսկողության ընթացքում վերահսկողը պետք է ձեռնամուխ լինի ռիսկերի, մասնավորապես՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գնային, գործառնական և բարի համբավի ռիսկերի գնահատմանը և վերլուծությանը:

Հեռակա վերահսկողության ընթացքում վերլուծվում են բանկերի վարկային, արտարժութային, տոկոսադրույքի, գնային, իրացվելիության ռիսկերը, որի համար կիրառվում են վարկային ռիսկի միգրացիայի մատրիցի, VAR, դյուրացիայի, GAP մեթոդաբանությունները և ստրես - տեստերը:

Վերլուծությունների ընթացքում բացահայտված ռիսկերի պարագայում վերահսկողը բանկի վճարունակության, ֆինանսական վիճակի կայունության, երկարաժամկետ գործունության ապահովման նպատակով, անհրաժեշտության դեպքում, առաջարկում է վերահսկողական միջոցառումների ցանկ: Հեռակա վերահսկողության արդյունքում բացահայտված խնդիրները կարող են հիմք հանդիսանալ նաև տեղերում ստուգումների իրականացման համար կամ կարող են ներառվել համալիր ստուգման ծրագրերում:

Վարկային կազմակերպությունների, գրավատների, արտարժույթի փոխանակման կետերի հեռակա վերահսկողությունն իրականացվում է բանկերի հեռակա վերահսկողության տրամաբանությամբ: Նշված կազմակերպությունների հեռակա վերահսկողության իրականացման համար հիմք են հանդիսանում այս կազմակերպությունների կողմից ԿԲ ներկայացված հաշվետվությունները:

Ապահովագրական գործունեություն իրականացնող ընկերությունների (ապահովագրական ընկերություններ և ապահովագրական բրոքերային ընկերություններ) հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի» համաձայն:

ԿԲ ներկայացվող հաշվետվությունների հեռակա վերահսկողության և վերլուծությունների գործընթացը նույնն է, ինչ որ բանկերում: Սակայն, ապահովագրական ընկերությունների վերահսկողության ընթացքում վերլուծության շրջանակները և գործիքները դեռևս խիստ սահմանափակ են:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների (շուկայի մասնագիտացված անձինք, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան և Հայաստանի ֆոնդային բորսան) հեռակա և տեղերում վերահսկողությունը իրականացվում է «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, ինքնակարգավորվող կազմակերպությունների և թողարկողների ստուգումների և հեռակա վերահսկողության ընթացակարգերի» ուղեցույցների համաձայն: Հեռակա ստուգումների համար հիմք են ընդունվում արժեթղթերի շուկայի մասնակիցների կողմից ներկայացված հաշվետվությունները, ընդ որում՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման ժամկետները սահմանված են «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքով»: Արժեթղթերի շուկայի մասնակիցները ներկայացնում են ընթացիկ և ֆինանսական հաշվետվություններ:

Ընդհանուր առմամբ, հեռակա վերահսկողության ժամանակ իրականացվում է ֆինանսական կազմակերպությունների գործունեության շարունակական վերլուծություն՝ ֆինանսական վիճակի, ռիսկերի մակարդակի գնահատման ու կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգման նպատակներով:

Շուկայական վարվելակերպի կանոնների պահպանման վերահսկողության նպատակով հատուկ ուշադրություն է դարձվում բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների կողմից հրապարակվող տեղեկատվության վրա: Մասնավորապես, պարբերաբար ուսումնասիրվում են վերոնշյալ կազմակերպությունների ինտերնետային կայքերը, թերթերում հրապարկվող հաշվետվությունները:

Հեռակա վերահսկողության ընթացքում հայտնաբերված ռիսկերի առավել համապարփակ ուսումնասիրության, դրանց առաջացման պատճառների բացահայտման նպատակով, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահի կարգադրությամբ հաստատված՝ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ստուգումների ժամանակացույցի հիման վրա, կազմակերպություններում իրականացվում են տեղերում վերստուգումներ:

Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում տեղերում վերստուգումներ է իրականացնում համաձայն «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկի»: Բանկի տարբեր ոլորտների վերահսկողությունն իրականացնելիս վերահսկողները գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի կիրառելիությունը: Գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը և պարզում՝ արդյոք բանկի աշխատակիցները գործո՞ւմ են բանկի ղեկավարության կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բանկի կառավարման համակարգի վերլուծությանը և դրա հետ կապված ռիսկերի բացահայտմանը, մասնավորապես՝ բանկի խորհրդի և գործադիր ղեկավարության միջև իրավունքների և պատասխանատվության սահմանազատմանը:

Էապես կարևորվում է բանկի գործունեության այն բնագավառների բացահայտումը, որոնք առավել խոցելի են և զգայուն ռիսկերի նկատմամբ: Հենց այդ բնագավառները պետք է մանրակրկիտ վերստուգվեն:

Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- Ակտիվների որակ

  Բացահայտվում է բանկի ակտիվների կառուցվածքը՝ շեշտը դնելով վարկային պորտֆելի որակի ու կառավարման մակարդակի գնահատման վրա: Վարկավորման գործունեությունը պետք է իրականացվի բանկի կողմից հաստատված քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան, ընդ որում՝ դրանցից բացառությունները պետք է պատշաճ հիմնավորվեն և փաստաթղթավորվեն:
- Պարտավորություններ և կապիտալ

  Բացահայտվում են բանկի պարտավորությունների, մասնավորապես՝ ավանդային պորտֆելի կառուցվածքը, կենտրոնացումները, միջոցների ներգրավման գործընթացի համապատասխանությունը բանկի կողմից սահմանված քաղաքականություններին և ընթացակարգերին: Գնահատվում է բանկի կապիտալի մակարդակի համապատասխանությունը իր ֆինանսական վիճակին, ռիսկերին և գործունեության ծավալներին:
- Եկամտաբերություն

  Եկամուտների և ծախսերի վերլուծությունը հնարավորություն է տալիս վերահսկողին եզրակացություն կատարելու բանկի ֆինանսական վիճակի և իրականացված գործառնությունների արդյունքների վերաբերյալ, պարզելու բանկի եկամուտների և ծախսերի հաշիվներում արտացոլված տվյալների արժանահավատությունը:
- Իրացվելիություն

  Ստուգվում է բանկում իրացվելիության արտահերթ պահանջները բավարարելու ծրագրի առկայությունը, որի անհրաժեշտությունը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացումների, գործառնություններ ընդլայնելու անսպասելի հնարավորության և այլ դեպքերում:

- Կառավարում

  Գնահատվում են բանկի կորպորատիվ կառավարման որակը, բանկի գործադիր ղեկավարների պարտականություններն ու պատասխանատվությունը, ռիսկերի կառավարման համակարգը: Բացահայտվում է, թե որքանով է բանկի կորպորատիվ կառավարման մեխանիզմն աշխատում հօգուտ բաժնետերերի և այլ շահագրգիռ անձանց շահերի: Առաջին հերթին գնահատվում են կառավարման կառուցվածքը և կառավարման գործընթացը: Ռիսկերի կառավարման համակարգի գնահատման ժամանակ բացահայտվում է, թե ինչ ռազմավարություն է կիրառում բանկը ռիսկերի ճանաչման, չափման, գնահատման, մոնիտորինգի և կառավարման նկատմամբ:

- Այլ ոլորտներ

  Շուկայական ռիսկերի կառավարման մակարդակ, բանկի հետ կապված անձինք, համակարգչային և տեղեկատվական համակարգեր, իրավական խնդիրներ, արտահաշվեկշռային գործառնություններ, ներքին աուդիտ և ներքին հսկողություն, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում, վճարային համակարգերի ռիսկ և միջոցների էլեկտրոնային փոխանցում:

- Բանկի ընդհանուր գնահատումը

  Բանկի ընդհանուր գնահատման արդյունքում վերահսկողը պատկերացում է կազմում բանկի ներկա ֆինանսական վիճակի և հեռանկարների վերաբերյալ՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի առկայությունը և որակը, ՀՀ օրենքների և/կամ այլ իրավական նորմերի խախտումները, բանկի ղեկավարության որակը և այլն:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է բանկի ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բանկում բացահայտված խնդիրները, ռիսկերը, բանկի ֆինանսական վիճակը, հիմնական տնտեսական նորմատիվները, Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ), ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Ապահովագրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների՝ տեղերում ստուգումներն իրականացվում են համաձայն «ՀՀ տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ (տեղերում) ստուգումների իրականացման ձեռնարկի»: Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝ բուն ապահովագրություն (անդերրայթինգ), ակտիվների որակ, կապիտալ և եկամտաբերություն, կառավարում, վերաապահովագրություն, ապահովագրական ապրանքի իրացում, այլ ոլորտներ (ապահովադիրների շահերի պաշտպանություն, շուկայական վարվելակերպի կանոնների պահպանում, համակարգչային և տեղեկատվական համակարգեր, իրավական խնդիրներ, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում): Ապահովագրական ընկերությունների տարբեր ոլորտների վերահսկողությունն իրականացնելիս վերահսկողները գնահատում են ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի կիրառելիությունը: Միաժամանակ գնահատում են ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգը:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների՝ տեղերում վերահսկողությունը իրականացվում է համաձայն «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց ստուգումների և հեռակա

վերահսկողության ընթացակարգերի ուղեցույցի»: Մասնագիտացված անձանց գործունեության վերահսկողությունը իրականացվում է հետևյալ ուղղություններով՝ մասնագիտացված անձի՝ տվյալ լիցենզիայի շրջանակներում իրականացրած մասնագիտացված գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին մասնագիտացված անձի գործունեության համապատասխանության ստուգում, մասնագիտացված անձի կողմից ներկայացված հաշվետվություններում և այլ տեղեկություններում (անկախ կրիչի ձևից) արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում, մասնագիտացված անձի ֆինանսական վիճակի վերլուծություն, Կենտրոնական բանկի կողմից մասնագիտացված անձին տրված հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքների ստուգում, մասնագիտացված անձի այլ գործունեությունը (բացառությամբ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության) կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին մասնագիտացված անձի գործունեության համապատասխանության՝ տեղերում ստուգում:

Գրավատներում, փոխանակման կետերում վերստուգումներն իրականացվում են օրենսդրության պահանջներին այս կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ստուգումների ծրագիրը հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը: Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից պատրաստվում է ստուգման հաշվետվություն և ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենտրոնական բանկը 2007 թվականին նախաձեռնեց ՀՀ ֆինանսական համակարգի գործունեությանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական մի շարք բարեփոխումներ:

2007 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթներ.

1. Բանկային գործունեությունը կարգավորող մի շարք օրենքների փոփոխություններն են՝
   1.1. Բանկի հանդեպ հաճախորդների խոշոր պարտավորության չափը սահմանվել է 20 միլիոն ՀՀ դրամ: Տվյալ դրույթի նպատակն է սահմանել խելամիտ սահմանաչափ՝ անպարտաճանաչ խոշոր վարկառուների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման համար: Նախկինում տվյալ սահմանաչափը ածանցվում էր բանկի կապիտալի մեծությունից և բանկային կապիտալի աճին զուգահեռ, աճում էր նաև սահմանաչափը: Արդյունքում՝ խոշոր վարկառուների լայն անվանացանկ դուրս էր մնում հրապարակվող տեղեկատվական դաշտից:
   1.2. Բանկային գաղտնիք չի դիտարկվում ՀՀ կենտրոնական բանկի կամ խախտում թույլ տված բանկի կողմից որոշումների հրապարակումը բանկի և (կամ) բանկի ղեկավարի կողմից թույլ տրված խախտումների և կիրառված պատժամիջոցների մասին: Պատժամիջոցների և խախտումների հրապարակումը ապահովում է ԿԲ կողմից կիրառվող պատժամիջոցների անաչառության նկատմամբ շուկայի մասնակիցների վերահսկողությունը, մյուս կողմից՝ ստեղծվում է նախադեպի ինստիտուտը:
   1.3. Կասկածյալի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները դատական կարգով հասանելի են դարձվել քրեական հետապնդում իրականացնող մարմիններին՝ քրեական դատավարության ավելի վաղ փուլում (օրինակ՝ հետաքննության փուլում):
   1.4. Բանկը ապահովում է քրեական հետապնդում իրականացնող մարմիններին հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու փաստի վերաբերյալ գաղտնիությունը: Նշված փոփոխությունը պայմանավորված է միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներով (ՖԱՏՖ):

2. Ընդունվել է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը: Այն մշակվել է Եվրոմիության օրենսդրության հիման վրա և էապես տարբերվում է «Ապահովագրության մասին» նախկին օրենքից, մասնավորապես՝

- Սահմանվել են ապահովագրական ընկերությունների կորպորատիվ կառավարման նկատմամբ պահանջներ, ռիսկերի կառավարման նկատմամբ պահանջներ, նորմատիվները համապատասխանեցվել են եվրոպական դիրեկտիվներին, սահմանվել են թափանցիկության պահանջներ, տարանջատվել են ապահովագրական ընկերությունների կապիտալում մասնակցության աստիճանները:
- Տարանջատվել են ապահովագրության դասերը և ենթադասերը, որը նպաստում է ԿԲ կողմից թափանցիկության, լիցենզավորման, նորմատիվային դաշտի սահմանման և ընկերությունների գործունեության նկատմամբ այլ պահանջների և վերահսկողության գործընթացների ճկուն իրականացմանը:

- Լիցենզավորման բովանդակությունը (լիցենզիայով թույլատրվող գործունեության շրջանակը) համապատասխանեցվել է ԵՄ պահանջներին: Նոր օրենքով լիցենզիա տրամադրվում են ըստ ապահովագրության առանձին դասերի: Չի թույլատրվում միաժամանակ իրականացնել կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն:
- Նոր օրենսդրությամբ կանոնակարգվում է շուկայից ելքի գործընթացը, մասնավորապես սահմանվում են անվճարունակության, սնանկության և լուծարման առանձին կարգավիճակներ և պարտավորությունների մարման առաջնահերթություն:
- Սահմանվել են օտարերկրյա ապահովագրական ընկերությունների կողմից մասնաճյուղերի միջոցով ՀՀ-ում ուղղակի կամ անուղղակի ձևով գործունեություն իրականացնելու, ինչպես նաև ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից արտասահմանում ուղղակի կամ անուղղակի ձևով գործելու կարգավորման մեխանիզմներ:
- Ապահովագրական միջնորդության կարգավորումը համապատասխանեցվել է ԵՄ դիրեկտիվներին:

3. 2007 թվականի հոկտեմբերի 11-ին ընդունվել է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը, որը նախատեսում է արժեթղթերի շուկայի առավել ճկուն և արդյունավետ կարգավորում: Ի տարբերություն «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի, նոր օրենքը հիմնված է եվրոպական մոդելի վրա և մշակվել է ԵՄ օրենսդրության պահանջներին համապատասխան: Դրա համաձայն՝ կարգավորման դաշտ են մտնում այն ընկերությունները, որոնք իրենց նախաձեռնությամբ դուրս են եկել արժեթղթերի հրապարակային շուկա: Այսինքն՝ այն ընկերությունները, որոնք հրապարակային առաջարկի միջոցով հանրությունից միջոցներ չեն ներգրավում, կամ որոնց արժեթղթերը հրապարակայնորեն չեն շրջանառվում, դուրս են կարգավորման դաշտից: Նոր օրենքը խթանում է նաև ներդրումային բանկային գործի զարգացումը՝ հնարավորություն ընձեռելով առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին արժեթղթերի շուկայում մատուցելու ներդրումային ծառայություններ՝ առանց լրացուցիչ լիցենզիայի: Բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցումը հնարավորություն է տալիս ՀՀ տարածքում գործող բանկերին որակելու որպես ունիվերսալ բանկեր: Եթե, «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, արժեթղթերի շուկայի ենթակառուցվածքային ինստիտուտները՝ ֆոնդային բորսան և Կենտրոնական դեպոզիտարիան, հանդիսանում էին ոչ առևտրային կազմակերպություններ, ապա նոր օրենքի համաձայն՝ դրանք կարող են լինել միայն առևտրային կազմակերպությունների տեսքով: Դա թույլ կտա վերջիններիս ներգրավել նոր կապիտալ, նոր մասնակիցներ և դառնալ մրցակցային բիզնես: Բացի վերը նշված հիմնական փոփոխություններից, նոր օրենքի համաձայն՝ արժեթղթերի շուկայի կարգավորումն ու վերահսկողությունը կիրականացվեն ֆինանսական շուկայի և ինստիտուտների կարգավորման ու վերահսկողության միասնական քաղաքականության ներքո:

4. Օրենսդրորեն սահմանվել է, որ ՀՀ կենտրոնական բանկը ոչ թե սահմանում, այլ հրապարակում է արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Այս դրույթը լիարժեքորեն ամրապնդում է այն փաստը, որ փոխարժեքը ձեևավորվում է շուկայում, այլ ոչ թե սահմանվում պետական մարմինների կողմից:

2007 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել և ՀՀ Կառավարություն են ներկայացվել հետևյալ օրենքների նախագծերը՝

1. ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Բանկերի, վարկային

կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Փոփոխությունը պայմանավորված է գործող օրենսդրության հստակեցմամբ, ինչպես նաև օրենքի՝ ԵՄ օրենսդրության որոշ պահանջներին համապատասխանեցմամբ: Նախագծով սահմանվում է, որ եթե հաշիվների դրամական մնացորդը պակաս է 1000 հայկական դրամից, ապա դրանք չեն երաշխավորվում, նախատեսվում է բանկերի կողմից երաշխավորված ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգ ստեղծելու պարտականությունը, հստակեցվում են ավանդների հատուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հոդվածները, Հիմնադրամի համար սահմանվում է պարտավորություն՝ ավանդատուների հաստատված պահանջներով հատուցումները վճարել պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, նախատեսվում է Հիմնադրամի ծախսերի վերադասակարգում: Նախագծում ներառվել է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում ներդրված ավանդների երաշխավորումը:

2. ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և վարկային կազմակերպությունների կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նշված նախագծի մշակումը պայմանավորված է.

2.1. Վարկային կազմակերպությունների կողմից գործունեության տեսակի փոփոխման՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալու, ինչպես նաև վարկային կազմակերպությունների տիպերի փոփոխման հնարավորության ընձեռմամբ, դրա իրագործման առանձնահատկությունների սահմանմամբ և անհրաժեշտ մեխանիզմների ներդրմամբ:

2.2. Վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց միջև պարտատոմսեր տեղաբաշխելու միջոցով փոխառությունների ներգրավման հնարավորության նախատեսմամբ: Նշված փոփոխությունը հնարավորություն կտա վարկային կազմակերպություններին միջոցներ ներգրավելու հասարակության լայն զանգվածներից, հետևաբար նաև՝ էապես մեծացնելու իրենց կողմից տրամադրվող վարկերի և փոխառությունների ծավալները: Նշված փոփոխությունը կհանգեցնի նաև վարկային կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների բազմազանեցմանը: Բացի այդ, ֆիզիկական անձանց տեղաբաշխվող պարտատոմսերի ծավալների աճը կակտիվացնի ՀՀ արժեթղթերի շուկան: Միևնույն ժամանակ, նախատեսվում է, որ ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավող վարկային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությունը լինելու է ավելի խիստ:

3. ՀՀ կենտրոնական բանկը 2007 թվականի վերջին ՀՀ Կառավարություն է ներկայացրել նաև ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված նախագծերի փաթեթ: Այդ փաթեթում ներառվել են «Բանկային ավանդների ներգրավման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին», «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

3.1. «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակն է ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունը, բանկերի կողմից քաղաքացիների դրամական միջոցների ներգրավման միասնական կանոնների սահմանումը: Օրենքը սահմանում է բանկային ավանդների և հաշիվների գովազդին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնց սպառողները կարող են ծանոթանալ մինչև բանկային ավանդի կամ բանկային հաշվի պայմանագրի կնքումը: Այդ տեղեկությունները վերաբերում են տոկոսների չա-

փին, դրանց կապիտալացման և վճարման հաճախականությանը, հաշվի նվազագույն մնացորդին, տարբեր սակագներին և տուգանքներին: Օրենքը նաև կարգավորում է բանկի և ավանդատուի հաղորդակցման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ հաշվի քաղվածքների տրամադրման կարգը և պարբերականությունը:

3.2. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունն է, կրեդիտավորման միասնական կանոնների սահմանումը, ֆինանսական միջնորդության ավելացումը: Օրենքը սահմանում է այն տեղեկությունների ցանկը, որոնց կարող են ծանոթանալ սպառողները կրեդիտավորման պայմանագրեր կնքելիս: Սպառողները պետք է տեղեկացվեն կրեդիտավորման հետ կապված բոլոր ծախսերի, այդ թվում՝ տոկոսների, սպասարկման վճարների և բոլոր այլ պարտադիր վճարների մասին: Այս օրենքը հնարավորություն է տալիս սպառողին ծանոթանալու տարեկան փաստացի տոկոսադրույքին: Տարեկան փաստացի տոկոսադրույքն արտահայտում է կրեդիտավորման հետ կապված բոլոր տոկոսների և վճարների հանրագումարը և հաշվարկվում է համապատասխան բանաձևի օգնությամբ: Տարեկան փաստացի տոկոսադրույքի մասին նշումը կնվազեցնի սպառողներին մոլորեցնելու դեպքերը, սպառողներին հնարավորություն կտա կատարելու կշռադատված և հիմնավորված ընտրություն և կնպաստի մրցակցային դաշտի բարելավմանը: «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքը սպառողների համար սահմանում է լրացուցիչ իրավունքներ, ինչպիսին է, օրինակ, կրեդիտը վաղաժամկետ մարելու իրավունքը: Այս օրենքը կարևորվում է նաև նրանով, որ սպառողը, օրենքով սահմանված ժամկետում, կարող է առանց որևէ պատճառաբանության, միակողմանիորեն լուծել կրեդիտավորման պայմանագիրը: Օրենքն այդպիսով սպառողին հնարավորություն է տալիս կրեդիտ վերցնելու նպատակահարմարութան վերաբերյալ որոշում կայացնելու ոչ միայն պայմանագրի կնքումից առաջ, այլ նաև դրանից հետո: Օրենքը սահմանում է նաև կրեդիտների գովազդին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ տարեկան փաստացի տոկոսադրույքի մասին պարտադիր նշումը: Ըստ օրենքի՝ ապրանքներ վաճառող կամ ծառայություններ մատուցող անձինք կարող են ստանալ սպառողական կրեդիտավորման լիցենզիա և սպառողներին ինքնուրույն տրամադրել կրեդիտներ՝ դրանով իսկ նպաստելով ֆինանսական ոլորտում մրցակցության ավելացմանը:

3.3. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունն է, նրանց պահանջների արագ, արդյունավետ և անվճար քննությունը: Ֆինանսական համակարգի հաշտարարը քննում է ֆինանսական կազմակերպությունների ֆիզիկական-անձ հաճախորդների կողմից այդ կազմակերպությունների դեմ ներկայացված բողոքները, ընդ որում՝ խոսքը մինչև 10 մլն դրամ մեծությամբ բողոքների մասին է: Հաշտարարի կողմից բողոքների քննության կապակցությամբ հաճախորդից որևէ վճար չի գանձվում: Ֆինանսական համակարգի հաշտարարը վեճը լուծում է հնարավորինս կարճ ժամկետում, որն ամեն դեպքում չի կարող գերազանցել 2 ամիսը: Հաշտարարի որոշումը կողմերի համար պարտադիր է դառնում միայն այն դեպքում, երբ հաճախորդը համաձայնվում է այդ որոշմանը: Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ֆինանսավորումն իրականացվում է բոլոր ֆինանսական կազմակերպությունների կողմից՝ օրենքով սահմանված վճարումներ կատարելու միջոցով:

4. 2007 թվականի դեկտեմբերին ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ Կառավարությանն է ներկայացրել հիփոթեքային արժեթղթերի թողարկման և ակտիվների արժեթղթավորման գործընթացները կարգավորող օրենքների

նախագծերի փաթեթ, մասնավորապես՝ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքը և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքը: Դրանք թույլ կտան բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին լուծել «երկար» փողերի խնդիրը և կնպաստեն հիփոթեքային վարկերի ժամկետների երկարացմանն ու արժեքի նվազմանը: Բացի այդ, արժեթղթավորման օրենսդրության ձևավորումը կխթանի նաև արժեթղթերի շուկայի զարգացումը, մասնավորապես արժեթղթերի շուկայում ստեղծելով նոր գործիքներ: Դրանք կարող են հատկապես գրավիչ լինել կենսաթոշակային հիմնադրամների համար, որոնց ստեղծումը նախատեսվում է կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում:

4.1. «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ ապահովված հիփոթեքային պարտատոմսերը թողարկվում են բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից՝ հիփոթեքային վարկերի պորտֆելի հիման վրա: Այսինքն՝ բանկը կամ վարկային կազմակերպությունը իր հիփոթեքային վարկերը օգտագործում է որպես ապահովություն (գրավ)՝ հիփոթեքային պարտատոմսերի թողարկման համար:

Նախագիծը սահմանում է հստակ չափանիշներ հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող ակտիվների համար:

Միևնույն ժամանակ, օրենքի նախագծով նախատեսվում են հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերի շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ: Մասնավորապես, հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցները պետք է ավելին լինեն, քան այդ արժեթղթերի գծով պարտավորությունները:

Նախագծով նախատեսվում է նաև ստեղծել հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների ռեգիստր, որտեղ հաշվառված ակտիվները թողարկողի սնանկության կամ անվճարունակության դեպքում առանձնացվում են թողարկողի այլ ակտիվներից և չեն ներառվում սնանկության վարույթում: Սնանկության դեպքում նշանակվում է հիփոթեքային կառավարիչ, որի հիմնական գործառույթն է՝ կառավարել ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող ակտիվները և բավարարել ապահովված հիփոթեքային պարտատոմսերում ներդրողների պահանջները:

4.2. «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ ակտիվներով ապահովված արժեթղթեր թողարկողը առանձին միջնորդ է (ոչ առևտրային հիմնադրամ), որը զբաղվում է միայն ակտիվների արժեթղթավորմամբ: Այն ֆինանսական կազմակերպություններից ձեռք է բերում վարկեր, դրամական հոսք ապահովող այլ ակտիվներ և դրանց հիման վրա թողարկում է ապահովված արժեթղթեր: Այս դեպքում բանկը կամ այլ ֆինանսական կազմակերպությունը վաճառում է իր վարկերը և այլ ֆինանսական ակտիվները Արժեթղթավորման հիմնադրամին և վաճառքից ստացված միջոցները օգտագործում է նոր վարկերի տրամադրման և նոր ֆինանսական ակտիվների ձեռքբերման համար:

Արժեթղթավորման հիմնադրամի ընթացիկ գործունեությունը կառավարվում է հիմնադրամի կառավարչի կողմից, որն առևտրային կազմակերպություն է:

5. ՀՀ կենտրոնական բանկը 2007 թվականի դեկտեմբերի վերջին ՀՀ Կառավարություն է ներկայացրել «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր:

Ըստ նախագծի՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրվում է նոր ինստիտուտ, որը նպատակ ունի՝

ա. Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում բարձրացնել ֆինանսական միջնորդային և վարկային գործունեության ծավալները.

բ. լրացուցիչ մեխանիզմներ ստեղծել ֆինանսական շուկայում սպառողների շահերի պաշտպանության համար.
գ. ստեղծել ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկավորման ռիսկերի գնահատման մեխանիզմներ և պաշտպանել վարկատուների շահերը.
դ. ներդնել և զարգացնել սկորինգային համակարգը Հայաստանի Հանրապետությունում.
ե. հնարավորություն ընձեռել սպառողներին վարկային պատմության ստեղծման միջոցով հասնելու մեծ ծավալների վարկերի ձեռքբերմանը:

Նախագիծը մշակվել է միջազգային լավագույն փորձի հիման վրա և փորձաքննության է ենթարկվել USAID-ի օտարերկրյա փորձագետների կողմից:

Սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից՝ նախագիծը սահմանում է՝

ա. վարկային բյուրոյի կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունը սպառողներին, մասնավորապես՝ վարկային բյուրոյի կողմից վարկային զեկույցի անվճար տրամադրում անձին՝ տարին մեկ անգամ, ինչպես նաև նրա համար անբարենպաստ հետևանքներ առաջացնող վարկային զեկույցների անվճար տրամադրում (օրինակ՝ բանկը մերժել է վարկ տրամադրել, քանի որ անձը ունի վատ վարկային պատմություն).
բ. վարկային տեղեկատվության ճշգրտման, վիճարկման, փոփոխման ընթացակարգերի մանրամասն կարգավորում, որով անձը իրավունք է ստանում տեղեկանալու իր վերաբերյալ հավաքված ամբողջ ինֆորմացիային, սխալներ հայտնաբերելու դեպքում՝ ուղղելու սխալ տեղեկատվությունը.
գ. վարկային բյուրոյի թափանցիկ գործունեություն (վարկային բյուրոյի ինտերնետային էջի պարտադիր առկայություն, որտեղ պետք է հրապարակվի ու թարմացվի մատուցվող ծառայությունների, վեճերի լուծման ընթացակարգի, վարկային զեկույցների ստացման վերաբերյալ տեղեկատվությունը).
դ. վարկային բյուրոյի գործունեության լիցենզավորում և վերահսկողություն՝ կոնկրետ պահանջներ ներկայացնելով վարկային բյուրոյի գործունեությանը և սպառողների շահերի պաշտպանության նպատակով այդ գործունեության վերահսկում:

2007 թվականին մի շարք փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատվող իրավական ակտերում:

Բանկային համակարգի կարգավորման դաշտում 2007 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից մշակված և փոփոխված հիմնական իրավական ակտերն են.

- ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ՝ նոր խմբագրությամբ հաստատվել է «Բանկային գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը, որը ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից: Կանոնակարգում ամրագրվել են Բազել-2 համաձայնագրի ստանդարտացված մոտեցման հիմնական դրույթները: Մասնավորապես՝ կապիտալի համարժեքության հաշվարկում, բացի վարկային ռիսկից, ընդգրկվել են նաև շուկայական ռիսկը և գործառնական ռիսկը: Բազել-2 համաձայնագրի ներդրման գործընթացը կնպաստի բանկերում ռիսկերի կառավարման գործուն համակարգի ձևավորմանն ու ներդրմանը.
- Բանկային գործունեության նորմատիվային դաշտի կարգավորման նպատակով կատարվել են հետևյալ փոփոխությունները.
  - Բանկերի ընթացիկ իրացվելիության ($Ն2^2$) նորմատիվային նվազագույն պահանջը 80%-ից դարձել է 60%:
  - Ընդհանուր իրացվելիության նորմատիվի ($Ն2^1$) սահմանաչափը 20%-ից իջեցվել է և սահմանվել է 15%:

Վերլուծությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում կիրառվող իրացվելիության նորմատիվները ավելի զսպողական էին, քան առկա իրացվելիության ռիսկերը, և միջազգային պրակտիկայում նորմատիվային սահմանափակումները ավելի ցածր են, քան ՀՀ-ում:

- Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկը ընդգրկվել է կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում (շուկայական ռիսկի հաշվարկ)՝ Բազել 2 համաձայնագրի պահանջներին համահունչ, քանի որ իրականացված վերլուծությունները ցույց են տվել, որ արտարժույթի տնօրինման գործող նորմատիվը ավելի զսպողական է, քան անհրաժեշտ է ներկայումս ձևավորված ռիսկերի պարագայում (արտարժութային ռիսկը 2008 թվականի հունվարի 1-ից կներառվի բանկի կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում):
- Արտարժույթով ներգրավված միջոցների համար պարտադիր պահուստավորման նորմատիվը սահմանվել է 12%, իսկ նպատակային ծրագրերի ֆինանսավորման նպատակով ներգրավված միջոցների համար՝ 0%: Սույն փոփոխության նպատակն է խթանել Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար բանկերի կողմից երկարաժամկետ միջոցների (երկար փողերի) ներգրավումը և զսպել ՀՀ ներհոսող կարճաժամկետ արտարժույթով միջոցները (տաք փողերը):

• Փոփոխություններ են կատարվել «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում: Մասնավորապես.

- Բանկերին հնարավորություն է տրվել իրականացնելու շրջիկ վարկավորման գործունեություն, եթե բանկերի կողմից պահպանվում են Կանոնակարգ 1-ով սահմանված անվտանգության ապահովման նվազագույն պայմանները: Սույն փոփոխությունը խթան կհանդիսանա բանկերի համար՝ ընդլայնելու վարկավորման աշխարհագրությունը և առանց մասնաճյուղային ցանցի ընդլայնման՝ վարկային միջոցները հասանելի կդառնան ՀՀ հեռավոր շրջաններում բնակվող քաղաքացիներին:
- Սահմանվել է, որ բանկերի մասնաճյուղերի և վերջիններիս ղեկավարների գրանցման ընթացքում որակավորման վկայականի առկայության պահանջը պարտադիր չէ, եթե բանկի մասնաճյուղը բանկի գլխամասի հետ աշխատում է իրական ժամանակի ռեժիմով, և բանկը ունի կադրերի ընտրության, աշխատակիցների մասնագիտական որակի բարձրացման և ղեկավարների նոր սերնդի պատրաստման, ինչպես նաև ներքին հսկողության արդյունավետ գործող համակարգ: Սույն փոփոխությունը խթան կհանդիսանա բանկերի համար՝ ստեղծելու կադրերի ընտրության և վերապատրաստման արդյունավետ համակարգ, որի արդյունքում ՀՀ բանկային համակարգը կհամալրվի առավել իրազեկ ու պրոֆեսիոնալ աշխատակիցներով:
- ՀՀ ոստիկանությանը միացված շուրջօրյա անվտանգության գործող համակարգեր ունեցող բանկերի մասնաճյուղերը դրամապահոցի բացակայության պարագայում կարող են չիրականացնել օրվա մնացորդի ինկասացում, եթե տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, և բանկի մասնաճյուղի տարածքում տեղադրված է չհրկիզվող պահարան:
- Սահմանվել է, որ բանկերի ղեկավարների որակավորման քննությունների հարցաշարերը կարող են հրապարակվել:

• Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները, դրանց լրացման պայմանները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին, ինչպես նաև միջազգային լա-

վագույն փորձին, մասնավորապես՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների դրույթներին համապատասխանեցնելու նպատակով հաստատվել է «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները»՝ նոր խմբագրությամբ:

Կարգավորման դաշտի հստակեցման նպատակով փոփոխություններ են կատարվել նաև «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում, «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հեռանկարային զարգացման ծրագրի ձևը» կարգում:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի ընդունման հետ կապված, 2007 թվականի ընթացքում ամբողջությամբ վերանայվել է: Մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել են՝

- Ապահովագրական ընկերությունների և միջնորդների լիցենզավորման կանոնակարգ 3/01-ը[4], որի նպատակն է ապահովագրական ընկերությունների, նրանց ղեկավարների և նշանակալից սեփականատերերի, ինչպես նաև ապահովագրական միջնորդների՝ ապահովագրական շուկա պատշաճ և միջազգային ստանդարտներին համապատասխան մուտքի ապահովում: Կանոնակարգով սահմանվել են մեկ փուլով գրանցում և լիցենզավորում:

- Տնտեսական նորմատիվներ[5] և դրանց հաշվարկման կարգը: Նորմատիվների ընտրության ժամանակ հիմք են ընդունվել եվրոպական ստանդարտները: Սահմանվել են կանոնադրական և սեփական կապիտալի նվազագույն սահմանաչափերը, ընդ որում՝ վերջինս կրկնակի փոքր է եվրոպական սահմանաչափից: Մյուսը վճարունակության նորմատիվն է, որը սահմանում է ընկերության կողմից միավոր կապիտալի դիմաց հավաքագրվող ապահովագրավճարի չափը: Վճարունակության և սեփական կապիտալի նվազագույն սահմանաչափերը միասին ապահովում են ընկերության գործունեության ռիսկայնության կառավարելի միջակայքը: Սահմանվել է նաև իրացվելիության նորմատիվ, որի նպատակն է անընդհատ ապահովել կարճաժամկետ պարտավորություններին համարժեք բարձր իրացվելի ակտիվներ: Կենտրոնացվածության ռիսկը զսպելու նպատակով սահմանվել է մեկ ապահովագրության օբյեկտի գծով ստանձնած ապահովագրական ռիսկերի առավելագույն չափի նորմատիվը: Վարկային և կենտրոնացվածության ռիսկերը զսպելու նպատակով սահմանվել է ակտիվների համարժեքության նորմատիվը, որը վերաբերում է տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների ներդրման ուղղություններին և առավելագույն չափերին:

---

[4] *«Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.10.2007թ. թիվ 344-Ն որոշմամբ:*

[5] *«Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 02.10.2007թ. թիվ 311-Ն որոշմամբ:*

• Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը[6], որում տարանջատված սահմանվել են կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների կողմից ձևավորման ենթակա տեխնիկական պահուստները: Ռիսկային ապահովագրության համար հիմնական պահուստներից է «Չվաստակած ապահովագրավճարների պահուստը», որի միջոցով հաշվառվում է ընկերության կողմից գործող պայմանագրերի գծով չվաստակած ապահովագրավճարների մասը: Բացի այդ, ընկերությունը պարտավոր է ապահովագրական պահանջը ստանալիս ձևավորել «Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ», որը ներկայացնում է ընկերության փաստացի հնարավոր պարտավորությունները յուրաքանչյուր պահի դրությամբ: Մյուսը՝ «Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստն» է, որը նախորդ ժամանակաշրջանում տեղի ունեցած, սակայն դեռևս ընկերությանը անհայտ ապահովագրական դեպքերի արդյունքում ընկերության համար հնարավոր պարտավորությունների մեծությունն է: Սահմանվել է նաև «Հավասարակշռման պահուստ», որի նպատակն է մեղմել ժամանակի մեջ վնասաբերության կտրուկ տատանումները՝ պայմանավորված արտակարգ իրավիճակներով, սեզոնայնությամբ և այլ գործոններով: «Բոնուսների և զեղչերի պահուստը» սահմանվել է՝ արտացոլելու համար ընկերության պարտավորությունները այն պայմանագրերի գծով, որոնք նախատեսում են պայմանագրում նշված պայմանների ի հայտ գալու դեպքում կատարել վճարումներ ապահովադրին ապահովագրողի շահույթից (բոնուս) կամ ապահովագրավճարների մասնակի նվազեցում (զեղչ): Ապահովագրողը պարտավոր է կյանքի ապահովագրության յուրաքանչյուր պայմանագրի կուտակային մասի չափով ձևավորել «Մաթեմատիկական պահուստ»: Բացի նշված պահուստներից, ընկերություններին հանարավորություն է տրվում ԿԲ նախնական համաձայնությամբ սահմանել նաև այլ պահուստներ:

• Ապահովագրական ընկերությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և դրանց ներկայացման կարգը[7], որով սահմանվել է ԿԲ-ին վերահսկողության, վերլուծական և վիճակագրական նպատակներով անհրաժեշտ տեղեկատվությունը: Դա իր հերթին թույլ է տվել մշակել նաև ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՌԱՄԵԼՍ) հաշվարկման մեթոդաբանությունը[8]: Այն վերահսկողական կարևոր գործիք է՝ ապահովագրական ընկերության ֆինանսական կայունության օբյեկտիվ գնահատական ստանալու և դրա հիման վրա օբյեկտիվ և հետևողական վերահսկողական որոշումներ կայացնելու տեսանկյունից:

• Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը[9], որի նպատակն է ապահովագրական ընկերությունների կողմից հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգի և հաշվարկին մասնակցող տարրերի հստակեցումը, որի արդյունքում կստանանք ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակը բնութագրող առավել արժանահավատ ցուցանիշներ (նորմատիվներ): Կարգը առավել համահունչ է բանկերի համար սահմանված մոտեցումներին:

---

[6] «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 02.10.2007թ. թիվ 312-Ն որոշմամբ:

[7] «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 16.11.2007թ. թիվ 366-Ն որոշմամբ:

[8] «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՌԱՄԵԼՍ) հաշվարկման մեթոդաբանությունը» կանոնակարգ 3/08-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 16.11.2007թ. թիվ 365- Ն որոշմամբ:

[9] «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» կանոնակարգ 3/09-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28.11.2007 թ. թիվ 427- Ն որոշմամբ:

- «Ապահովագրական պորտֆելի փոխանցման նախնական թույլտվություն ստանալու կարգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26.06.2007թ. թիվ 199-Ն որոշմամբ, որի նպատակն է ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական պորտֆելի փոխանցման գործընթացի կարգավորումը:

- «Վերաապահովագրողներին չարգելված և հուսալի համարելու չափանիշները» կանոնակարգ 3/05-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 18.09.2007թ. թիվ 294-Ն որոշմամբ, որի նպատակն է ապահովագրողների կողմից վերաապահովագրության քաղաքականության առավել հստակ ձևավորումը, վերաապահովագրողների ճիշտ ընտրությունը՝ հիմնված նրանց ֆինանսական կայունության գնահատման վրա:

- «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 02.10.2007թ. թիվ 314-Ն որոշմամբ, որի նպատակն է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին համահունչ ենթաօրենսդրական դաշտի առկայությունը:

Ապահովագրական շուկայի զարգացման հայեցակարգում նախատեսվել են ապահովագրական ընկերությունների և ապահովագրական բրոքերների շուկայական վարքագծի վերահսկողության ուժեղացման և սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված մոտեցումներ: Հատկապես ապահովագրական բրոքերների գործունեության դաշտի կարգավորման առումով շեշտը դրվել է նրանց շուկայական վարքագծի պատշաճ վերահսկողության և սպառողների շահերի պաշտպանության վրա: Դրանից ելնելով՝ ընդունվել են մի շարք իրավական ակեր, մասնավորապես.

- Ապահովագրական ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման հրահանգը[10]: Այս կարգի նպատակն է ապահովագրողների գործունեության վերաբերյալ ապահովադիրների և այլ սպառողների համար արժանահավատ տեղեկատվության ապահովումը, ինչպես նաև ապահովագրողների գործունեության թափանցիկության ապահովումը:

- Ապահովագրական ընկերությունների կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման կարգը[11], որի նպատակն է ապահովադիրների և այլ սպառողների իրազեկության բարձրացումը և տեղեկատվության թափանցիկության ապահովումը:

- Ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու կարգը[12], որի նպատակն է ապահովագրական գործառույթների պատվիրակման դեպքում կոնտրագենտ հանդիսացող անձի և պատվիրակման գործառույթի հետ կապված ռիսկերի բացահայտումը և կանխարգելումը (նվազեցումը), որի արդյունքում պատվիրակվող ծառայությունների մասով ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունությունը ավելի բարձր կլինի, մյուս կողմից՝ ապահովադիրների շահերը չեն վտանգվի:

---

[10] «Ապահովագրական ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման հրահանգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12.06.2007թ. թիվ 180-Ն որոշմամբ:

[11] «Ապահովագրական ընկերությունների կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26.06.2007թ. թիվ 198-Ն որոշմամբ:

[12] «Ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու կարգը, պայմանները և դրա համար ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունների ցանկը» կանոնակարգ 3/07-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 11.12.2007թ. թիվ 408-Ն որոշմամբ:

• Ապահովագրական բրոքերների կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունները[13], որի նպատակն է ստանալ բրոքերների շուկայական վարքագծի հեռակա վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Վերջինս ծածկում է բրոքերների գործունեությունը «ապահովադիր-ապահովագրող» և «ապահովագրող-վերաապահովագրող» հարաբերություններում:

• Ապահովագրական բրոքերների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը[14], որի նպատակն է ապահովագրական բրոքերների ծառայությունների, դրանց պայմանների, հաճախորդների իրավունքների մասին սպառողներին իրազեկելը, որն էլ կնպաստի բրոքերային ծառայությունների շուկայական (մրցակցային) գների հաստատմանը, ինչպես նաև ավելի հեշտ կլինի սպառողների իրավունքների պաշտպանությունը:

Վերանայվել է և իրավական դաշտի փոփոխություններին է համապատասխանեցվել ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերային ընկերությունների պատասխանատու անձանց մասնագիտական որակավորման գնահատման հարցաշարը:

Ապահովագրական շուկայի ենթակառուցվածքները

Ապահովագրական շուկայի արդյունավետ զարգացման պարտադիր պայման է համապատասխան ենթակառուցվածքների ներդրումը, ուստի ՀՀ ԿԲ-ն ձեռնամուխ է եղել դրանց ստեղծման ծավալուն աշխատանքների իրականացմանը: Մասնավորապես՝ 2007 թվականի ընթացքում իրականացվել են ապահովագրական միասնական վիճակագրական կենտրոնի ստեղծման, ակտուարական ինստիտուտի ներդրման և պարտադիր ավտոապահովագրության ներդրման աշխատանքներ:

• 2007 թվականին ՀՀ ԿԲ խորհուրդը հաստատել է «Ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների հաճախորդների տեղեկատվական համակարգի (ապահովագրական ռեգիստրի) ստեղծման, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների՝ ապահովագրական ռեգիստրին մասնակցության կարգը», որն ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից: Ապահովագրական ռեգիստրը ստեղծվել է որպես կարևորագույն ենթակառուցվածք՝ պարտադիր ավտոապահովագրության համակարգի գործունեությունը ապահովելու առումով: Մասնավորապես, ռեգիստրի ստեղծումը հետապնդում է հետևյալ նպատակները՝

1. ավտոապահովագրության գծով ակտուարական հաշվարկների իրականացման համար անհրաժեշտ տվյալների թվային շարքերի ապահովում, որոնք հնարավորություն կտան հաշվարկել արդար ապահովագրական սակագին,
2. ապահովագրական ընկերությանը լրացուցիչ ռիսկերից զերծ պահելու նպատակով տրամադրում է տեղեկատվություն ապահովագրական ընկերությունների հաճախորդների և ապահովադիրների վերաբերյալ:

Ապահովագրական ռեգիստրը տվյալների միասնական շտեմարան է, որն ապահովագրական ընկերություններից ընդունում է տեղեկատվություն ավտոապահովագրական պայմանագրերի, դրանց գծով արձանագրված ապահովագրական դեպքերի և հատուցումների վերաբերյալ և տրամադրում ֆիզիկական կամ

---

[13] «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26.06.2007թ. թիվ 197-Ն որոշումը:

[14] «Ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և նրանց պատասխանատու անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, ձևերը և պարբերականությունը» կանոնակարգ 3/06-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.10.2007թ. թիվ 335-Ն որոշմամբ:

իրավաբանական անձանց՝ նրանց պահանջով, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների պահանջով՝ վերջիններիս հաճախորդների և նրանց ավտոմեքենաների վերաբերյալ: Բացի այդ, ռեգիստրը ապահովագրական ընկերություններին տրամադրելու է նաև պարբերական ամփոփ տեղեկատվություն: Ներկայումս շտեմարանը շահագործվում է, և կանխատեսվում է, որ 2008թ. ապրիլի վերջի դրությամբ մոտ 15000 ավտոապահովագրության պայմանագրերի և մի քանի անգամ շատ ավտոմեքենաների վերաբերյալ տեղեկատվություն արդեն իսկ հավաքագրված կլինի ռեգիստրում:

- ՀՀ-ում ակտուարական ինստիտուտի ձևավորումը ենթադրում է առաջին հերթին բարձր՝ միջազգային չափանիշներին համապատասխան որակավորում ունեցող մասնագետների (ակտուարների) պատրաստում: Այդ նպատակով Կենտրոնական բանկը 2007 թ. ընթացքում նախաձեռնել է Հայաստանում ակտուարական կրթության զարգացման և որակավորված ակտուարների պատրաստման ծրագիր: Վերջինիս շրջանակներում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Մեծ Բրիտանիայի Ակտուարների միության հետ համատեղ իրականացվելու են ակտուարների պատրաստման և որակավորման շարունակական դասընթացներ, որոնք արդեն իսկ սկսվելու են 2008թ. ապրիլից:
- 2007 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից մշակվել է «Հայաստանում ավտոտրանսպորտային միջոցներ վարողների՝ երրորդ անձանց հանդեպ քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հայեցակարգը», որը տարեվերջին հաստատվել է ՀՀ Կառավարության որոշմամբ: Հայեցակարգի հիմնական նպատակը ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժած անձանց սոցիալական պաշտպանվածության խնդրի լուծումն է: Համակարգի ներդրումը նաև կարող է լրջագույն խթան հանդիսանալ ընդհանրապես ապահովագրական համակարգի զարգացման համար, ստեղծել լրացուցիչ ներդրումային ֆինանսական միջոցներ տնտեսությունում և նպաստել բնակչության ապահովագրական կուլտուրայի ձևավորմանը: Ըստ հայեցակարգի՝ պարտադիր ավտոապահովագրությունը ընդգրկում է միայն ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում տուժած անձանց վնասների հատուցումը, որը ներառում է տուժած անձանց գույքին, կյանքին ու առողջությանը պատճառված վնասների հատուցումը, այսինքն, չեն հատուցվում վնասը պատճառած տրանսպորտային միջոցի կամ վերջինիս վարորդի կրած վնասները:

Հայեցակարգի շրջանակներում նախատեսվում է.

- ✓ Ավտոապահովագրողների բյուրոյի ստեղծում, որի հիմնական նպատակն է պարտադիր ավտոապահովագրության համակարգի արդյունավետ գործունեության ապահովումը և «Բոնուս-Մալուս» համակարգի (ապահովագրավճարների գծով կիրառվող հավելավճարների կամ զեղչերի համակարգի) կիրառումը,
- ✓ Երաշխավորման հիմնադրամի ստեղծումը, որը որոշակի դեպքերում կերաշխավորի ապահովագրված անձանց վճարվելիք ապահովագրական հատուցումները,
- ✓ Ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով տուժած անձանց վնասների հատուցման արդյունավետ և պարզեցված մեխանիզմների ստեղծումը, որոնք տուժած անձանց հնարավորություն կընձեռեն առանց լրացուցիչ բյուրոկրատական քաշքշուկների և ներկայումս օրենսդրությամբ պահանջվող տարբեր տեսակի փաստաթղթերի, ստանալու ապահովագրական հատուցումը:

Կենսաթոշակային բարեփոխումները

2007 թվականի ընթացքում նախագծվել է ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացման ծրագիրը, ինչը ներառում է նախատեսվող բազմաստիճան կենսաթոշակային համակարգի պար-

տադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչների նկարագրությունը, դրանց գործունեության սկզբունքները, կարգավորումը, կառավարումը: Կառավարության կողմից կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի ընդունման արդյունքում 2008թ. ընթացքում նախատեսվում է մշակել կենսաթոշակային համակարգի մասին օրենքը և բարեփոխումների իրականացման ծրագրում նախատեսված այլ միջոցառումները, մասնավորապես՝ հանրային քննարկումներ, հասարակությանը ծրագրի դրույթների ներկայացում, ինչպես նաև կուտակային բաղադրիչի ներդրման (որը, ըստ ծրագրի, նախատեսվում է ներդնել 2009 թվականից) նախապատրաստական այլ աշխատանքներ:

Արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով Կենտրոնական բանկը 2007 թվականին իրականացրել է հետևյալ բարեփոխումները.

2007 թվականի ընթացքում բանկերին և վարկային կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվել արժեթղթերի շուկայում ուղղակիորեն իրականացնելու մասնագիտացված գործունեություն[15]: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այսօր բանկերը և վարկային կազմակերպությունները մեր ֆինանսական ոլորտի ամենաակտիվ և ֆինանսապես կայուն հնստիտուտներն են, հետևաբար ճիշտ չէ արժեթղթերի շուկայում նրանց մասնագիտացված գործունեության արգելումը: Այս մասին է վկայում նաև եվրոպական փորձը:

2007 թվականին ենթաօրենսդրական հիմքեր են ստեղծվել երկմակարդակ պահառության համակարգի ձևավորման համար՝[16] նպատակ ունենալով պահառության ծառայությունները առավել մատչելի և հարմարավետ դարձնել մանր ներդրողների համար: Այսինքն՝ այս համակարգի ձևավորմամբ մանր ներդրողները հնարավորություն կունենան, առանց Կենտրոնական դեպոզիտարիա հաճախելու, գործառնություններ կատարելու իրենց արժեթղթերի հաշիվներով (մասնավորապես՝ արժեթղթերը փոխանցել մի հաշվից մյուսը, գրավադրել և այլն): Այսօր արդեն 2 բանկ և 2 մասնագիտացված անձ մատուցում են այս ծառայությունը:

Սահմանվել են մասնագիտացված անձանց տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը և հաշվարկում օգտագործվող մեծությունների կազմը[17]: Մասնավորապես՝ սահմանվել է սեփական կապիտալի նվազագույն չափի նորմատիվը: Նպատակը շուկայում միայն այնպիսի ծառայություններ մատուցողներ ունենալն է, որոնք վստահություն կներշնչեն և կմատուցեն միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող ծառայություններ:

Վերանայվել են ազդագրում ներառվող տեղեկատվության կազմը և հաշվետու թողարկողների հաշվետվությունները[18]: Նախկին ազդագրի կանոնները ծանրաբեռնող էին և բարդ, որի պատճառով այդ փաստաթղթի կազմումը թողարկողների համար դառնում էր դժվարին խնդիր: Նոր կանոնակարգը հնարավորություն կընձեռի ունենալ օտարերկրյա ներդրողների համար ընդունելի և Եվրամիության չափանիշները բավարարող

---

[15] ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 06.02.2007թ. թիվ 32-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ««Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ:

[16] ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 06.02.2007թ. թիվ 33-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33:

[17] ՀՀ ԿԲ խորհրդի 15.05.2007թ. թիվ 144-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց գործունեության հատուկ տնտեսական նորմատիվները» և 15.05.2007թ. թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Մասնագիտացված անձանց գործունեության տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը և հաշվարկում օգտագործվող մեծությունների կազմը»:

[18] ՀՀ ԿԲ խորհրդի 12.06.07.թ. թիվ 179-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի գրանցման հայտարարագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 40:

ազդագրի կանոններ, ինչպես նաև բացահայտել ներդրողի որոշումների կայացման համար առավել էական համարվող տեղեկատվություն:

Սահմանվել են կանոններ, որոնց համաձայն՝ մասնագիտացված անձինք և ԻԿԿ-ները հաշվետվությունները պետք է ներկայացնեն բացառապես էլեկտրոնային եղանակով[19]:

Սահմանվել է նոր կարգ[20], որը կարգավորում է թողարկողների, հաշվետու թողարկողների բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատերերի և ղեկավարների կողմից գաղտնի համարվող տեղեկությունների ներկայացման գործընթացը:

Փոփոխություններ ֆինանսական համակարգի այլ մասնակիցների գործունեության կարգավորման դաշտում

- «Արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում որոշակի փոփոխությունների են ենթարկվել փոխանակման կետերի տարածքային և տեխնիկական անվտանգությանը ներկայացվող պահանջները, փոխանակման կետերում տեղեկատվության պահպանման պայմանները:
- Փոփոխություններ են կատարվել «Մասնագիտացված անձանց կողմից հաճախորդներին արտարժույթի առքուվաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման մեջ, համաձայն որի՝ արտարժույթի առք ու վաճառքի անդորրագրի երկրորդ օրինակը պահպանվում է լիցենզավորված անձի մոտ՝ թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակով՝ լազերային կրիչի վրա՝ 3 տարի ժամկետով՝ բացառությամբ փոխանակման կետերի և արժութային դիլերների, որոնց մոտ անդորրագրերի երկրորդ օրինակը պահպանվում է թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակով՝ լազերային կրիչի վրա՝ 1 տարի ժամկետով:
- Կարգավորման դաշտի հստակեցման նպատակով փոփոխություններ են իրականացվել «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի, տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում, «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում: Մասնավորապես Կանոնակարգ 13-ում նախատեսվել է, որ ՀՀ ոստիկանությանը միացված շուրջօրյա անվտանգության գործող համակարգեր ունեցող վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը դրամապահոցի բացակայության պարագայում կարող են չհրականացնել օրվա մնացորդի ինկասացում, եթե տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը և վարկային կազմակերպության մասնաճյուղի տարածքում տեղադրված է չհրկիզվող պահարան:

---

[19] ՀՀ ԿԲ խորհրդի 07/08/2007թ. թիվ 257-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ««Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշման մեջ փոփոխություններ:

[20] ՀՀ ԿԲ խորհրդի 20.03.2007թ. թիվ 80-Ն որոշմամբ հաստատված «Թողարկողների, հաշվետու թողարկողների բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատերերի և ղեկավարների կողմից գաղտնի համարվող տեղեկությունների ներկայացման կարգը»:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 2007 ԹՎԱԿԱՆԻՆ

Ֆինանսական համակարգի փաստաթղթային և տեղերում ստուգումները իրականացնում է Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչությունը, որի նպատակն է վերահսկել և բացահայտել ֆինանսական համակարգի կայուն զարգացման ճանապարհին առաջացող հնարավոր նորանոր խոչընդոտները, արագորեն կանխել ֆինանսական շուկայի մասնակիցների մոտ առկա՝ անթույլատրելի մակարդակում դրսևորվող ռիսկերը:

Ընդհանուր առմամբ, նախորդ տարվա համեմատ, 2007 թվականին ֆինանսական վերահսկողության վարչության կողմից ավելացել է բանկերում նպատակային ստուգումների թիվը: Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից 2007 թվականի ընթացքում իրականացվել են 511«տեղերում ստուգումներ»՝ 5 բոլոր ուղղություններով և 40 նպատակային ստուգումներ բանկերում, 5 ստուգումներ վարկային կազմակերպություններում, 8 ստուգումներ ապահովագրական ընկերություններում, 30 ստուգումներ գրավատներում, 18 ստուգումներ արժեթղթերի շուկայի մասնակիցների գծով, 403 ստուգումներ արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետերում:

Աղյուսակ 1. Տեղերում վերստուգումները և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

	2005 թվական	2006 թվական	2007 թվական
Ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	44	49	74
Բանկերի, վարկային կազմ., ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների և գրավատների ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	397.6 մլրդ դրամ	500.2 մլրդ դրամ	674.5 մլրդ դրամ
Ֆինանսական վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը	9.0 մլրդ դրամ	10.2 մլրդ դրամ	9.1 մլրդ դրամ
Տարվա ընթացքում իրականացված ստուգումների թիվը, այդ թվում՝	51	587	511
բանկերում՝ բոլոր ուղղություններով	5	8	5
բանկերում՝ նպատակային	41	5	40
վարկային կազմակերպություններում	5	4	5
ապահովագրական ընկերություններում	*	15	8
գրավատներում	-	26	30
արժեթղթերի շուկայի մասնակիցների	*	5	18
արտարժույթի փոխանակման կետերում	447	529	403
ֆինանսական շուկայի այլ մասնակիցների	-	-	2

** Տվյալները բացակայում են:*

Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից փաստաթղթային և տեղերում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտվել են հիմնականում օրենսդրական խախտումներ, տրամադրված տվյալների թերացումներ, հաշվապահական հաշվառման կանոնների, նորմատիվային խախտումներ և հաշվետվությունների ուշացումներ:

2007 թվականին արձանագրվել է առևտրային բանկերի կողմից թույլ տրված 706, վարկային կազմակերպությունների կողմից՝ 78, ապահովագրական ընկերությունների կողմից՝ 418 և գրավատների կողմից՝ 213 խախտումներ:

Աղյուսակ 2. Ֆինանսական կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումները և կիրառված պատժամիջոցները 2007 թվականի ընթացքում

	Առևտրային բանկեր	Վարկային կազմակերպություններ	Ապահովագրական ընկերություններ	Գրավատներ	Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպ.
Խախտման տեսակ					
Հաշվապահական հաշվառման	47	12	18	-	-
Ակտիվների դասակարգման կարգի	10	2	1	-	-
Օրենսդրական	487	17	69	151	-
Նորմատիվային	15	-	17	-	-
Հանձնարարականի չկատարում	7	5	1	-	1
Հաշվետվությունների ուշացում	1	8	10	14	-
Անարժանահավատ տվյալներ	36	29	300	48	-
Ընդհանուր կապիտալի	1	-	2	-	-
Վարկային ռեգիստր	102	5			-
Պատժամիջոցներ					
Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում	-	-	4	6	-
Տուգանք կազմակերպությանը	65	7	50	84	-
Տուգանք ղեկավարին	142	1	0	-	-
Տույժ	-	-	-	-	-
Նախազգուշացում	345	67	89	63	1
Ղեկավարին մասնագիտական որակավորման վկայականից զրկում	-	-	-	-	-
Կարճում	26	1	229*	29	-

** Ըստ «ՀՀ ԿԲ մասին» ՀՀ օրենքի՝ ԿԲ կողմից կազմված վարույթը կարող է կարճվել ԿԲ Նախագահի որոշմամբ, եթե խախտումն ուղղվել է մինչև պատժամիջոցի վերաբերյալ որոշման կայացումը:*

2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից վերահսկողական գործընթացներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հետևյալ ուղղություններին.

1. Բանկերում կորպորատիվ կառավարման սկզբունքների արդյունավետ ներդրման գործընթացին, մասնավորապես կարևորելով.
   - ներքին հսկողության համակարգը
   - ռիսկերի կառավարման համակարգը
   - SS ոլորտը
   - մարդկային ռեսուրսների կառավարումը
   - թափանցիկության ապահովումը:

2. Վարկային կազմակերպություններում և գրավատներում.
- ակտիվային գործառնությունները
- հաշվապահական ձևակերպումները
- կապիտալի տարրերը
- պարտավորությունները
- եկամտաբերությունը
- իրացվելիությունը
- SS ոլորտը
- վարկային պորտֆելը
- ներքին հսկողության համակարգը:

3. Ապահովագրական ընկերություններում.
- ապահովագրական ընկերությունների իրական կապիտալացման մակարդակը
- ապահովագրական ընկերությունների կառավարումը (ներքին հսկողություն և այլն)
- հավաքագրված ապահովագրավճարների համեմատ ընկերությունների կողմից տրված հատուցումների ցածր մակարդակը
- նոր հաշվապահական և կանոնակարգման դաշտի փոփոխություններին ընկերությունների գործունեության համապատասխանեցումը:

4. Կորպորատիվ ֆինանսների գծով.
- հրապարակային առաջարկով հանդես եկող անձանց նկատմամբ վերահսկողությունը
- ազդագրերի գրանցման գործընթացների կազմակերպումը
- աջակցությունը հրապարակային առաջարկով հանդես եկող անձանց:

5. Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց գծով.
- արժեթղթերի շուկայում մասնագիտացված ծառայությունների մատուցման վարվելակերպի կանոնների պահպանման, կանխարգելիչ վերահսկողության մասնակի ներդրման, մասնավորապես՝ սեփական կապիտալի տնտեսական նորմատիվի կիրառման, ինչպես նաև չլիցենզավորված անձանց գործունեության կանխարգելման (մուտքի պահանջի պահպանման) հարցերը:
- ՀՖԲ-ում կառավարման ներքին գործընթացների կանոնակարգման, բորսայական առևտրի կազմակերպման ընթացիկ վերահսկողության, պետական պարտատոմսերի բորսայական առևտրի կազմակերպման և արտարժույթի բորսայական առևտրի կատարելագործման, ՀՖԲ-ի վերագրանցման և բորսայական առևտրի անխափան ապահովման հարցերը:
- ՀԿԴ-ում կառավարման ներքին գործընթացների կանոնակարգման, ռեեստրավարման, պահառության և հաշվարկաքլիրինգային գործառույթների ընթացիկ վերահսկողության, ՀԿԴ-ի վերագրանցման և նրա գործառույթների ապահովման հարցերը:

6. Փոխանակման կետերում ծառայությունների մատուցման որակի գնահատումը:

2008 թվականին ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչությունը առաջնային ուշադրություն կդարձնի հետևյալ խնդիրներին.
- Բանկերում. Բազել 2-ի պահանջների ներդրում, ֆինանսական խմբերի միասնական ռիսկերի գնահատում, ռիսկերի կառավարման գործընթացների գնահատում:

- Վարկային կազմակերպություններում և գրավատներում. ներքին հսկողության համակարգերի գնահատում:
- Ապահովագրական ընկերություններում. ակտուարական ինստիտուտի ձևավորում և համապատասխան մասնագետներով ապահովագրական ընկերությունների համալրում, ռիսկերի կառավարում, կադրային քաղաքականություն, տեղեկատվական տեխնոլոգիաների բավարար մակարդակի ապահովում (հաշվապահական գործուն ծրագրեր, տեղեկատվական անվտանգություն և այլն), ապահովադիրների վստահության ամրապնդում ապահովագրական ընկերությունների նկատմամբ, շուկայի ենթակառուցվածքների ձևավորում, օտարերկրյա ներդրումների խթանում:
- Կորպորատիվ ֆինանսների գծով. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված հրապարակային առաջարկության նկատմամբ վերահսկողություն, հաշվետու թողարկողների կողմից բացահայտման ենթակա տեղեկատվությունների նկատմամբ վերահսկողություն, օրենսդրության շրջանակներում հաշվետու թողարկողների կորպորատիվ հարաբերությունների նկատմամբ վերահսկողություն, հրապարակային առաջարկով հանդես եկող անձանց աջակցություն, նշված գործընթացը իրականացնելու նպատակով համագործակցություն OMX-ի հետ:
- Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց գծով. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին համապատասխան ենթաօրենսդրական դաշտի ձևավորման, արժեթղթերի շուկայի մասնակիցների վերագրանցման և վերալիցենզավորման, ինչպես նաև կանխարգելիչ և շուկայի վարվելակերպի վերահսկողության համակարգերի ներդրման հարցեր:
- Փոխանակման կետերում ծառայությունների մատուցման որակի գնահատում:

ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2007 թվականին մշակվել և ներդրվել է ՀՀ ԿԲ բանկային վերահսկողության ոլորտում ընդգրկված աշխատակիցների որակավորման և մասնագիտական աճի ապահովման սկզբունքորեն նոր մոտեցում: Համաձայն նոր համակարգի՝ բանկային վերահսկողության ոլորտում այսուհետ կարող են աշխատանքի ընդունվել կամ աշխատանքային առաջխաղացում ունենալ այն աշխատակիցները, որոնք հաջողությամբ անցել են Շվեյցարիայի Ֆինանսական կայունության ինստիտուտի (FSI) կողմից առաջարկվող FSI Connect-ի համապատասխան դասընթացները: Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից առաջարկվող դասընթացները վերահսկողական ուսուցողական դասընթացներ են, որոնք անցկացվում են իրական ժամանակի ռեժիմով, յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակիցը հանձնում է քննություն՝ բազմակի ընտրության սկզբունքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. «Կապիտալ և Բազել 2», «Վարկային ռիսկ», «Շուկայական ռիսկ», «Գործառնական ռիսկ», «Հաշվապահություն», «Վճարահաշվարկային համակարգեր», «Այլ վերահսկողական թեմաներ»: Յուրաքանչյուր թեմա մատուցվում է երեք մակարդակով՝ բազային, միջին և խորացված:

2007 թվականի ընթացքում ներդրվել են միջազգային խորհրդատուների կողմից առաջարկված դասընթացները, որոնք տեղայնացվել են՝ հաշվի առնելով ՀՀ բանկային համակարգում գոյություն ունեցող իրական դեպքերը: Այս դասընթացները պետք է դասավանդեն վերահսկողության ոլորտի բարձր որակավորում ունեցող ԿԲ աշխատակիցները՝ ավելի երիտասարդ մասնագետներին փոխանցելով իրենց փորձը և գիտելիքները: Այս դասընթացները կսկսվեն 2008 թվականից:

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործընթացներին մասնակցող աշխատակիցները մասնագիտական որակավորման բարձրացման, միջազգային փորձին ծանոթանալու, մասնագիտական գիտելիքների արդիականացման և կատարելագործման նպատակով մասնակցություն են ունեցել մի շարք ներքին և արտաքին դասընթացների և կոնֆերանսների: Կենտրոնական բանկի կադրերի վերապատրաստմանը օժանդակել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Շվեյցարիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, Նիդեռլանդների, Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Միջազգային հաշվարկների բանկը, Լեհաստանի ազգային բանկը, Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն: Կադրերի վերապատրաստման թեմաները հիմնականում ներառել են ֆինանսական կայունության, բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների վերահսկողության արդի խնդիրներ՝ ռիսկերի կառավարման ու գնահատման, վերահսկողական նոր մոտեցումների կիրառման, դրանց կարգավորման դաշտի բարեփոխումների հարցեր:

Ուսուցանված հիմնական թեմաներն են՝ «Ֆինանսական կայունություն», «Ֆինանսական կայունության վերլուծություն և հաշվետվություն», «Տեսչական վերահսկողություն», «Բանկային վերահսկողություն. կազմակերպում և մեթոդներ», «Ռիսկի վրա հիմնված վերահսկողություն», «Բանկերի վերլուծություն և ստուգում», «Կապիտալ և Բազել 2», «Վարկային ռիսկի վերլուծություն», «Շուկայական ռիսկ», «Գործառնական ռիսկ», «Հիփոթեքային վարկեր», «Միջազգային հաշվապահություն և աուդիտ», «Կիրառական տնտեսական

քաղաքականություն», «Ապահովագրության կարգավորման և վերահսկողության իրավական ասպեկտները», «Վերաապահովագրություն», «Ռիսկի կառավարման փորձը ապահովագրական արդյունաբերությունում», «Ապահովագրական հիմնարար սկզբունքները վերահսկողների համար», «Քննարկումներ ապահովագրական հարցերի շուրջ», «Արժեթղթերի շուկայի զարգացում», «Փոխանակման կետերի լիցենզավորում և վերահսկողություն», «Վճարային համակարգերի հսկում և փողերի լվացման դեմ վերահսկողություն» և այլն: Նշված սեմինարներից բացի, Կենտրոնական բանկի աշխատակիցները աշխատանքային նպատակներով այցելել են նաև այլ երկրների Կենտրոնական բանկեր՝ ուսումնասիրելու առանձին խնդիրների լուծմանն ուղղված գործընթացներում վերջիններիս փորձը:

2007 թվականի հունիսի 11-15-ը Ֆեդերալ ռեզերվային համակարգի կողմից Երևանում կազմակերպվել է «Վերահսկողությունը փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում» թեմայով տարածաշրջանային դասընթաց: Բացի ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցներից, դասընթացին մասնակցել են նաև 15 բանկային աշխատակիցներ 9 պետություններից:

ԿԲ աշխատակիցները ներկա են եղել բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, ֆորումների, կլոր սեղանի նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների, աշխատանքային սեմինարների, որտեղ հանդես են եկել զեկուցումներով և ելույթներով: Կենտրոնական բանկի աշխատակիցները Լոնդոնում մասնակցել են HSBC խմբի վերահսկողների տարեկան հանդիպմանը, Մոսկվայում՝ ԱՊՀ անդամ երկրների արժեթղթերի շուկաների կարգավորման պետական մարմինների ղեկավարների նիստին, Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի MANIVAL կոմիտեի նիստին, Տուլայում՝ ԵՎՐԱԶԵՍ անդամ երկրների կենտրոնական բանկերի Կոորդինացիոն խորհրդի նիստին, Սալոնիկում՝ Սևծովյան առևտրի և զարգացման բանկի տնօրենների խորհրդի հանդիպումներին, Ռիգայում՝ Հաշվապահների և աուդիտորների եվրոպական ֆորումին, Ֆրանկֆուրտում՝ Գերմանական KfW բանկի վերահսկող խորհրդի հանդիպմանը, Սոչիում՝ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Եվրասիական խմբի նիստին, Ստամբուլում՝ «Ավանդների ապահովագրության համակարգերի դերը ֆինանսական կայունության ամրապնդման խնդրում» թեմայով կոնֆերանսին, Պոդգորիցեում՝ Միջին Ասիայի, Սևծովյան տարածաշրջանի և Բալկանյան երկրների կենտրոնական բանկերի կառավարիչների ակումբի նիստին, Բոստոնում՝ SWIFT օգտագործողների և անդամների ազգային ասոցիացիաների նախագահների տարեկան համաժողովին և այլն:

Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչության կազմում ստեղծված սպառողների շահերի պաշտպանության և շուկայի վարվելակերպի նորաստեղծ բաժնի աշխատակիցները մասնակցել են «Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթության» գծով միջազգային 4-րդ կոնֆերանսին:

2007 թվականի մայիսի 14-16-ը Երևանում ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Մեծ տասնյակի (G-10), Արևելյան Եվրոպայի և Անկախ պետությունների համագործակցության երկրների կենտրոնական բանկերի տեխնիկական համագործակցության կոորդինատորների տարեկան հանդիպումը, որին մասնակցել են 47 պատվիրակներ 34 պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից:

Բանակցությունների և կապերը ընդլայնելու նպատակով տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկ են այցելել UBS Global Asset Management, “FITCH RATINGS” վարկանշային գործակալությունների, CitiBank-ի, De La Rue Cash Systems ընկերության, ԱՄՆ-ի գանձապետական դեպարտամենտի, OMX GROUP ընկերության, ՄԱԿ-ի՝ Թմրամիջոցների ու հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC), USAID կազմա-

կերպության, Վճարային նախաձեռնություն ԱՊՀ երկրների համար (CISPI) ծրագրի փորձագետները: Ապահովագրական ոլորտում խորհրդատվություններ տրամադրելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկ են այցելել գերմանացի փորձագետները:

2007 թվականի հոկտեմբերի 22-ին Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական բանկի միջև բանկային վերահսկողության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիր:

ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության կատարելագործման, արդիականացման և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից ելնելով՝ Կենտրոնական բանկը կարևորում է կադրերի վերապատրաստման և օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության աշխատանքների շարունակականության ապահովման գործընթացը:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2007 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2007 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը

2007 թվականի ընթացքում բանկային գործունեության լիցենզիա է ստացել «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ն: 2007 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործում են 22 առևտրային բանկեր՝ 347 մասնաճյուղերով (մասնաճյուղերի քանակը ավելացել է 48-ով): Տարվա ընթացքում 3 բանկում տեղի է ունեցել բաժնետերերի փոփոխություն. բանկային համակարգ են մուտք գործել լիբանանյան «Բիբլոս», ռուսական «Տրոյկա-Դիալոգ» և «Գազպրոմ» բանկերը:

2007 թվականին բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը բնութագրող ցուցանիշները բավականին աճել են. տարեվերջին համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ 24.3%-ը, վարկերը՝ 13.0%-ը՝ նախորդ տարվա համապատասխանաբար 19.8%-ի և 8.6%-ի փոխարեն:

Կենտրոնացվածությունը ՀՀ բանկային համակարգում

2007 թվականին բանկային համակարգում արձանագրվել են կենտրոնացվածության մակարդակի նվազման որոշակի միտումներ՝ հիմնականում պարտավորությունների մասով: Դրա վկայությունն է բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի[21] կենտրոնացվածության բավականին ցածր գործակիցը: Զգալի նվազել է ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ցպահանջ պարտավորությունների կենտրոնացվածության ցուցանիշը:

Աղյուսակ 3. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշներ	31.12.05	31.12.06	31.12.07
Ընդհանուր ակտիվներ	0.08	0.08	0.08
Ընդհանուր պարտավորություններ	0.09	0.09	0.08
Ընդհանուր կապիտալ	0.06	0.07	0.07
Տնտեսությանը տրամադրված վարկեր	0.08	0.08	0.09
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ	0.10	0.10	0.09
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)	0.17	0.15	0.11

[21] Հերֆինդալ - Հիրշմանի գործակիցն ընդունում է 0-1 միջակայքում արժեքներ և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները նշանակում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

Խոշոր և մանր բանկերի միջև բևեռացվածությունը ևս նվազել է. տարեսկզբին խոշոր 10 բանկերին բաժին էր ընկնում համակարգի ակտիվների 80%-ը, իսկ տարեվերջին՝ 77%-ը: Խոշորագույն 4 բանկերի մասնաբաժինը համակարգում ևս նվազել է. տարեվերջին դրանց բաժին է ընկել ակտիվների 45%-ը և պարտավորությունների 46%-ը (տարեսկզբին՝ համապատասխանաբար 46%-ը և 49%-ը): Բևեռացվածության նվազումը ամենաակներևը արտահայտվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետային և ցպահանջ պարտավորություններում, ընդ որում՝ ինչպես խոշորագույն 4 բանկերի, այնպես և 10 բանկերի գծով:

Աղյուսակ 4. Բանկային հատվածի կենտրոնացվածության մակարդակը (%)

Ցուցանիշներ	31.12.05	31.12.06	31.12.07
Ընդհանուր ակտիվներ			
ԿԳ 4 (խոշորագույն չորս բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	47	46	45
ԿԳ 10 (խոշորագույն տասը բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	81	80	77
Ընդհանուր պարտավորություններ			
ԿԳ 4	50	49	46
ԿԳ 10	85	84	80
Ընդհանուր կապիտալ			
ԿԳ 4	35	38	41
ԿԳ 10	64	67	67
Տնտեսությանը տրամադրված վարկեր			
ԿԳ 4	43	47	50
ԿԳ 10	85	83	83
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ			
ԿԳ 4	51	49	41
ԿԳ 10	88	87	81
Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ցպահանջ պարտ-ներ (ներառյալ բանկային հաշիվները)			
ԿԳ 4	64	57	51
ԿԳ 10	86	85	81

ՀՀ բանկային համակարգի մրցունակության ընդհանուր մակարդակը գնահատելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից օգտագործվել է Փանզարի և Ռոսսի համատեղ մշակած մոդելը[22]: Փանզարի և Ռոսսի մոդելով դիտարկվել են ՀՀ բանկային համակարգի տոկոսային եկամտի վրա ծախսային գործոնների՝ աշխատավարձի գծով ծախսերի, հիմնական միջոցների և տոկոսային ծախսերի ազդեցությունները՝ օգտա-

[22] Փանզարի և Ռոսսի մոդելը հիմնված է մրցակցության, մենատիրական մրցակցության և մենաշնորհի վերաբերյալ տեսական մոդելների վրա: Ըստ մոդելի՝ մենաշնորհային շուկայում մուտքային գործոնային գների աճը հանգեցնում է սահմանային ծախսերի աճի, որը բերում է արդյունքների և ընդհանուր եկամուտների նվազման (քանի որ, մասնակիցները հակված են կրճատելու բարձր գներով մուտքային գործոնների ծեռքբերումը): Մրցակցային շուկայի պայմաններում, մուտքային գործոնային գների աճը հանգեցնում է սահմանային ծախսերի և եկամուտների նույն չափով աճի: Իսկ խմբատիրական մրցակցության պայմաններում մուտքային գների աճը հանգեցնում է եկամուտների ոչ համամասնական, ավելի փոքր չափով աճի:

գործելով ՀՀ բանկային համակարգի 2003-2007թթ. տվյալները: Տոկոսային եկամտի վրա ծախսային գործոնների ազդեցության գործակիցների գումարի հիման վրա ստացվող ցուցանիշի՝ H-վիճակագրի[23] արժեքը ՀՀ բանկային համակարգի համար ստացվել է 0.3, ինչը վկայում է, որ ՀՀ բանկային համակարգին բնորոշ են խմբատիրական մրցակցության տարրեր:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼԸ

Բանկային համակարգի կապիտալի աճի միտումները


2007 թվականի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 42.8%-ով (51.4 մլրդ դրամով) և կազմել 171.6 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճին հիմնականում նպաստել են բանկային համակարգի կողմից ապահովված շահույթը և կանոնադրական հիմնադրամի աճը:

Կանոնադրական հիմնադրամն ավելացել է 36.4 մլրդ դրամով, գլխավոր պահուստը՝ 1.2 մլրդ դրամով: Կանոնադրական հիմնադրամի աճի 5.8 մլրդ դրամը բաժին է ընկնում 2007 թվականի ընթացքում լիցենզավորված ՊրոԿրեդիտ բանկին, իսկ մնացյալ 30.6 մլրդ դրամը՝ 9 բանկերի: Կանոնադրական հիմնադրամի աճի գերակշիռ մասը համալրվել է արտաքին աղբյուրներից, որի արդյունքում բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամում ոչ ռեզիդենտների փայաբաժինը տարեսկզբի 48%-ից տարեվերջին հասել է 58%-ի:

Հաշվետու տարում համակարգի զուտ շահույթը կազմել է 20.8 մլրդ դրամ:

Գծապատկեր 1. Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը



1. Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ, 2. Գլխավոր պահուստ 3. Չբաշխված շահույթ (ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների), 4. Այլ


[23] *Փանգարի և Ռոսսի մոդելով հաշվարկվում է H-վիճակագիրը, որի արժեքը բնութագրում է շուկայի մրցակցային վիճակը. H-վիճակագրի արժեքի՝ 1-ին մոտ լինելու պարագայում շուկան բնութագրվում է որպես կատարյալ մրցակցային, 0<H<1 միջակայքը բնորոշ է խմբատիրական մրցակցությանը, իսկ 0-ից փոքր արժեքով H-վիճակագիր ունեցող շուկան մենաշնորհային է:*

Տարվա ընթացքում համակարգի ընդհանուր պարտավորությունների աճի տեմպը փոքր-ինչ գերազանցել է ընդհանուր կապիտալի աճի տեմպը, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը (լևերեջի գործակիցը) նվազել է 0.8 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 28.9%:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը

ՀՀ տարածքում գործող բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը բավականաչափ գերազանցել է նորմատիվի՝ պահանջվող 12% մակարդակը և 31.12.2007թ. դրությամբ կազմել է 30.1%: Տարվա ընթացքում մեղմացվել են իրացվելիության նորմատիվային պահանջները, որը թույլ տվեց, որ վարկերն աճեն ավելի արագ, քան բարձր իրացվելի ակտիվները և կապիտալը: Արդյունքում՝ ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը տարվա ընթացքում նվազել է 4.8 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Ընդհանուր կապիտալի համարժեքությունը ըստ բանկերի



Առևտրային բանկերի սեփականատերերը


Ըստ կազմակերպա-իրավական տեսակների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 22 առևտրային բանկերից 1-ը սահմանափակ պատասխանատվությամբ, 3-ը՝ բաց բաժնետիրական, 18-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ են:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մասնակիցներ են (բաժնետերեր, փայատերեր) 1599 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 80-ը՝ ոչ ռեզիդենտներ: Եթե բացառենք 3 բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող բանկերը, ապա 19 բանկերի մասնակիցները 92 ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնցից 38-ը՝ ոչ ռեզիդենտներ: Վեց բանկերում բաժնեմասերի 100%-ը տնօրինում է մեկ անձ (երկու ռեզիդենտ իրավաբանական անձինք, երեք ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք և մեկ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ), իսկ ևս յոթ բանկերում մեկ բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:

Բանկային համակարգի ներգրաված միջոցների աճի միտումները

2007 թվականի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն աճել են 46.6%-ով (188.5 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 592.9 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը գերազանցապես պայմանավորվել է դրամային պարտավորությունների աճով: Դրամային պարտավորություններն ավելացել են 72.2%-ով, իսկ արտարժութային պարտավորությունները՝ 26.5%-ով, ինչի արդյունքում դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը 7.7 տոկոսային կետով աճելով՝ տարեվերջին կազմել է 51.7%: Հատկանշական է, որ մինչ 2007 թվականը պարտավորությունների կազմում մշտապես գերակայել է արտարժույթով ներգրաված միջոցների տեսակարար կշիռը, և միայն 2007 թվականին, առաջին անգամ, ՀՀ դրամով ներգրաված միջոցների ծավալը գերազանցել է արտարժույթով ներգրաված միջոցների ծավալը: Չնայած արձանագրվել է դրամայնացման մակարդակի զգալի աճ, այնուամենայնիվ այն դեռևս բարձր մակարդակ չունի:

Գծապատկեր 3. Բանկային համակարգի պարտավորությունների աճի միտումները



Պարտավորությունների փաստացի աճը հիմնականում ապահովվել է ի հաշիվ ավանդների (98.9 մլրդ դրամով), բանկերի նկատմամբ պարտավորությունների (48.1 մլրդ դրամով) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների (31.8 մլրդ դրամով) աճի:

Բանկերի լորո թղթակցային հաշիվները ավելացել են 53.1%-ով (2.5 մլրդ դրամով): Տարեվերջին լորո հաշիվների 82%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտ բանկերին: Ոչ ռեզիդենտ բանկերի լորո թղթակցային հաշիվների 73%-ը բաժին է ընկնում Իրանում և 25%-ը՝ Ռուսաստանում գործող բանկերին:


Տարվա ընթացքում բանկային համակարգի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ընդհանուր միջոցներն ավելացել են 33.0%-ով (98.9 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 398.5 մլրդ դրամ:

Ինչպես նախորդ երկու տարիներին, 2007 թվականին նույնպես ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ընդհանուր ավանդների աճը ամբողջությամբ ապահովվել է ի հաշիվ դրամային ավանդների ավելացման. դրամային ավանդներն ավելացել են 76.5%-ով (99.9 մլրդ դրամով), իսկ արտարժութային ավանդները նվազել են 0.6%-ով (1.0 մլրդ դրամով): Վերջին տարիներին դրսևորվում է այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի կայուն արժևորման միտում, և տնտեսությունում հետզհետե ձևավորվում են ՀՀ դրամի կայունացման սպասումներ, ինչի արդյունքում արձանագրվում են դրամային ավանդների առաջանցիկ աճի միտումներ:

Հաշվետու տարում իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններն ավելացել են 38.9%-ով, որին նպաստել է ինչպես իրավաբանական անձ-հաճախորդների քանակի ավելացումը, այնպես էլ առանձին հաճախորդների հաշիվների խոշորացումը. իրավաբանական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 14.3%-ով (5.7 հազարով), իսկ վերջիններիս ընթացիկ հաշիվները՝ 25.5%-ով (14.2 հազարով):


Ֆիզիկական անձանց նկատմամբ ցպահանջ պարտավորություններն ավելացել են 15.5%-ով, որին նպաստել է ֆիզիկական անձ-հաճախորդների քանակի 22.8%-ով և հաշիվների՝ 24.3%-ով ավելացումը:

Գծապատկեր 4. Բանկային համակարգի ցպահանջ ավանդների աճի միտումները



Ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների քանակն ավելացել է 46.3%-ով, իրավաբանական անձանց ժամկետային հաշիվների քանակը նվազել է 8.6%-ով, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալներն աճել են 53.5%-ով, իրավաբանական անձանցը՝ 8.7%-ով: Սա փաստում է, որ և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց ավանդները խոշորացման որոշակի միտումներ են դրսևորել:


Գծապատկեր 5. Բանկային համակարգի ժամկետային ավանդների աճի միտումները



Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը

2007 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 92.4% (նախորդ տարի՝ 91.7%): Տարվա ընթացքում ցպահանջ պարտավորությունների աճի տեմպը (30.3% աճ) զիջել է ընդհանուր պարտավորությունների աճի տեմպը (46.6% աճ), ինչի արդյունքում, ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների բացառման դեպքում, ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ ավելացել է 7.7 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 56.6%: Տարեվերջին ընդհանուր պարտավորությունների կազմում ցպահանջ պարտավորությունների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) տեսակարար կշիռը նվազել է 4.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Բանկային թղթակցային հաշիվներ, 2. Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 3. Ցպահանջ պարտավորություններ, 4. Ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 6. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ, 7. Այլ պարտավորություններ

31.12.2007 թ. դրությամբ ներգրավված միջոցների 40%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ և այլ), 42%-ը՝ մինչև 1 տարի և 18%-ը՝ մեկ տարուց ավելի մարման ժամկետայնությամբ:

Առևտրային բանկերի հաճախորդները

2007 թվականի ընթացքում բանկային համակարգի կողմից սպասարկվող իրավաբանական և ֆիզիկական անձանց քանակն ավելացել է 22.3%-ով կամ 170.6 հազարով (հիմնականում ֆիզիկական անձանց աճի հաշվին) և տարեվերջին կազմել 933.9 հազար: 31.12.2007 թ. դրությամբ ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը կազմել է 888.5 հազար, իսկ իրավաբանական անձ-հաճախորդների քանակը՝ 45.4 հազար:


Տարվա ընթացքում բանկային հաշիվների քանակն ավելացել է 25.2%-ով և կազմել 1.1 միլիոն, որի 95%-ը՝ ընթացիկ և 5%-ը ժամկետային հաշիվներն են: Ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 24.4%-ով կամ 205.9 հազարով (հիմնականում ֆիզիկական անձանց հաշիվների աճի արդյունքում) և տարեվերջին կազմել է 1050.8 հազար: Ժամկետային հաշիվների քանակը ավելացել է 44.8%-ով կամ 16.6 հազարով (ամբողջովին ի հաշիվ ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների աճի) և տարեվերջին կազմել 53.6 հազար: Ավանդների երաշխավորման համակարգի ներդրումից հետո, վերջին տարիներին, նկատվում է ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների քանակի էական աճ, ինչը վկայում է, որ ավանդների երաշխավորման համակարգի գործունեությունը խթանում է ֆիզիկական անձանց մանրածավալ ավանդների աճը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների աճի միտումները


Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 45.7%-ով (239.9 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 764.5 մլրդ դրամ:

Գծապատկեր 7. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների միտումները



2007 թվականին ընդհանուր ակտիվների աճի 74.7%-ը բաժին է ընկել տնտեսությանը տրամադրված վարկերին: Տարվա ընթացքում արձանագրվել է տնտեսությանը տրամադրված վարկերի աննախադեպ՝ 78% աճ (179.1 մլրդ դրամ): Ընդհանուր ակտիվներում վարկերի տեսակարար կշիռը տարեսկզբի 43.8%-ից տարեվերջին հասել է 53.5%-ի:

Գծապատկեր 8. Բանկային համակարգի ակտիվների աճի միտումները



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր (ներառյալ՝ ռեպո համաձայնագրերը), 4. Վարկեր տնտեսությանը, 5. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 6. Հիմնական միջոցներ, 7. Այլ արժեթղթեր, 8. Լիզինգ, ֆակտորինգ, 9. Այլ ակտիվներ

ԿԲ-ում թղթակցային հաշիվներն ավելացել են 37.9%-ով (20.6 մլրդ դրամով), իսկ այլ բանկերում նոստրո թղթակցային հաշիվները նվազել են 9.2%-ով (4.1 մլրդ դրամով): Նոստրո թղթակցային հաշիվներն առանձնանում են կենտրոնացվածությամբ՝ ինչպես աշխարհագրական առումով, այնպես էլ ըստ ռեզիդենտայնության: Տարեվերջին թղթակցային հաշիվների 96.3%-ը տեղաբաշխված է եղել ոչ ռեզիդենտ բանկերում (նախորդ տարի՝ 97.4%-ը): ԱՄՆ բանկերում ներդրված է ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի 33%-ը, եվրոպական բանկերում՝ 41%-ը, Ռուսաստանի բանկերում՝ 11%-ը (31.12.2006թ. համապատասխանաբար՝ 53%, 39% և 5%) և այլ երկրների բանկերում՝ 15%-ը:

Պետական արժեթղթերում ներդրումների ծավալները (ներառյալ ռեպո համաձայնագրերը) ավելացել են 16.1%-ով կամ 13.2 մլրդ դրամով և տարեվերջին կազմել են 95.1 մլրդ դրամ: 2007 թվականին պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը ավելացել է՝ կազմելով 6.02% (նախորդ տարի՝ 5.12%), պետական գանձապետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերինը (ներառյալ՝ մասնակի մարումներով) դարձյալ աճել է՝ կազմելով 6.78% (նախորդ տարի՝ 6.11%): ԿԲ կողմից թողարկված պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է 6.27% (նախորդ տարի՝ 5.46%): Պարտատոմսերում բանկային համակարգի կողմից կատարված ներդրումների աճի տեմպը զիջել է նախորդ տարվա աճի տեմպը՝ հիմնականում պայմանավորված 2007 թվականին իրացվելիության նորմատիվային պահանջների մեղմացման հանգամանքով: Վերջինս թույլ տվեց բանկերին, ի հաշիվ բարձր իրացվելի ակտիվների ցածրատեմպ աճի, ապահովել վարկերի ծավալների կտրուկ աճ:


Այլ արժեթղթերում ներդրումների ծավալները աճել են 1.5 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 2.7 մլրդ դրամ:


Բանկային համակարգի հիմնական միջոցները տարվա ընթացքում ավելացել են 38.6%-ով և տարեվերջին կազմել 42.5 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 24.8%-ը: Հիմնական միջոցների մեծությունը բոլոր բանկերում զիջել է ընդհանուր կապիտալի մեծությանը, ինչը վկայում է, որ բանկերի հիմնական միջոցները ձեռք չեն բերվել փոխառու միջոցների հաշվին:

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների կառուցվածքը

31.12.2007 թվականի դրությամբ բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է 76.6% (նախորդ տարի՝ 73.3%): Առանց ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվների, մնացյալ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 6.7 տոկոսային կետով՝ կազմելով 72.6%: Նշվածը պայմանավորված է հաշվետու տարում վարկերի արագատեմպ աճով:

Գծապատկեր 9. Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը





1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր (ներառյալ՝ ռեպո համաձայնագրերը), 4. Վարկեր տնտեսությանը, 5. Պահանջներ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 6. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 7. Հիմնական միջոցներ, 8. Այլ արժեթղթեր, 9. Լիզինգ, ֆակտորինգ, 10. Այլ ակտիվներ

Տարվա ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերի աճի տեմպը գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, որը հանգեցրել է ակտիվների կազմում վարկերի տեսակարար կշռի 9.7 տոկոսային կետով աճի:

Համակարգի կողմից տեղաբաշխված միջոցների ժամկետայնությունը 2007 թվականին երկարել է. 31.12.2007 թ. դրությամբ տեղաբաշխված միջոցների 21%-ը ցպահանջ է, 44%-ը՝ 1-ից 12 ամիս ժամկետայնությամբ, 35%-ը՝ մեկ տարուց ավելի և անժամկետ (նախորդ տարի՝ համապատասխանաբար 26%, 47% և 27%):

Բանկային համակարգի վարկային ներդրումները

Տարվա ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումներն[24] ավելացել են 73.2%-ով (189.7 մլրդ դրամով) և կազմել 449.0 մլրդ դրամ: Դրամով վարկային ներդրումներն ավելացել են 117.3%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 33.6%-ով, որի արդյունքում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 12.0 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 59.3%:


Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները նվազել են 8.6%-ով և կազմել 14.5 մլրդ դրամ:

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 78.5%-ով և կազմել 434.5 մլրդ դրամ:

2007 թվականին տնտեսության բոլոր ճյուղերում ավելացել են վարկային ներդրումների ծավալները: Հատկապես զգալի է հիփոթեքային վարկերի աճը՝ 124.5%-ով (29.6 մլրդ դրամով): Վարկերի մեծածավալ աճ է արձանագրվել նաև սպառողական՝ 80.7% (55.2 մլրդ դրամով), առևտրի՝ 75.1% (37.2 մլրդ դրամով), շինարարության՝ 90.9% (10.5 մլրդ դրամով), հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներում՝ 71.8% (8.3 մլրդ դրամով):

Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքում 2007 թվականին արձանագրվել է հիփոթեքային վարկերի տեսակարար կշռի զգալի աճ: Բանկային համակարգի վարկերը հիմնականում տեղաբաշխվել են սպառողական, առևտրի և արդյունաբերության ոլորտներում:

Գծապատկեր 10. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9.Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

[24] *Վարկային ներդրումներում ներառվում են տնտեսության վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված վարկերն ու ավանդները:*

Բանկային համակարգի՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը, ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման, հիմնականում ի հաշիվ ցածր տեսակարար կշիռ ունեցող հիփոթեքային վարկերի կտրուկ աճի, նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ նվազել է (0.003-ով) և կազմել 0.165, ինչը ՀՀ վարկային շուկայի համար գնահատվում է ոչ կենտրոնացված: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, կազմել 0.24, ինչը վկայում է, որ մի շարք բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածությունը համեմատաբար բարձր մակարդակ ունի:

Հաշվետու տարում վարկային ներդրումներում երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշիռը աճել է 8.3 տոկոսային կետով և կազմել 66.2%: Երկարաժամկետ վարկերի պահանջարկի աճի պայմաններում առավելագույնս կարևորվում է «երկար փողեր» ստեղծող ինստիտուտների (ապահովագրական, մասնավոր կենսաթոշակային համակարգ) կայացման և հզորացման անհրաժեշտությունը:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող երկարաժամկետ նպատակային վարկերը մասամբ օժանդակում են տնտեսությունում ձևավորված երկարաժամկետ վարկերի պահանջարկի բավարարմանը: ՀՀ տարածքում գործող 13 բանկեր և 3 վարկային կազմակերպություններ սպասարկում են.

- ✓ Գերմանա-հայկական հիմնադրամի,
- ✓ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի,
- ✓ Համաշխարհային բանկի գյուղատնտեսության բարեփոխումների աջակցման,
- ✓ ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի մարկետինգի աջակցության,
- ✓ Համաշխարհային բանկի գյուղական ձեռնարկատիրության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման,
- ✓ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, Միգրացիայի միջազգային կազմակերպության,
- ✓ Միջազգային ֆինանսական կորպորացիայի «փոքր և միջին բիզնեսի զարգացման» և «հիփոթեքային վարկավորման» ծրագրերի,
- ✓ Կոմերց Բանկի,
- ✓ Համաշխարհային բանկի միկրո- և փոքր բիզնեսի և
- ✓ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տնտեսության գրեթե բոլոր ոլորտներով իրականացվող վարկային ծրագրերը:

31.12.2007 թ. դրությամբ ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններ են հանդիսացել առևտուրը՝ ընդհանուր վարկավորման ծավալի 36%-ը, գյուղատնտեսությունը՝ 17%-ը, սպառողականը՝ 12%-ը, սպասարկման ոլորտը՝ 9%-ը և հիփոթեքայինը՝ 5%-ը:


Նշված ծրագրերի շրջանակներում բանկերի կողմից տրամադրված վարկերը հաշվետու տարում աճել են 37%-ով և տարեվերջին կազմել 38 մլրդ դրամ: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի վերադարձելիության աստիճանը միշտ եղել է շատ բարձր. 31.12.2007 թվականի դրությամբ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 0.3%: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի մոտ 78%-ը մեկ տարուց ավելի ժամկետով է, 18%-ը՝ 6 ամսից մեկ տարի ժամկետով և 2%-ը՝ մինչև 6 ամիս ժամկետով:

Վարկային պորտֆելի որակը

2007 թվականի ընթացքում չաշխատող (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի) վարկերի և դեբիտորական պարտքերի մեծությունը աճել է 56.3%-ով և կազմել 11.3 մլրդ դրամ, իսկ ստանդարտ ակտիվների մեծությունը՝ 61.1%-ով և կազմել 469.0 մլրդ դրամ: Արդյունքում՝ ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի (ներառյալ թղթակցային հաշիվները) տեսակարար կշիռը ավելացել է 0.08 տոկոսային կետով և կազմել 97.65%:

Տարեվերջին չաշխատող ակտիվների 0.7%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 99.3%-ը՝ ռեզիդենտներին: Ռեզիդենտների վարկային ներդրումներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է եղել շինարարության ճյուղին տրամադրած վարկերում՝ 6.3%, հանրային սննդին և սպասարկման այլ ոլորտներին տրամադրված վարկերում՝ 5.5%: Չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ցածր է եղել տրանսպորտի ու կապի, առևտրի և գյուղատնտեսության ճյուղերում՝ 0.1-ից 1.8%-ի միջակայքում:

Գծապատկեր 11. Բանկային համակարգի չաշխատող ակտիվների աճի միտումները



1. Հսկվող դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 2. Ոչ ստանդարտ դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 3. Կասկածելի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


Բանկային համակարգի եկամտաբերությունը

2007 թվականին բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 20.8 մլրդ դրամ: Տարվա ընթացքում 20 բանկեր աշխատել են շահույթով, որոնց ընդհանուր զուտ շահույթի մեծությունը կազմել է 21.2 մլրդ դրամ:

Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ նվազել են: Բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (զուտ շահույթի հարաբերությունն ակտիվների միջին տարեկան մեծությանը) կազմել է 3.4%, իսկ ըստ կապիտալի (զուտ շահույթի հարաբերու-

թյունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 14.8%: Նույն ցուցանիշները 2006 թվականին համապատասխանաբար կազմել են 3.6% և 15.9%: Բանկային համակարգի զուտ գործառնական մարժան[25] հաշվետու տարում ավելացել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 5.0%:

Գծապատկեր 12. Շահութաբերության ցուցանիշները՝ ըստ 20 շահութաբեր բանկերի



Չնայած շահութաբեր 20 բանկերի շահույթի՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.01-ով և կազմել 0.10 միավոր, այնուամենայնիվ վերջինս բնութագրում է համակարգի շահույթի կենտրոնացվածության ցածր մակարդակ:

Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը

2007 թվականին բանկային համակարգի զուտ շահույթի մեծությունը գերազանցել է նախորդ տարվա շահույթի մեծությունը 23.6%-ով (4.0 մլրդ դրամով), ինչը պայմանավորվել է վարկերի արագատեմպ աճի արդյունքում տոկոսային եկամուտների զգալի աճով: Հաշվետու տարում գրեթե բոլոր բանկերը զգալի ավելացրել են վարկային ներդրումների ծավալները, և վարկային շուկայում պահպանվել է միջբանկային մրցակցությունը:

Նախորդ տարվա համեմատ, 2007 թվականին համախառն եկամուտներն ավելացել են 32.0%-ով (27.7 մլրդ դրամով), իսկ համախառն ծախսերը՝ 34.4%-ով (22.5 մլրդ դրամով):


Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտներն ավելացել են 40.9%-ով, ոչ տոկոսային եկամուտները՝ 27.2%-ով, և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը ավելացել է 19.4%-ով:

---

[25] Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների գումարի և ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերությանը:


Ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային ծախսերն ավելացել են 46.6%-ով, ոչ տոկոսային ծախսերը՝ 35.3%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումները՝ 26.9%-ով:

Գծապատկեր 13. Բանկային համակարգի ծախսերը և եկամուտները



Եկամուտների և ծախսերի վերոնշված աճի արդյունքում համախառն եկամտի կազմում 3.3 տոկոսային կետով աճել են տոկոսային եկամտի, իսկ համախառն ծախսերում՝ 1.7 տոկոսային կետով՝ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները:

Գծապատկեր 14. Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը



Բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճը առավելապես պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված եկամուտների 42.6% աճով: Վարկերից ստացված տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում ավելացել է 1 տոկոսային կետով՝ կազմելով 80.4%:

Ոչ տոկոսային եկամուտների աճի հիմնական պատճառը միջնորդավճարներից ստացված եկամուտների 28.6%-ով և արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտների 34.9%-ով աճն է: Ոչ տոկոսային եկամուտների 50.8%-ը բաժին է ընկել միջնորդավճարներից ստացված եկամուտներին, 31.2%-ը՝ արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտներին:

Տոկոսային ծախսերի աճը հիմնականում պայմանավորվել է ժամկետային ավանդների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերի 48.7% աճով, որին բաժին է ընկնում տոկոսային ծախսերի 54.1%-ը:

Ոչ տոկոսային ծախսերի աճը հիմնականում հաշվեգրված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 37.9% աճի արդյունք է, որը կազմում է ոչ տոկոսային ծախսերի 45.3%-ը: Հատկանշական է, որ բանկային համակարգի աշխատողների թվաքանակն ավելացել է 20.4%-ով՝ վկայելով, որ բանկային համակարգի միջին աշխատավարձի բարձրացումը 2007 թվականին շարունակվել է:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

ՀՀ ԿԲ վերահսկողության փորձագիտական գնահատումների համաձայն՝ ՀՀ բանկային համակարգի ռիսկերը կառավարելի շրջանակներում են: 2007 թվականին բանկային համակարգում արձանագրվել է վարկային ներդրումների կտրուկ աճ: Նման զարգացումների պայմաններում առավել կարևորվում է վարկային ռիսկի պատշաճ կառավարումը:


Վարկային ռիսկ

Բանկային գործում վարկային ռիսկի կառավարմանը մշտապես մեծ ուշադրություն է դարձվել: 2007 թվականին ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքում «հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» դասի ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի (այսուհետ՝ չաշխատող ակտիվների) տեսակարար կշիռը նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 2.35%: Վերջինս, օտարերկրյա բանկային համակարգերի նույն ցուցանիշի համեմատ, համարվում է բավականին ցածր՝ վկայելով ՀՀ-ում վարկային ռիսկի ցածր մակարդակի մասին: Չաշխատող ակտիվների մեծությունը կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 7.6%-ը (նախորդ տարի՝ 6.9%): Հատկանշական է, որ եթե չաշխատող ակտիվների (11.3 մլրդ դրամ) մեծությունից հանենք ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստ մուտքագրված (2.4 մլրդ դրամ) գումարը, ապա մնացյալ՝ ծածկույթ չունեցող չաշխատող ակտիվների մեծությունը կկազմի նորմատիվային կապիտալի 6.0%-ը: Այսպես, եթե կառուցվի սթրես-սցենար, ըստ որի՝ դասակարգված ակտիվներն ամբողջությամբ դուրս գրվեն (անտեսվում է գրավադրված գույքի արժեքը), ապա բանկային համակարգի վնասը չի գերազանցի նորմատիվային կապիտալի 6.0%-ը:

Հատկանշական է, որ 2007 թվականին վարկերի կտրուկ աճը չի հանգեցրել ակտիվների որակի էական վատացման: Տարվա ընթացքում զուտ մասհանումների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է ընդամենը 0.6%:

31.12.2007 թ. դրությամբ բանկային համակարգի՝ մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը կազմում է նորմատիվային կապիտալի 12.4%-ը, բոլոր խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 88.1%-ը, բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 1.6%-ը, բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 5.3%-ը: Վերոնշյալ ցուցանիշները վկայում են բանկային համակարգում ռիսկերի կառավարելիության պատշաճ մակարդակի մասին: Միաժամանակ, ըստ առանձին բանկերի, այս ռիսկերի գծով կտրուկ շեղումներ չկան, և դրանք կառավարելի շրջանակներում են:

Գծապատկեր 15. Նորմատիվային ցուցանիշները ըստ բանկերի



Արտարժութային ռիսկ

2007 թվականին այլ արժույթների նկատմամբ դարձյալ դրսևորվել են ՀՀ դրամի փոխարժեքի բավականին մեծ տատանումներ: 2007 թվականին ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ միջին տարեկան արժևորումը կազմել է 17.8%, իսկ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 16.3%:

Այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով 2007 թվականին բանկային համակարգն արտարժույթի վերագնահատման արդյունքում ընդհանուր առմամբ ունեցել է 177 մլն դրամ վնաս՝ բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.1%-ը (նախորդ տարի վնասը կազմել է կապիտալի 0.3%-ը): Արտարժույթի վերագնահատման արդյունքում վնաս է ունեցել 11 բանկ, իսկ եկամուտ՝ 11 բանկ: Հատկանշական է, որ 2007 թվականին բանկային համակարգն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում ապահովել է 8.6 մլրդ դրամ եկամուտ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 35%-ով): 2007 թվականի ընթացքում նորմատիվային դաշտի փոփոխությունների արդյունքում արտարժութային դիրքերի նորմատիվային պահանջները հանվեցին: Բազել-2 համաձայնագրին անդամակցելու առնչությամբ 2008 թվականի հունվարից կապիտալի համարժեքության նորմատիվը փոփոխվելու է՝ ներառելով նաև արտարժութային ռիսկի գործոնը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի առաջին խմբի


համախառն արտարժութային դիրքը կազմել է 9.4%, իսկ երկրորդ խմբի զուտ դիրքը՝ 2.7% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 4.4% և 1.1%):

Արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 31.12.2007 թ. դրությամբ բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում մեկօրյա հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն գերազանցի 39 մլն դրամը: Միաժամանակ, եթե ենթադրվի, որ 2008 թվականին արտարժութային դիրքերը չեն փոփոխվի, ապա դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում 2008 թվականի հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն գերազանցի 740 մլն դրամ սահմանաչափը[26]:

Իրացվելիության ռիսկ

2007 թվականին պահպանվել են նախորդ տարիներից ձևավորված միտումները. վարկային ներդրումների աճի տեմպը դարձյալ գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, ինչի արդյունքում բարձր իրացվելի ակտիվների աճի տեմպը զիջել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը: Մեղմացվել են ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային պահանջների սահմանաչափերը և, արդյունքում, տնտեսությանը տրամադրած վարկերն ավելացել են 78%-ով, իսկ բարձր իրացվելի ակտիվները՝ 16%-ով: 31.12.2007 թ. դրությամբ բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների ծավալը կազմել է 242.7 մլրդ դրամ: Բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության ցուցանիշը նվազելով 7.6 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմել է 33.7%, ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 7.9 տոկոսային կետով և տարեվերջին կազմել է 98.2%: Ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները նորմատիվային պահանջվող մակարդակից բարձր են և իրացվելիության խնդրի առաջացման վտանգ չեն պարունակում: 31.12.2007թ. դրությամբ որևէ բանկում իրացվելիության նորմատիվային պահանջների խախտում չի արձանագրվել:

Գծապատկեր 16. Իրացվելիության նորմատիվային ցուցանիշները ըստ բանկերի



[26] *Հաշվարկների հիմքում 31.12.2007 թ. դրությամբ բանկերի կողմից ներկայացված արտարժութային բաց դիրքերն են, և փաստացի վնասի մեծությունը կարող է փոքր-ինչ ավելին լինել՝ կախված 2008 թվականի ընթացքում արտարժութային բաց դիրքերի փոփոխությունների աստիճանից:*

Իրացվելիության տեսանկյունից դիտարկվում է նաև բանկային համակարգի պարտավորությունների կառուցվածքը՝ ըստ կենտրոնացումների. 2007 թվականին ընդհանուր պարտավորություններում «խոշոր» պարտավորությունների[27] տեսակարար կշիռը աճել է 2.9 տոկոսային կետով և կազմել 30.4%:

Գնային ռիսկ

Համեմատաբար ռիսկային՝ ոչ պետական արժեթղթերում բանկային համակարգի կողմից իրականացված ներդրումները կազմել են 2.7 մլրդ դրամ՝ նորմատիվային կապիտալի 1.8%-ը, և նշված արժեթղթերի գների նույնիսկ կտրուկ տատանումները բանկային համակարգին էական վնաս չեն պատճառի:

Հիմնական միջոցների գների ոչ կտրուկ տատանումները ևս խոշոր վնասների չեն հանգեցնի: Հիմնական միջոցների շուկայական գների, օրինակ՝ 20%-ով նվազման դեպքում անշարժ գույքի վերագնահատման արդյունքում համակարգի կորուստը կկազմի նորմատիվային կապիտալի 5.8%-ը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի հիմնական միջոցների մեծությունը կազմել է 42.5 մլրդ դրամ, իսկ սեփականություն հանդիսացող՝ բռնագանձված անշարժ գույքի մեծությունը՝ 608 մլն դրամ: Գնահատվել է նաև անշարժ գույքի գների նվազման ազդեցությունը վարկային պորտֆելի որակի վրա, չնայած ըստ փորձագիտական գնահատումների, 2008 թվականին ՀՀ անշարժ գույքի շուկայում գների կտրուկ անկման հավանականությունը համարվում է ցածր: Ըստ սթրես-սցենարների հաշվարկների՝ անշարժ գույքի շուկայական արժեքի 30% արժեզրկման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[28] 50%-ի չվերադարձման արդյունքում բանկային համակարգի վնասը կկազմի նորմատիվային ընդհանուր կապիտալի 9.9%-ը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը բանկային համակարգում գտնվում է կառավարելի շրջանակներում, քանի որ ակտիվների և պարտավորությունների միջին ժամկետայնությունը կարճ է (մոտ 1 տարի), և համակարգը շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների ժամանակ կարող է արագ արձագանքել ու վերանայել տոկոսադրույքները: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման դյուրացիայի մեթոդիկայով կատարված գնահատումները ցույց են տալիս, որ ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունների ճեղքվածքը փոքր է (մոտ կես տարի), ինչը վկայում է, որ շուկայական տոկոսադրույքների համամասնորեն տատանումները զգալի ազդեցություն չեն թողնի բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքի վրա: Համաձայն դյուրացիայի մեթոդով իրականացված հաշվարկների՝ ընդհանուր շուկայական տոկոսադրույքների (ակտիվների և պարտավորությունների) 1%-ով նվազման դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կավելանա 1.7 մլրդ դրամով:

ՀՀ բանկային համակարգում, ընդհանուր առմամբ, տոկոսադրույքի ռիսկը թեև բավականաչափ զսպված է, սակայն վերջինիս կառավարման գործընթացը կարևորվում է՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ զուտ տոկոսային եկամուտները կազմում են համախառն եկամուտների 37%-ը: 2007 թվականին վարկերի ծավալների կտրուկ աճի արդյունքում բանկային համակարգի զուտ տոկոսային եկամուտները նախորդ տարվա նույն մեծությունը գերազանցել են 39%-ով:

---

[27] Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք, առանձին վերցրած, գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:

[28] Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց, առանձին վերցրած, մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30%-ով արժեզրկված արժեքները:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ 2007 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2007 թվականի ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել չորս ընկերություն՝ «Բլեսս» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն, «Ջի էֆ Սի Ջեներալ Ֆայնենշլ ընդ Քրեդիթ Քոմփանի» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, «Ավանգարդ Ինվեստ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվը: Տարվա ընթացքում վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի քանակն ավելացել է 28-ով: 31.12.2007 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են քսանմեկ վարկային կազմակերպություններ (քառասուն մասնաճյուղերով), որոնցից երկուսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և տասնչորսը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություն:

2007 թվականի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների աճի միտումները ավելի քան կրկնակի գերազանցել են բանկային համակարգի ակտիվների աճի միտումները, ընդ որում՝ 31.12.2007 թ. դրությամբ վարկային կազմակերպությունների ակտիվների մեծությունը կազմել է բանկային համակարգի ակտիվների 5.7%-ը (տարեսկզբին՝ 3.9%): Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի միջին շուկայական տոկոսադրույքները, որպես կանոն, փոքր-ինչ գերազանցում են բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի միջին շուկայական տոկոսադրույքները, սակայն բնակչության լայն խավը օգտվում է նաև վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային ծառայություններից՝ դրանք համարելով ավելի մատչելի: Վարկային կազմակերպությունների վարկավորման ոլորտը ընդգրկում է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը: Որոշ վարկային կազմակերպություններ մասնագիտացած են հիփոթեքային վարկավորման շուկայում: Ինչպես և բանկային համակարգը, վարկային կազմակերպությունները ևս հաշվետու տարում վարկավորման ծավալների խոշոր աճ են ապահովել հիփոթեքային և սպառողական վարկերի ոլորտում:


Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 47.2%-ով (4.0 մլրդ դրամով): Կապիտալի աճը պայմանավորվել է ընթացիկ տարվա շահույթով և կանոնադրական հիմնադրամի աճով: Տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամը համալրել են նոր լիցենզավորված չորս, ինչպես նաև արդեն գործող յոթ վարկային կազմակերպություններ՝ ընդհանուր 2.5 մլրդ դրամի չափով: Վարկային կազմակերպությունների ընթացիկ տարվա չբաշխված շահույթը կազմել է 1.8 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 5.1%, իսկ ըստ կապիտալի՝ 17.5%: Տարեվերջին կապիտալը կազմել է 12.4 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 7.2%-ը (տարեսկզբին՝ 7.0%):

Պարտավորություններն ավելացել են 154.8%-ով (18.8 մլրդ դրամով) և կազմել 30.9 մլրդ դրամ: Աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ իրավաբանական անձանց փոխառությունների (3.8 մլրդ դրամ), բանկերի նկատմամբ պարտավորությունների (3.4 մլրդ դրամ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների (2.5 մլրդ դրամ) աճի:

Իրավաբանական և ֆիզիկական անձ մասնակիցներից փոխառությունների ծավալը տարեվերջին կազմել է 9.9 մլրդ դրամ: Բանկերից (գրեթե ամբողջությամբ ոչ ռեզիդենտ) և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռք բերած միջոցների մեծությունը տարեվերջին կազմել է 19.0 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը տարվա ընթացքում աճել է 110.6%-ով (22.8 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 43.4 մլրդ դրամ: Ակտիվների կազմում զգալի՝ 134%-ով, ավելացել են վարկային ներդրումները (ներառյալ լիզինգը) և կազմել են 38.7 մլրդ դրամ: Տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է տրամադրված վարկերի ծավալների աճ:

Գծապատկեր 17. Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Ամենաբարձրը հիփոթեքային և շինարարության ճյուղին տրամադրված վարկերի ծավալների աճն էր, ինչի արդյունքում վերջիններիս տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում ավելացել են:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ

ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերությունները

2007 թվականի ընթացքում դադարեցվել է «Միկա», «Պրայվիտ Ինշուրանս» ՓԲԸ-ների, «Ֆինտրաստ» ապահովագրական ԲԲԸ-ի, «Ալիանց Ֆլեշ», «էյ էյչ էյ Ռոյալ Ինշուրանս», «Գրանդ» ապահովագրական ՍՊԸ-ների լիցենզիաների գործողությունը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ապահովագրական գործունեության լիցենզիա է ստացել «Այ էս Ջի» ապահովագրական ՍՊԸ-ն[29]: 31.12.2007թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների թիվը կազմել է 10[30], իսկ մասնաճյուղերի թիվը՝ 5:

[29] *«Այ էս Ջի» ապահովագրական ՍՊԸ-ի գրանցման ու լիցենզավորման մասին որոշումն ընդունվել է 25.12.2007 թվականին:*

[30] *Ցուցանիշներում ներառվել են «Առաջին ապահովագրական» ՍՊԸ-ի 2007 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությունների ցուցանիշները, քանի որ տարեկան հաշվետվությունները դեռ չեն ներկայացվել ՀՀ ԿԲ:*

Կենտրոնացվածությունը ՀՀ ապահովագրական համակարգում

Ապահովագրական համակարգը բնութագրող կարևորագույն ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը վերջին տարիներին առանձնակի փոփոխություններ չի կրել:

Աղյուսակ 5. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշներ	31.12.2005	31.12.2006	31.12.2007
Ակտիվներ	0.08	0.08	0.12
Պարտավորություններ	0.05	0.07	0.10
Կապիտալ	0.16	0.16	0.18
Ապահովագրական գումարներ	0.38	0.36	0.31
Ապահովագրավճարներ	0.09	0.13	0.17

Ապահովագրական ընկերությունների միջև բևեռացվածությանը հաշվետու տարվա վերջի դրությամբ ավելի մեծ է եղել, քան 2006 թվականի վերջին: Ընդ որում՝ կենտրոնացվածության մակարդակը մեծ է ինչպես խոշորագույն 3 ապահովագրական ընկերությունների, այնպես էլ խոշորագույն 7 ապահովագրական ընկերությունների գծով (բացառությամբ՝ ապահովագրական գումարների):


Աղյուսակ 6. Ապահովագրական համակարգի կենտրոնացվածության մակարդակը (%)

	31.12.2005	31.12.2006	31.12.2007
Ակտիվներ			
ԿԳ 3 (խոշորագույն **երեք** ապահովագրական ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	42	36	45
ԿԳ 7 (խոշորագույն **յոթ** ապահովագրական ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	64	64	82
Պարտավորություններ			
ԿԳ 3	62	58	60
ԿԳ 7	86	87	96
Կապիտալ			
ԿԳ 3	22	28	37
ԿԳ 7	42	57	67
Ապահովագրական գումարներ			
ԿԳ 3	83	92	86
ԿԳ 7	96	97	97
Ապահովագրավճարներ			
ԿԳ 3	42	52	63
ԿԳ 7	72	80	95

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼԸ

Թեև 2007 թվականի սկզբին ապահովագրական շուկայում գործող 15 ընկերություններից տարվա ընթացքում դուրս են մղվել վեց ապահովագրական ընկերություն, և լիցենզավորվել է միայն մեկը, այնուամենայնիվ ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալը նվազել է ընդամենը 4.7%-ով՝ կազմելով 5.7 մլրդ դրամ: Ընդ որում՝ ընդհանուր կապիտալի նվազումը հիմնականում պայմանավորվել է կանոնադրական կապիտալի 9.8%-ով նվազմամբ: Հարկ է նշել, որ ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը 2007 թվականի վերջի դրությամբ կազմել է 679.4 մլն դրամ (31.12.2006 թվականի դրությամբ՝ 192.6 մլն դրամ):

Գծապատկեր 18. Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը




1. Կանոնադրական կապիտալ,
2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ,
3. Ընդհանուր կապիտալի այլ տարրեր

Ապահովագրական ընկերությունների վճարունակությունը

Ապահովագրական ընկերությունների վճարունակությունը ապահովագրական շուկայի զարգացման ներկայիս փուլում մտահոգություն չի առաջացնում. ապահովագրական համակարգի վճարունակության պահանջվող սահմանաչափը ոչ միայն չի գերազանցում ապահովագրական համակարգի նորմատիվային ընդհանուր կապիտալի 100%-ը, այլև կազմում է վերջինիս ընդամենը 11.6%-ը: Վճարունակության սահմանաչափի նշված մակարդակը վկայում է համակարգի հուսալիության մասին, սակայն, մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ ապահովագրական ընկերություններն ամբողջությամբ չեն օգտագործում իրենց ներուժը:

Գծապատկեր 19. Վճարունակության պահանջվող սահմանաչափի հարաբերությունը նորմատիվային ընդհանուր կապիտալին՝ ըստ ապահովագրական ընկերությունների, 2007 թ. վերջի դրությամբ [31]



Ինչպես երևում է գծապատկերից, նույնիսկ վճարունակության ամենամեծ սահմանաչափը (1) չի գերազանցում ընդհանուր կապիտալի 30%-ը, ինչը նշանակում է՝ տվյալ ընկերությունը, այլ հավասար պայմաններում, մոտ երեք անգամ ավելի ապահովագրավճարներ հավաքագրելով էլ չի վտանգի իր վճարունակությունը:


ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Ապահովագրական ընկերությունների ակտիվները 2007 թվականի ընթացքում ավելացել են 1.3%-ով և 31.12.2007 թվականի դրությամբ կազմել 8.8 մլրդ դրամ:


Ապահովագրական ընկերությունների ակտիվների կառուցվածքն առանձնակի փոփոխությունների չի ենթարկվել: Տարեվերջի դրությամբ ընդհանուր ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել բանկային հաշիվները (15.4%), ուղղակի ապահովագրության գծով ապահովադիրներից ստացվելիք գումարները (10.6%), ավանդները բանկերում[32] (40.6%) և պետական արժեթղթերը (ներառյալ՝ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերը) (11.7%): 2006 թվականի վերջի դրությամբ ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է 24.0%:

[31] *Բոլոր ապահովագրական ընկերությունների վճարունակության պահանջվող սահմանաչափի մեծությունը հավասար է եղել ապահովագրավճարների մեթոդով հաշվարկվող վճարունակության սահմանաչափի մեծությանը:*
[32] *Ավանդների 93.3%-ը բաժին է ընկնում ռեզիդենտ բանկերում ներդրված ընթացիկ ավանդներին:*

Գծապատկեր 20. 31.12.2007 թ. դրությամբ գործող ապահովագրական ընկերությունների ակտիվների աճի միտումները



Գծապատկեր 21. Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը




Քանի որ ներկայումս ապահովագրական ընկերությունները նախընտրում են իրենց ակտիվները տեղաբաշխել հիմնականում բարձր իրացվելի ակտիվներում, իսկ ապահովագրական հատուցումների վճարումները մեծածավալ չեն, ապահովագրական ընկերությունները, ըստ էության, իրացվելիության խնդիր չունեն: Դա է վկայում նաև այն փաստը, որ ապահովագրական ոչ մի ընկերություն 31.12.2007 թ. դրությամբ իրացվելիության նորմատիվը չի խախտել:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները հաշվետու տարվա ընթացքում աճել են 14.6%-ով կամ 395.7 մլն դրամով՝ 31.12.2007 թվականի դրությամբ կազմելով 3.1 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորվել է ապահովագրական պահուստների 37.9% աճով: 69.8%-ով նվազել է վճարվելիք հատուցումների մեծությունն ուղղակի ապահովագրության գծով՝ 2007 թվականի վերջին կազմելով 22.8 մլն դրամ:

Գծապատկեր 22. Ապահովագրական համակարգի պարտավորությունների կառուցվածքը



Ինչպես և ակտիվների կառուցվածքում, պարտավորությունների կառուցվածքում ևս զգալի փոփոխություններ չեն արձանագրվել: 2007 թվականի վերջի դրությամբ պարտավորությունների 89.0%-ը բաժին է ընկել ապահովագրական պահուստներին (53.9%) և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներին (35.1%):


ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ապահովագրական ընկերությունների համար 2007 թվականը եղել է բավականին շահութաբեր տարի. համակարգն ապահովել է 743.5 մլն դրամի զուտ շահույթ, ինչը 395.0 մլն դրամով կամ 113.3%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Ընդ որում՝ միայն մեկ ապահովագրական ընկերություն է 2007 թվականն ամփոփել վնասով (-40.7 մլն դրամ):

Ապահովագրական ընկերությունների շահութաբերությունն ըստ կապիտալի (զուտ շահույթ/վնաս հարաբերությունը ընդհանուր կապիտալի միջին մեծությանը[33]) 2007 թվականին կազմել է 6.4%՝ 2006 թվականի 3.3%-ի փոխարեն:

Ապահովագրական ընկերությունների շահութաբերությունն ըստ ակտիվների (զուտ շահույթ/վնաս հարաբերությունը ակտիվների միջին մեծությանը[34]) 2007 թվականի համար կազմել է 8.5%՝ 2006 թվականի 3.8%-ի փոխարեն:

Գծապատկեր 23. 31.12.2007 թ. դրությամբ գործող 10 ապահովագրական ընկերությունների շահութաբերության ցուցանիշները




[33] *Ընդհանուր կապիտալի միջին մեծությունը հաշվարկելիս կապիտալի՝ տարեսկզբի և տարեվերջի մեծությունների հանրագումարը հարաբերվում է երկուսի:*

[34] *Ակտիվների միջին մեծությունը հաշվարկելիս ակտիվների տարեսկզբի և տարեվերջի մեծությունների հանրագումարը հարաբերվում է երկուսի:*

2007 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 5.0 մլրդ դրամ (2006 թվականին՝ 5.9 մլրդ դրամ), որի 84.7%-ը[35] բաժին է ընկել ցամաքային տրանսպորտի (35.6%), հրդեհից ու բնական աղետներից (23.3%), առողջության (10.6%), փոխադրվող գույքի (բեռների) (8.0%), ընդհանուր պատասխանատվության (7.2%) ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրավճարներին:

2007 թ. հաշվեգրված պահովագրական հատուցումների մեծությունը 890.0 մլն դրամ է (2006 թ.՝ 680.4[36] մլն դրամ): Ապահովագրական ընկերությունների կողմից փաստացի վճարումներն ապահովագրական հատուցումների գծով[37] կազմել են 856.2 մլն դրամ, որի 88.4%-ը բաժին է ընկել ցամաքային տրանսպորտի (66.0%) և առողջության (22.4%) ապահովագրության գծով հատուցումներին:

Գծապատկեր 24. 2007 թվականի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարներ և փաստացի վճարված ապահովագրական հատուցումներ՝ ըստ ապահովագրության դասերի



1. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 2. Հրդեհից ու բնական աղետներից ապահովագրություն, 3. Առողջության ապահովագրություն, 4. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 5. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 6. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 7. Այլ դասերի գծով ապահովագրություն

---

[35] Առանձին ապահովագրության դասերի գծով հաշվեգրված ապահովագրավճարների հաշվարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԲ խորհրդի 05.12.2006 թվականի թիվ 716-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 32-ի համաձայն ՀՀ ԿԲ ներկայացվող թիվ 2 և թիվ 5 հաշվետվությունները, ՀՀ ԿԲ խորհրդի 28.03.2006 թվականի թիվ 124-Ն որոշմամբ հաստատված հավելված 8-ի համաձայն ՀՀ ԿԲ ներկայացվող ձև 2 հաշվետվությունը, ինչպես նաև «Ապահովագրական գործունեության վերաբերյալ հաշվետվություն»-ը, որը ՀՀ ԿԲ-ն ապահովագրական ընկերություններից ստացել է գրավոր հարցման արդյունքում:

[36] Ցուցանիշում ներառված չեն ավիացիոն ռիսկերի գծով հատուցումները, որոնք 2006 թվականին կազմել են 26.7 մլրդ դրամ:

[37] Առանձին ապահովագրության դասերի գծով փաստացի վճարված ապահովագրական հատուցումների հաշվարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԲ խորհրդի 05.12.2006 թվականի թիվ 716-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 32-ի համաձայն ՀՀ ԿԲ ներկայացվող թիվ 4 հաշվետվությունը, ՀՀ ԿԲ խորհրդի 28.03.2006 թվականի թիվ 124-Ն որոշմամբ հաստատված հավելված 8-ի համաձայն ՀՀ ԿԲ ներկայացվող ձև 2 հաշվետվությունը, ՀՀ ԿԲ խորհրդի 12.06.2007 թվականին հաստատված թիվ 180-Ն որոշման համաձայն ՀՀ ԿԲ ներկայացվող ձև 4 հաշվետվությունը, ինչպես նաև «Ապահովագրական գործունեության վերաբերյալ հաշվետվություն»-ը, որը ՀՀ ԿԲ-ն ապահովագրական ընկերություններից ստացել է գրավոր հարցման արդյունքում:

Ապահովագրական համակարգի վնասաբերության ցուցանիշի մեծությունը[38] հաշվետու տարում կազմում է 39.1%:


Ապահովագրական ընկերությունների զուտ տոկոսային եկամուտների մեծությունը 2007 թ. կազմել է 294.2 մլն դրամ, որի տոկոսային եկամուտների 76.3%-ը (կամ 226.5 մլն դրամ) բաժին է ընկել ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդների և դրանց տրամադրված փոխառությունների գծով տոկոսային եկամուտներին:

Ապահովագրական ընկերությունների զուտ ոչ տոկոսային եկամուտների մեծությունը 2007 թվականին կազմել է -755.0 մլն դրամ: Ոչ տոկոսային ծախսերի 58.7%-ը (560.3 մլն դրամ) բաժին է ընկել ապահովագրական ընկերությունների կառավարչական ծախսերին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ[39]

2007 թվականի վերջի դրությամբ ապահովագրական ընկերությունների ապահովագրության պայմանագրերի քանակը կազմել է 41.1 հազար հատ, ինչը 11.6 հազար հատով ավելի է 31.12.2006 թվականի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակից:

Գծապատկեր 25. 31.12.2007 թվականի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի կառուցվածքը




1. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 2. Առողջության ապահովագրություն, 3. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 4. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 5. Հրդեհից ու բնական աղետներից ապահովագրություն, 6. Գույքին հասցված այլ վնասների ապահովագրություն, 7. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 8. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 9. Աջակցության ապահովագրություն, 10. Այլ դասերի գծով ապահովագրություն

[38] *2007 թվականի ավիացիոն ռիսկերը ներառում են միայն օդանավերի և դրանց (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության դասերը:*

[39] *Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է որպես հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և ապահովագրողին ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի փոփոխության հանրագումարի հարաբերություն հաշվետու տարվա ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծությանը:*

Գործող ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարները 2007 թվականի վերջի դրությամբ կազմել են 1.14 տրլն դրամ (առանց ավիացիոն ռիսկերի ապահովագրական գումարների՝ 1.13 տրլն դրամ)՝ 2006 թվականի վերջի 3.93 տրլն դրամի (առանց ավիացիոն ռիսկերի ապահովագրական գումարների՝ 630.0 մլրդ դրամ) փոխարեն: Նման նվազումը պայմանավորվել է 2007 թվականին ապահովագրական շուկայից երկու ապահովագրական ընկերության դուրս գալով, քանի որ վերջիններիս ապահովագրական գումարների 99%-ից ավելին բաժին է ընկել ավիացիոն ռիսկերի գծով ապահովագրական գումարներին:

Գծապատկեր 26. 31.12.2007 թվականի դրությամբ ապահովագրական գումարների կառուցվածքը



1. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 2. Առողջության ապահովագրություն, 3. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 4. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 5. Հրդեհից ու բնական աղետներից ապահովագրություն, 6. Գույքին հասցված այլ վնասների ապահովագրություն, 7. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 8. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 9. Աջակցության ապահովագրություն, 10. Այլ դասերի գծով ապահովագրություն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՆՁՆԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2007 թվականի վերջի դրությամբ վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 986.9 մլրդ դրամ, որի բաժինն ապահովագրական ընկերությունների կողմից ստանձնած ռիսկերի մեջ 86.7% է (առանց ավիացիոն ռիսկերի՝ 86.7%): 31.12.2006 թվականի դրությամբ վերաապահովագրողների բաժինն ապահովագրական գումարներում կազմել է 95.7% (առանց ավիացիոն ռիսկերի՝ 73.7%):

2007 թվականի ընթացքում վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների մեծությունը կազմել է 2.1 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 43.1%-ը (առանց ավիացիոն ռիսկերի՝ 40.2%): Նույն ցուցանիշը 2006 թվականին կազմել է 62.9% (առանց ավիացիոն ռիսկերի՝ 46.0%):

2007 թվականի ընթացքում վերաապահովագրողներից ստացվող գումարների մեծությունն ապահովագրական հատուցումների գծով կազմել է 376.9 մլն դրամ կամ հաշվեգրված ապահովագրական հատուցումների 42.4%-ը:

Ըստ էության, 2007 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունները սեփական ռիսկերը հիմնականում չեն վերահասցեագրել, հետևաբար, ինչպես և երևում է վերը նշված ցուցանիշներից, վերաապահովագրողների բաժինները 2006 թվականի համեմատ նվազել են ինչպես ապահովագրական գումարների, այնպես էլ ապահովագրավճարների գծով:

ՀՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՆ

31.12.2007 թվականի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների քանակը նվազել է. տարեվերջին արժեթղթերի շուկայում գործել են 15 մասնագիտացված անձ, որոնցից 6-ը, ի լրումն բրոքերային գործունեության լիցենզիայի, ունեն նաև արժեթղթերի հավատարմագրային կառավարման և պահառուական գործունեության լիցենզիաներ: Տարվա ընթացքում գործունեությունը դադարեցրել են 7 ընկերություն, միաժամանակ, արժեթղթերի շուկայի մասնակից են դարձել 2 առևտրային բանկ (բրոքերային, հավատարմագրային կառավարման և պահառուական գործունեության լիցենզիա են ստացել «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն և «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ-ն):

31.12.2007 թվականի դրությամբ մասնագիտացված անձանց ակտիվները կազմել են 8.7 մլրդ դրամ, իսկ սեփական կապիտալը՝ 2.1 մլրդ դրամ (առանց 2 առևտրային բանկ մասնագիտացված մասնակիցների)[40]: 2007թ. 13 ոչ բանկ մասնագիտացված ընկերությունների կողմից ապահովվել է 594 մլն դրամի շահույթ:

Չնայած մասնագիտացված անձ մասնակիցների քանակը նվազել է, այնուամենայնիվ հաշվետու տարում ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառությունը նախորդ տարվա համեմատ որոշակիորեն աճել է. արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց կողմից իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը կազմել է 332.1 մլրդ դրամ, որը 73.5%-ով ավելի է 2006 թվականի շրջանառության ծավալից: Բրոքերային գործունեությանը բաժին է ընկել արժեթղթերի շուկայի շրջանառության ընդամենը 0.8%-ը կամ 2.6 մլրդ դրամ, որը 4.6 մլրդ դրամով պակաս է նախորդ տարվա ծավալից:

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից իրականացված գործառնություններում շարունակում են գերակշռել պետական արժեթղթերով իրականացվող գործառնությունները. պետական պարտատոմսերով իրականացված գործառնությունների (ներառյալ՝ ռեպո գործառնությունները) տեսակարար կշիռը արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության մեջ կազմել է 98.2% կամ 326.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 140.5 մլրդ դրամով: Ընդ որում, 2007 թվականի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից պետական պարտատոմսերով իրականացված գործառնությունների մեջ ռեպո գործառնությունների տեսակարար կշիռը կազմել է 82.8%:

2007 թվականին, նախորդ տարվա համեմատ, նկատվել է կորպորատիվ պարտատոմսերով գործառնությունների որոշակի աճ. կորպորատիվ պարտատոմսերի շրջանառության ծավալը կազմել է 3.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 2.3 մլրդ դրամով, որը, սակայն, կազմել է արժեթղթերի շուկայի շրջանառության ծավալի ընդամենը 1.0%-ը:

---

[40] Առևտրային բանկերի ակտիվները հաշվի առնելով՝ մասնագիտացված ընկերությունների ակտիվները 31.12.2007թ. դրությամբ կազմել են 37.2 մլրդ դրամ, իսկ սեփական կապիտալը՝ 14.2 մլրդ դրամ:

Բաժնետոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նվազել է 2.1 մլրդ դրամով՝ կազմելով 2.5 մլրդ դրամ կամ արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության 0.7%-ը:

Զգալի ավելացել են ռեպո գործառնությունների ծավալները, մասնավորապես՝ դիտարկվող ժամանակահատվածում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը կազմել է 270.0 մլրդ դրամ կամ արժեթղթերի շուկայի շրջանառության 81.3%-ը, որը 165.5 մլրդ դրամով ավելի է նախորդ տարի կնքված ռեպո գործարքների ծավալից:

Մասնագիտացված անձանց կողմից արժեթղթերի շուկայում իրականացված գործառնությունները գերազանցապես արտաբորսայական են: Բորսայում իրականացված գործառնությունների ծավալը արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության մեջ կազմել է 0.7% կամ 2.2 մլրդ դրամ՝ 2006 թվականի համեմատ նվազելով 3.0 մլրդ դրամով, ընդ որում՝ բորսայում իրականացված գործառնությունների 68.7%-ը բաժին է ընկնում բաժնետոմսերով իրականացված գործառնություններին:

31.12.2007թ. դրությամբ արժեթղթերի հավատարմագրային կառավարման գործունեության շրջանակներում մասնագիտացված անձանց կողմից ներգրավված միջոցների ծավալը կազմել է 898 մլն դրամ:

Տարեվերջին ֆոնդային բորսայում ցուցակված են եղել 33 հաշվետու թողարկողների արժեթղթեր, ընդ որում՝ հաշվետու թողարկողներից 2-ը առևտրային բանկեր են: Վերոնշյալ ընկերություններից 8-ը վարկանշվում են ՀՀ ԿԲ կողմից:

Տարին նշանավորվել է կորպորատիվ պարտատոմսերի առաջնային շուկայի ակտիվացմամբ. տարվա ընթացքում 6 հաշվետու թողարկողների կողմից իրականացվել է 3.2 մլրդ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերի թողարկում:

31.12.2007 թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում (ՀԿԴ) անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողներ են եղել 734 ընկերություններ, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը կազմել է 127.5 հազար մարդ:

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԳՐԱՎԱՏՆԵՐԸ

31.12.2007 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 62 գրավատներ: Տարվա ընթացքում գրավատան գործունեության լիցենզիա են ստացել 7 ընկերություններ ու անհատ ձեռնարկատերեր, իսկ 9 գրավատների լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել: Հաշվետու տարում արձանագրվել է գրավատների ընդհանուր ակտիվների մեծության 28% և գրավատների կողմից տրամադրված վարկերի մեծության 40% աճ: Գրավատների ընդհանուր ակտիվների մեծությունը 31.12.2007 թ. դրությամբ կազմել է 3.2 մլրդ դրամ, գրավատների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր մեծությունը՝ 2.4 մլրդ դրամ:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԸ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐՆԵՐԸ

31.12.2007 թ. դրությամբ ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա են ունեցել 283 փոխանակման կետեր (ներառյալ մասնաճյուղերը): Հաշվետու տարվա ընթացքում արտարժույթի փոխանակման 27 կետերի լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել: Արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա է

տրվել արտարժույթի փոխանակման 21 կետերի: Նախորդ տարվա համեմատ, արտարժույթի փոխանակման կետերում արձանագրվել է արտարժույթի առք ու վաճառքի ընդհանուր ծավալի աճ: ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի ծավալներն ավելացել են 38-ական տոկոսով և համապատասխանաբար կազմել 449.7 մլն ԱՄՆ դոլար և 443.6 մլն ԱՄՆ դոլար: Եվրոյի առքի ծավալներն ավելացել են 65%-ով, վաճառքի ծավալները՝ 64%-ով և համապատասխանաբար կազմել 35.4 մլն եվրո և 34.8 մլն եվրո:

Տարվա ընթացքում արժութային դիլերի գործունեության լիցենզիա է տրամադրվել «Պրոֆֆինանս» ՓԲԸ-ին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ին, ուժը կորցրած են ճանաչվել «Ակրոբրոք» ՍՊԸ-ի, «Գոհար Համբարյան», «Պրիվատ Ինվեստ» ՓԲԸ-ի և «Երևան-Բրոքեր» ՍՊԸ-ի արժութային դիլերի գործունեության լիցենզիաները: 31.12.2007 թ. դրությամբ ՀՀ տարածքում արժութային դիլերի գործունեության լիցենզիա ունեն 5 իրավաբանական անձինք: Տարվա ընթացքում արժութային դիլերների՝ ԱՄՆ դոլարի ընդհանուր առքի ծավալը կազմել է 30.3 մլն ԱՄՆ դոլար, վաճառքի ծավալը՝ 30.5 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի առքի ծավալը 7.0 մլն ԱՄՆ դոլար էր, վաճառքի ծավալը՝ 14.4 մլն ԱՄՆ դոլար):

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՎ ՎճԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՒ ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊՐՈՑԵՍԻՆԳ ԵՎ ՔԼԻՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2007 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել է դրամական փոխանցումներ իրականացնող 7 ընկերություն: Տարվա ընթացքում դրամական փոխանցումներ իրականացնելու գործունեության լիցենզիա է տրամադրվել «Էլվեր» ՍՊԸ-ին, «Փարվանա վճարահաշվարկային կազմակերպություն» ՓԲԸ-ին, «Տանդեմ Փեյմինթս» ՍՊԸ-ին, «Թել Սել» ՓԲԸ-ին, «Մեգա Պատերա» ՍՊԸ-ին, և ուժը կորցրած է ճանաչվել «Արմենիան էքսպրես» ՓԲԸ-ի գործունեության լիցենզիան:

Հատկանշական է, որ «Թել Սել» ՓԲԸ-ն, «Տանդեմ Փեյմինթս» ՍՊԸ-ն և «Մեգա Պատերա» ՍՊԸ-ն, բացի դրամական փոխանցումներ իրականացնելու գործունեության լիցենզիայից, ստացել են նաև վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ իրականացնելու գործունեության լիցենզիա: Ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների միջոցով վերջիններիս կողմից մատուցվում են հանրային նշանակություն ունեցող ծառայությունների դիմաց կանխիկ միջոցներով վճարումների ընդունման ծառայություններ:

Դրամական փոխանցումներ իրականացնող մնացյալ չորս ընկերությունները, միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով, ապահովում են արտասահմանից Հայաստանի Հանրապետություն ուղղված վճարումների իրականացումը: Գործող իրավական ակտերի համաձայն՝ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար սահմանված է 500 հազ. ՀՀ դրամ ապահովագրական դեպոզիտի պահանջ, որը պետք է դեպոնացվի որևէ առևտրային բանկում: Իսկ վճարային գործիքների պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների համար սահմանված է կանոնադրական կապիտալի պահանջ՝ 6 մլն ՀՀ դրամի չափով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 9 մլրդ դրամի վճարում, այդ թվում՝ 3.5 մլրդ դրամի վճարումը կատարվել է միջազգային դրամական փոխանցումների իրականացման համակարգերին անդամակցելու միջոցով,

իսկ արտասահման ուղղված փոխանցում կատարվել է 0.7 մլրդ դրամի չափով: Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը կազմել է առանց բանկային հաշիվների բացման կատարված միջազգային փոխանցումների ծավալի 1.5%-ը: Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 254 հազար դրամ, որից՝ դրամական փոխանցումների իրականացման համակարգերով՝ 101 հազար դրամ (նախորդ տարվա համեմատ պահպանել է գրեթե նույն մակարդակը):

31.12.2007 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործունեություն է ծավալել վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող չորս կազմակերպություն՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն, «Թել Սել» ՓԲԸ-ն, «Տանդեմ Փեյմինթս» ՍՊԸ-ն և «Մեգա Պատերա» ՍՊԸ-ն:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը, որպես «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի օպերատոր, ապահովում է «ԱրՔա» քարտերով, ինչպես նաև «Visa» և «Master Card» միջազգային քարտային համակարգերի վճարային քարտերով կատարված գործառնությունների սպասարկումը: «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը հաշվետու տարվա ընթացքում քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 168 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնությունների իրականացում (նախորդ տարվա համեմատ ավելացել է 66%-ով), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 14 մլրդ դրամ ծավալի գործառնություն, իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով ՀՀ այլ բանկերի պրոցեսինգային կենտրոնների միջոցով (այդ թվում նաև արտասահմանում) իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 20 մլրդ դրամ: Ինտերնետ միջավայրում կատարված գործառնությունների ծավալը ավելացել է 3.3 անգամ և կազմել 842 մլն դրամ: Համակարգում քարտերի սպասարկման սարքավորումների աշխատանքի հուսալիության բարձրացման նպատակով շարունակվել է դրանց միացումը «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնին՝ CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման խնդիրների շրջանակներում 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել են վճարային համակարգերի հսկման, արժեթղթերի շուկայի, ինչպես նաև անկանխիկ վճարումների զարգացման և իրավական դաշտի կարգավորման աշխատանքներ:

Հետամուտ լինելով արժեթղթերի շուկայի զարգացմանը՝ մշակվել և հաստատվել է «ՀՀ կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերով ռեպո գործարքների դեպո հաշվարկի կատարման» պայմանագիրը, որը կարգավորում է Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև կնքված ռեպո գործարքների վերջնահաշվարկի իրականացման ընթացակարգերը:

Հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից պետական պարտատոմսերի Պահառուի գործառույթների իրականացման աշխատակարգը», որը կարգավորում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող պահառուական գործունեությունը, այդ թվում՝ նաև Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի համար:

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նոր ուղենշային պարտատոմսերի թողարկման և դրա հետ կապված ընթացակարգերի փոփոխման և պարտատոմսերի հետգնման աճուրդի գործառույթի ավելացման նպատակով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման հետգնման կազմակերպման և մշակման սպասարկման կարգը»՝ նոր խմբագրությամբ: Սույն փաստաթղթով սահմանվում են ՀՀ պետական պարտատոմսերի տեղաբաշխման, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման ընթացակարգերը:

Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվող բորսայական գործառնությունները խթանելու և վերջնահաշվարկի իրականացման գործընթացի ապահովման նպատակով մշակվել է «Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ-ում հաշվառվող արժեթղթերով (կորպորատիվ արժեթղթեր) կնքվող գործարքների նախնական դեպոնացման և վերջնահաշվարկի կատարման մասին» պայմանագիրը, որով կարգավորվել են բորսայում արժեթղթերով կնքվող գործարքների հետ կապված դրամական միջոցների նախնական դեպոնացման, կենտրոնական դեպոզիտարիայում հաշվառվող արժեթղթերով գործարքների քլիրինգի, ինչպես նաև վերջնահաշվարկի իրականացման հետ կապված ընթացակարգերը:

Արժեթղթերի շուկայի զարգացման, այդ թվում նաև գործարքների կնքման ավտոմատացման և արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է ՀՀ պետական արժեթղթերով ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների կնքման ավտոմատացված համակագը, որը թույլ է տալիս իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների ավտոմատ կնքումը: Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների իրականացման աշխատակարգը», որը սահմանում է համակարգով գործառնությունների իրականացման ընթացակարգերը:

Արժեթղթերի շուկայի զարգացման բնագավառում կարևորվում է 2007 թվականին Օ-էմ-էքս-ի մուտքը Հայաստան, որն իրականացրել է ՀՀ տարածքում արժեթղթերով կատարվող բորսայական գործառնությունների ակտիվացման ուղիների ուսումնասիրություն: Ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված միջոցառումների ծրագրի հիման վրա մշակվել է բորսայական գործառնությունների

զարգացման ռազմավարական ծրագիրը՝ բաղկացած երկու փուլից: Վերջինիս շրջանակներում նախատեսվում է նաև մշակել բորսայական գործառնությունների իրականացման արդյունքում վերջնահաշվարկի ապահովման նոր մեխանիզմներ՝ հրաժարվելով նախնական դեպոնացման գործող սկզբունքից:

Անկանխիկ վճարումների մասնաբաժնի ավելացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել են վճարային քարտի անդորրագիրը որպես ծախս հիմնավորող փաստաթուղթ ճանաչելու հետ կապված աշխատանքներ: Մշակվել և հաստատվել է ՀՀ Կառավարության՝ «Ծախս հիմնավորող փաստաթղթի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումը, որում սահմանված պահանջները ապահովելու դեպքում վճարային քարտի անդորրագիրը կճանաչվի որպես ծախս հիմնավորող փաստաթուղթ: Այն կհամարվի հաշվապահական հաշվառման փաստաթուղթ, որը խթան կհանդիսանա թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց համար՝ ընդլայնելու անկանխիկ գործիքների՝ մասնավորապես վճարային քարտերի կիրառումը:

Հետամուտ լինելով անկանխիկ վճարումների զարգացման խնդրին՝ մշակվում է նաև «Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2007 թվականին, հաշվի առնելով բանկերի կողմից քարտային գործառնությունների կտրուկ աճը (տե՛ս «Վճարային քարտեր» բաժինը), վերամշակվել և ստորագրվել է ««Արմենիան Քարդ» միասնական վճարային համակարգում իրականացված գործառնությունների վերջնահաշվարկի կատարման» նոր եռակողմ պայմանագիր: Միաժամանակ, Կենտրոնական բանկը ապահովել է էլեկտրոնային վճարումների համակարգում նոր հաղորդագրության տեսակի կիրառումը, ինչը թույլ է տալիս «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի միջոցով զուտացման արդյունքները վերջնահաշվարկի համար ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

Հաշվետու տարում սկսվել է նոր տեսակի ծառայության մատուցում՝ ինքնասպասարկման տերմինալների միջոցով տարբեր տեսակի վճարումների (հիմնականում՝ կոմունալ և կապի ծառայությունների դիմաց)՝ կանխիկ եղանակով ընդունում: Նշված եղանակով տվյալ ծառայությունները հիմնականում մատուցվում են ոչ բանկ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից, որոնք ստացել են դրամական (փողային) փոխանցումների և, միաժամանակ, վճարային գործիքների պրոցեսինգի և քլիրինգի իրականացման լիցենզիաներ (տե՛ս «Վճարահաշվարկային կազմակերպություններ» բաժինը):

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ


Հաշվետու ժամանակահատվածում համագործակցելով Համաշխարհային բանկի հետ՝ Կենտրոնական բանկի կողմից կատարվել են «Մանուշակագույն գրքի» (“Purple Books”), որտեղ մանրամասն պետք է բնութագրվի ՀՀ վճարահաշվարկային համակարգը, մշակման և հրատարակման աշխատանքներ: Այդ նպատակով 2007 թվականին Հայաստան է ժամանել «ԱՊՀ երկրների վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվառման համակարգի գործունեության համագործակցության» պատվիրակությունը (CISPI-Cooperation in the Commonwealth of Independent States Payments and Securities Settlement Initiative), որի նպատակն էր ծանոթանալ ՀՀ վճարահաշվարկային համակարգին և տալ գնահատական՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Վերջինիս հետ կապված՝ հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ՀՀ վճարահաշվարկային և արժեթղթերի հաշվառման համակարգի գնահատում և ուսումնասիրություն («Assesment and Observations on the Payments and Securities Clearance and Settlement Systems of Armenia») փաստաթղթի նախագիծը, և որպես հաջորդող քայլ՝ նախատեսվում են երկրորդ՝ «Երկրի զեկույց» («Country Report») նյութի մշակման աշխատանքներ:

ՀՀ վճարահաշվարկային բնագավառի հիմնական ցուցանիշները

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 9.3 տրլն դրամ (քանակը՝ 3.6 մլն): Մեկ օրվա միջին անկանխիկ վճարումները ՀՆԱ-ում կազմել են 1.1%, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.35 տոկոսային կետով: ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 8.8 տրլն դրամ, իսկ քանակը՝ 1.4 մլն դրամ: ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 82.5% -ով, իսկ քանակը՝ 33%-ով:

Տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումների) շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 46.8%-ը, քանակի՝ 46.1%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը ավելացել է 2.6 անգամ (2.0 տրլն դրամով), իսկ քանակը՝ 184 հազարով:

Գծապատկեր 27. ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը



2007 թվականին ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 213.6 մլրդ դրամի 4.4 մլն գործառնություն, այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 17.0 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 842 մլն դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 457 մլն դրամ, քարտից-քարտ փոխանցումներ՝ 385 մլն դրամ): Տարեվերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 327.8 հազար, որը 2006 թվականի վերջի համեմատությամբ ավելի է 56.8% -ով:

Հաշվետու տարվա ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 8%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը ավելացել է 50%-ով:


Էլեկտրոնային վճարումների համակարգ

31.12.2007 թ. դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 259, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 22 առևտրային բանկեր՝ 186 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, Միջպետական բանկը (ք. Մոսկվա), Հայաստանի ֆոնդային բորսան և մեկ ոչ բանկ դիլեր:


ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 65.3%-ը և քանակի 96.3%-ը: 2006 թ. համեմատությամբ, էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 47.8%-ով (1855 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 33.7%-ով (340.2 հազարով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 1329-ով՝ կազմելով 5273, իսկ ծավալը՝ 7.2 մլրդ դրամով՝ կազմելով 22.4 մլրդ դրամ:

Գծապատկեր 28. Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները



Գծապատկեր 29. Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված՝ էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումները միջին օրական վճարումներում



Համախառն թղթային վճարումների համակարգ

Առևտրային բանկերի կողմից 2007 թվականին թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 25.7%-ը և քանակի 0.43%-ը (2006 թվականի համեմատ ծավալն ավելացել է 3.1 անգամ, քանակը՝ 1.2 անգամ):

Աղյուսակ 7. ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատված	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը	
	էլեկտրոնային		Թղթային				ԿԲ միջոցով	
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2007								
I եռ.	1419863	256381	664012	11121	166205	1525	2250080	269027
տեսակարար կշիռը վճարումներում (%)	63.10	95.30	29.51	4.13	7.39	0.57	100	100
II եռ.	1219958	311884	447642	10435	203791	1762	1871391	324081
տեսակարար կշիռը վճարումներում (%)	65.19	96.24	23.92	3.22	10.89	0.54	100	100
III եռ.	1318209	357046	341274	10892	215815	1817	1875298	369755
տեսակարար կշիռը վճարումներում (%)	70.29	96.56	18.2	2.95	11.51	0.49	100	100
IV եռ.	1779548	424451	735275	12109	275554	2038	2790377	438598
տեսակարար կշիռը վճարումներում (%)	63.77	96.77	26.35	2.76	9.88	0.47	100	100
Ընդամենը	5737578	1349762	2188204	44557	861365	7142	8787147	1401461
տեսակարար կշիռը վճարումներում (%)	65.3	96.31	24.9	3.18	9.8	0.51	100	100

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 174 փոխանցում՝ 8.5 մլրդ դրամ ծավալով (2006 թվականի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալն ավելացել է 4 մլրդ դրամով): Մեկ թղթային փոխանցման միջին ծավալը աճել է մոտ 35 մլն դրամով և կազմել 49 մլն դրամ: Թղթային եղանակով փոխանցումների աճը պայմանավորվել է հիմնականում ռեպո, հակադարձ ռեպո գործառնություններով: Տարվա ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 35.7 մլրդ դրամ ծավալով 73 փոխանցում (ծավալը ավելացել է 3.4 անգամ):

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

Տարեվերջին Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 17 դիլեր բանկեր, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով՝ պետական պարտատոմսերի հետ կապված), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով և թողարկողի կարգավիճակով՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի հետ կապված):

Համակարգի կողմից պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 2044 հանձնարարական՝ 102 մլրդ դրամ ծավալով, ինչը նախորդ տարվա համեմատ ավելացել է 40.5 մլրդ դրամով: Ընդ որում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 52.6 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 49.4 մլրդ դրամի փոխանցում: Այդ թվում՝ «Գանձապետական պահառու» համակարգի կողմից պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 1.8 մլրդ դրամի վճարում, որտեղ՝ 652 մլն դրամը կազմում են արժեթղթերի տեղաբաշխման և 1.1 մլրդ դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 1467 հանձնարարական՝ 261.8 մլրդ դրամ ծավալով: Նշված արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի դիմաց կատարվել է 134.9 մլրդ դրամի փոխանցում, իսկ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց՝ 126.9 մլրդ դրամի փոխանցում:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված գործառնությունները 2007 թվականին ավելացել են մոտ 1.8 անգամ և կազմել 1069 մլրդ դրամ՝ անվանական արժեքով (այդ թվում՝ առք ու վաճառք՝ 878 մլրդ դրամ ծավալով, ազատ առաքում՝ 191 մլրդ դրամ ծավալով): Ընդ որում, գրավադրման հետ կապված գործառնությունների ծավալը կազմել է 25 մլրդ դրամ՝ անվանական արժեքով: DVP- սկզբունքով կատարված առք ու վաճառքի 3631 գործառնությունների դիմաց վճարվել է 497.6 մլրդ դրամ:

Վճարային քարտեր

Տարեվերջին հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել են ՀՀ տարածքում գործող 20 առևտրային բանկերի կողմից, որոնք բոլորն էլ անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին: Այդ թվում երկու բանկ դեռևս իրականացնում են «ԱրՔա» քարտերի սպասարկման հետ կապված աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 158 նոր ավտոմատ գանձման մեքենաներ, և տարեվերջին դրանց ընդհանուր քանակը կազմել է 338: «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվում է 259 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերում տեղադրվել են նաև 702 POS-տերմինալներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է 2028, այդ թվում՝ 334-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 83:

Աղյուսակ 8. Թողարկված քարտերի սպասարկման ցուցանիշներ

Ցուցանիշ	Միջազգային չափանիշներ	ՀՀ-ում 2006 թ.	ՀՀ-ում 2007 թ.
Թողարկված (շրջանառվող) քարտեր / ԱԳՄ	2600	1 162	970
Թողարկված (շրջանառվող) քարտեր / POS-տերմինալ	160	158	162

Աղյուսակ 9. ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող քարտերի տեսակները

Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+				
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+				
Հայներարտբանկ	+	+			
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
«ԲՏԱ» ինվեստ բանկ	+				
Զարգացման բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+		+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ	+				
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»	+		+		
Արցախբանկ	+	+			
Կասկադ Բանկ	+	+			
Առէկսիմբանկ	+	+	+	+	
Յունիբանկ	+		+		
Արդշինինվեստբանկ	+	+			

Գործող «ԱրՔա» քարտերի քանակը ավելացել է 54.4%-ով (50199 քարտով) և 31.12.2007 թվականի դրությամբ կազմել 142482: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 58.7%-ով (68540 քարտով), այդ թվում՝ «Visa» միջազգային քարտային համակարգի քարտերն ավելացել են 53.5%-ով (48547 քարտով) և կազմել 139280, իսկ «Master Card» միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 100%-ով (11848 քարտով) և կազմել 23665: Մնացած մասը բաժին է ընկնում միջազգային այլ քարտերին:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերի կառուցվածքում «ԱրՔա» քարտերի տեսակարար կշիռը կազմել է 43.5%, «Visa» և «Master Card» միջազգային քարտային համակարգերի քարտերինը, համապատասխանաբար՝ 42.5% և 7.2%, իսկ մնացած 6.8%-ը կազմել են միջազգային այլ քարտային համակարգերի քարտերը, որոնցում ընդգրկված են նաև HSBC debit քարտերը:

Քարտերով իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը ավելացել է 54.5%-ով (75388 մլն դրամով), իսկ քանակը՝ 46.18%-ով (1398981):


Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 2081054 գործառնություն՝ 74.9 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը ավելացել է մոտ 64.7%-ով (29418 մլն դրամով), իսկ քանակը՝ 47.7%-ով (672175-ով): «ԱրՔա» քարտերով իրականացված գործառնությունները կազմել են քարտերով ընդհանուր գործառնությունների ծավալի 35%-ը և քանակի 47%-ը:

Քարտերով կատարվող գործառնությունների ծավալում գերակշռող մասնաբաժին ունեն «Visa» միջազգային քարտերով գործառնությունները՝ 42.2%:

«Visa» միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 90.2 մլրդ դրամ (1436.5 հազար գործառնություն), իսկ «Master Card» միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 19.9 մլրդ դրամ ծավալով 319.3 հազար գործառնություն: «Visa» համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 49.1%-ով (29.7 մլրդ դրամ ծավալով), իսկ «Master Card» համակարգի քարտերով կատարված գործառնությունների ծավալը ավելացել է 57.2%-ով (7.2 մլրդ դրամ ծավալով):

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 591.7 հազ. գործառնություն՝ 28.6 մլրդ դրամ ծավալով, որը 2006 թվականի համեմատ ավելացել է 9.0 մլրդ դրամով:

Գծապատկեր 30. ՀՀ բանկերի կողմից պլաստիկ քարտերի տրամադրման դինամիկան




Հաշվետու տարվա ընթացքում քարտերով իրականացված միջին օրական գործառնությունների ծավալը կազմել է 593 մլն դրամ, իսկ միջին օրական գործառնությունների քանակը՝ 12.3 հազար: Նշված ծավալում 42%-ը բաժին է ընկնում «Visa» միջազգային քարտերին, իսկ 35%-ը՝ «ԱրՔա» քարտերին: Նախորդ տարվա համեմատ միջին օրական գործառնությունների քանակը ավելացել է 1.5 անգամ (3.9 հազարով):

2007 թվականին մեկ «ԱրՔա» քարտով իրականացված միջին ամսական գործառնությունների ծավալը ավելացել է մոտ 3 հազար դրամով և կազմել 50 հազար դրամ: Գործարքների քանակը կազմել է 1.4 հատ:

Աղյուսակ 10. 2007 թվականի ընթացքում քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները

Սարքեր	Ընդամենը գործարքներ	Այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով	Ընդամենը գործարքներ	Այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով
	ծավալը (մլն դրամ)	ծավալը (մլն դրամ)	քանակ	քանակ
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	154438	56770	3611566	1682344
այդ թվում՝ անկանխիկ	2143	254	78535	40357
POS – տերմինալների միջոցով	58672	18120	809268	398710
այդ թվում՝ անկանխիկ	14858	4036	363365	145430
Իմպրինտերների միջոցով	524	0	7716	0
այդ թվում՝ անկանխիկ	35	0	200	0
Ընդամենը	213634	74889	4428550	2081054
այդ թվում՝ անկանխիկ	17036	4290	442100	185787

Գծապատկեր 31. ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2003 - 2006թթ., ինչպես նաև 2007թ.՝ ըստ եռամսյակների



Միջազգային փոխանցումների համակարգեր

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով (տե՛ս «Վճարահաշվարկային կազմակերպություններ» բաժինը):

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդների դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են 18 միջազգային համակարգերի (WESTERN UNION, MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, CONTACT և այլ համակարգեր):

Աղյուսակ 11. Դրամական փոխանցումների իրականացման համակարգերը

Համակարգեր	Մասնակից բանկերի քանակը	Մասնակից կազմակերպությունների քանակը	Մասնաբաժինը ստացումների ծավալում, %
UNISTREAM	3		51.66
WESTERN UNION	15	1	9.72
ANELIK	8		9.88
BISTRAYA POCHTA	6		9.76
CONTACT	4	2	8.00
MIGOM	7	1	3.56
MONEY GRAM	2	1	2.02
INTEREXPRESS	2		1.43
LIDER	4		0.96
PRIVAT MONEY TRANSFER	3		0.55
STB Expres	1		-
JIVIE DENGI	1		0.0002
BLIZKO	2		0.25
FASTER	1		0.32
ALUR	1		0.003
ZOLOTAYA CORONA	1		0.17
BTF-Sauz	1		1.57
Travelex	-	1	0.09
STEFI	-	1	0.28

2007 թվականի ընթացքում այս համակարգերին մասնակից բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 385.8 մլրդ դրամ (քանակը՝ 1.5 մլն հատ), որը 9.8 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Արդյունքում՝ դրամական միջոցների զուտ ներհոսքը առևտրային բանկերի միջոցով կազմել է 346.4 մլրդ դրամ, որը 2006 թվականի համեմատ ավելի է 25%-ով: Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը ավելացել է 22%-ով (70.3 մլրդ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 253 հազար դրամ:

SWIFT համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումների ծավալը կազմել է 1.8 տրլն դրամ, իսկ քանակը՝ 287.8 հազար փոխանցում:

Ընդհանուր առմամբ, առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները ավելացել են 17%-ով և կազմել 599 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը ավելացել է 7%-ով և կազմել 343 մլրդ դրամ:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ֆինանսական միջնորդության ընդլայնման նպատակով Կենտրոնական բանկը կշարունակի բանկային, արժեթղթերի, ապահովագրության շուկաների համահունչ զարգացման նախադրյալների ապահովմանն ուղղված բարեփոխումները: 2008 թվականին Կենտրոնական բանկը կշարունակի ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացման, ՀՀ ֆինանսական համակարգի կայունության և իրացվելիության ապահովման, առողջ մրցակցային միջավայրի ամրապնդման, տնտեսության և ֆինանսական համակարգի զարգացումների ներդաշնակության ապահովմանն ուղղված աշխատանքները:

Ներկայումս ՀՀ հեռանկարային զարգացման ուղղություններից մեկը Հայաստանում ֆինանսական կենտրոնի ձևավորումն է: Մասնավորապես, ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության ծրագրով 2008 թվականին նախատեսվում է մշակել «Հայաստանը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դարձնելու հայեցակարգ»: Մշակումները կիրականացնի ՀՀ կենտրոնական բանկը:

Վերահսկողական համակարգի կատարելագործում

Ֆինանսական վերահսկողության առումով՝ 2008 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակելու է ֆինանսական համակարգի՝ ըստ ինստիտուտների (բանկեր, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք և այլն) վերահսկողությունից նոր վերահսկողական համակարգին անցման գործընթացը: Նշվածը ենթադրում է գործառութային կարգավորման/վերահսկողության մոդելի ներդրման աշխատանքներ: Հստակ տարանջատվելու են կանխարգելիչ (prudential) և շուկայի արդարության ապահովմանն (market conduct) ու ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կարգավորման/վերահսկողության գործառույթները: Այս առումով, կարևորվում է նաև վերահսկողական նոր կադրերի ընդգրկման, գործող կադրերի որակավորման բարձրացման նկատմամբ լրացուցիչ պահանջների, ստանդարտների մշակում և ներդրում:

Նախատեսվում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանության ոլորտին և այս ուղղությամբ իրականացնել լայնածավալ միջոցառումներ: Մասնավորապես, պատրաստվելու և հրապարակվելու են հատուկ ուղեցույցներ, գրքույկներ, որոնք սպառողներին իրազեկելու են իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Նախատեսվում է մշակել և ֆինանսական կազմակերպություններում ներդնել սպառողների բողոքների քննման մեխանիզմներ: Սահմանվելու են ֆինանսական կազմակերպությունների կողմից սպառողներին տեղեկատվության տրամադրման պարտադիր պահանջներ: Բացի այդ, հատուկ ուշադրություն է դարձվելու սպառողների ֆինանսական «գրագիտության» մակարդակի բարձրացմանը. մասնավորապես կազմվելու են ուղեցույցներ, անցկացվելու են ֆինանսական թեմաներով գործնական պարապմունքներ, կազմակերպվելու են խաղեր երիտասարդության շրջանում, էլեկտրոնային կրիչների վրա թողարկվելու են ֆինանսական գիտելիքների մակարդակը ստուգող թեստեր, պատրաստվելու են դասավանդողների համար ուսումնամեթոդական ձեռնարկներ, հանրային լրատվության միջոցներով հեռարձակվելու են ուսումնակրթական ծրագրեր և այլն: Ֆինանսական ծառայությունների վերաբերյալ սպառողներին առավել մանրամասն և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու նպատակով նախատեսվում է ԿԲ ինտերնետային կայքի «Սպառողների համար» անվանումով բաժնի փոխարեն ստեղծել առանձին ինտերնետային կայք, որտեղ համակարգված կտեղադրվի վերը նշված ամբողջ տեղեկատվությունը:

Ֆինանսական համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումներ

Կենտրոնական բանկն իր առջև դրված խնդիրների համատեքստում մեծապես կարևորում է բանկային, արժեթղթերի, ապահովագրական շուկաների բնականոն զարգացումները և այդ նպատակով նախատեսում է 2008 թվականին իրականացնել մի շարք բարեփոխումներ:

Բանկային շուկայի հատված

2008 թվականի հունվարի 1-ից ներդրվելու է բանկային համակարգի գործունեությունը կարգավորող նոր նորմատիվային դաշտ, որն, ըստ էության, հիմնված է Բազելյան երկրորդ համաձայնագրի սկզբունքների ու տրամաբանության վրա: Սա հնարավորություն կտա բանկերին առավել ճկուն և արդյունավետ կառավարելու իրենց ռիսկերը, ինչն իր հերթին կնպաստի բանկերի գործունեության արդյունավետության բարձրացմանը, ֆինանսական կայունության ամրապնդմանը և ֆինանսական միջնորդության աստիճանի ավելացմանը:

Կարևորելով բանկերի կողմից իրենց ռիսկերը գնահատելու և կառավարելու խնդիրը՝ կմշակվի «Բանկերում ռիսկերի կառավարման ուղեցույց»՝ հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը:

2008 թվականին մշակվելու է բանկերի ռիսկայնության գնահատման նոր համակարգ՝ հիմնված որոշակի գործառնությունների առանձին տեսակներին բնորոշ ռիսկերի տարանջատման, գնահատման և կառավարման մակարդակի վերլուծության վրա: Նպատակը բանկի ռիսկերի և այդ ռիսկերի կառավարման որակի վերլուծության միջոցով բանկի ռիսկայնության ամփոփ գնահատական ձևավորելն է: Ակնկալվում է, որ արդյունքում տեղի կունենա բանկերի գործունեությունը բնութագրող ցուցանիշների, ինչպես նաև բանկերի ռիսկայնությունը, ռիսկերի կառավարման համակարգը գնահատող ցուցանիշների արդյունավետության բարձրացում: Նշված համակարգը հնարավորություն կտա հիմնական ուշադրությունը սևեռելու բանկերի համար էական և/կամ նշանակալի համարվող գործառնություններին, որոնք գտնվում են առավել մեծ ռիսկային դաշտում: Այս համակարգը բանկերում արդյունավետ ներդրվելուց հետո կարող է կիրառվել նաև այլ ֆինանսական կազմակերպություններում՝ ռիսկերը գնահատելու համար:

Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների, 2008թ. ընթացքում կմշակվի «Բանկերի կողմից երաշխավորված ավանդների և ավանդատուների վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ձևավորման, վարման, տվյալների պահպանման և ՀՀ կենտրոնական բանկին տրամադրման» կարգը, որի նպատակն է, ավանդների հատուցման հնարավոր դեպքերի առկայության պայմաններում, հնարավորինս սեղմ ժամկետներում և բարձր արդյունավետությամբ կազմակերպել ավանդների երաշխավորման հիմնադրամների կողմից ավանդների փոխհատուցման գործընթացը:

Ինչպես նախորդ տարի, 2007 թվականին նույնպես ամենաբարձրը հիփոթեքային վարկավորման աճի տեմպն էր, ինչը վկայում է տնտեսությունում երկարաժամկետ վարկերի նկատմամբ ձևավորված պահանջարկի բարձր մակարդակի մասին: ՀՀ կենտրոնական բանկը 2008 թվականի ընթացքում շարունակելու է ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, 2007 թվականի վերջին ՀՀ Կառավարությանն արդեն ներկայացվել են «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» և «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքների նախագծերը: 2008 թվականի ընթացքում օրենքների ընդունումից հետո նախատեսվում է մշակել դրանց կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը՝ հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը: Այս օրենքների ընդունումը կարևորվում է այն առումով, որ վերջիններս բանկերին և վարկային կազմակերպություններին հնարավորություն կտան հիփոթեքային վարկերի ֆինանսավորման համար թողարկել հիփոթեքային արժե-

թղթեր և իրացվելիություն ներգրավել կապիտալի շուկայից, ինչը, կանխատեսվում է, իր հերթին զգալի կնպաստի հիփոթեքային վարկերի մատչելիության բարձրացմանը (տոկոսադրույքների նվազմանը և ժամկետների ավելացմանը): Մյուս կողմից, հիփոթեքային արժեթղթերը ներդրողների համար ներդրումների այլընտրանքային գործիք կդառնան:

Տնտեսությունում երկարաժամկետ միջոցների ձևավորմանը, հետևաբար՝ ֆինանսական համակարգի ընդլայնմանն ու ֆինանսական միջնորդության բարձրացմանը էապես կարող է նպաստել կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը: ՀՀ կենտրոնական բանկը 2008 թվականին ակտիվորեն կշարունակի կենսաթոշակային համակարգի բարեփոխումների հետ կապված աշխատանքները: 2008թ. ընթացքում նախատեսվում է մշակել «Վարկային կազմակերպություններում ստուգումների իրականացման ձեռնարկ», որով կառաջնորդվեն վարկային կազմակերպությունների վերահսկողները՝ տեղերում ստուգումներ իրականացնելիս:

Ապահովագրական շուկայի հատված

Ապահովագրության ոլորտում աշխատանքները շարունակվելու են Հայաստանում ապահովագրական շուկայի զարգացման և վերահսկողության բարեփոխումների հայեցակարգի ներքո:

2008 թվականին նախատեսվում են ապահովագրական շուկայի արդյունավետ գործունեությունը ապահովող ենթակառուցվածքների ներդրման աշխատանքներ:

2007 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից մշակվել է «Հայաստանում ավտոտրանսպորտային միջոցներ վարողների՝ երրորդ անձանց հանդեպ քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հայեցակարգը», որը տարեվերջին հաստատվել է ՀՀ Կառավարության որոշմամբ: 2008 թվականի ընթացքում նախատեսվում է սկսել ՀՀ-ում ավտոտրանսպորտային միջոցներ վարողների՝ երրորդ անձանց հանդեպ քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման աշխատանքները: Մասնավորապես, հայեցակարգի հիման վրա 2008 թվականի ընթացքում նախատեսվում է մշակել և ընդունել «Ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրանից բխող այլ օրենքների նախագծեր:

Կատարվելու են նաև Հայաստանում պարտադիր ապահովագրության այլ տեսակների ներդրման հեռանկարների ուսումնասիրման աշխատանքներ: Ապահովագրական զարգացած համակարգ ունեցող երկրներում կիրառվող պարտադիր ապահովագրության տեսակները ներառում են բժշկական, քաղաքացիական ընդհանուր պատասխանատվության, առանձին մասնագիտությունների գծով մասնագիտական պատասխանատվության և արտադրությունում դժբախտ պատահարների ու առողջության պարտադիր ապահովագրությունը: 2008 թվականի ընթացքում նախատեսվում է գնահատել Հայաստանում պարտադիր ապահովագրության առանձին տեսակների ներդրման նպատակահարմարությունը, դրանց հիման վրա մշակել ընտրված պարտադիր ապահովագրության տեսակների ներդրման ռազմավարություններ:

Բացի այդ, որպես ավելի ընդգրկուն խնդիր, նախատեսվում է ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման հնարավորության ուսումնասիրումը: Այդ պատճառով 2008 թվականի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ նախատեսվում է ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման հայեցակարգի մշակումը, որի արդյունքում պետք է որոշվի ՀՀ-ում պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման նպատակահարմարությունը, ներդրման դեպքում պետք է բացահայտվեն հիմնախնդիրները, ներկայացվեն մեխանիզմները, իրականացվելիք բարեփոխումները և միջոցառումները, հստակեցվեն ռեսուրսները և ժամկետները:

Նախատեսվում է նաև ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ մշակել ՀՀ առողջապահության ոլորտում միասնական տեղեկատվական շտեմարանի վերաբերյալ հայեցակարգ: Միասնական տեղեկատվական շտեմարանը բժշկական ապահովագրության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներից մեկն է: Շտեմարանում կհավաքագրվեն բնակչության՝ յուրաքանչյուր ֆիզիկական անձի գծով բժշկական պատմությունը՝ ապահովելով դրա հասանելիությունը առողջապահական հաստատություններին, հետագայում՝ նաև ապահովագրական ընկերություններին: Այդ տեղեկատվությունը հնարավոր կդարձնի բժշկական ապահովագրության իրականացման ժամանակ ձևավորել «արդար» ապահովագրական սակագին, որի արդյունքում կապահովվի ապահովագրական ընկերությունների՝ չհիմնավորված ռիսկերից զերծ մնալու և, միաժամանակ, պատշաճ հատուցում ապահովելու սկզբունքը: Հայեցակարգում պետք է ներկայացվեն շտեմարանի նկարագրությունը, հավաքագրվող տվյալների ցանկը, անհրաժեշտ ենթակառուցվածքների նկարագրությունը, տվյալների մուտքագրման աղբյուրները, հաշվարկը, ռեսուրսները, դրանց աղբյուրները, շտեմարանի ներդրման ժամանակացույցը և այլն:

Վերահսկողության կատարելագործման և ռիսկերի բացահայտման նպատակով 2008 թվականին կշարունակվեն ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման վաղ ահազանգման գործիքների զարգացման, ինչպես նաև վերահսկողների կողմից ստուգումներ իրականացնելու գործընթացը կանոնակարգող ձեռնարկների մշակման և ներդրման աշխատանքները:

2008 թվականին ուշադրություն կդարձվի նաև ԿԲ վերահսկողական կարողությունների մեծացմանը: Մասնավորապես, նախատեսվում է մշակել «Ապահովագրական ընկերությունների տեղերում ստուգումների իրականացման վերահսկողության ձեռնարկ»: Դրանում մանրամասն կներկայացվեն տեղերում ստուգումների իրականացման գործընթացը, ուսումնասիրության ոլորտները: Կտարանջատվեն բուն ապահովագրություն, վերաապահովագրություն, ակտիվների որակ, կապիտալ և եկամտաբերություն, կառավարում, իրացման կառավարում հիմնական ոլորտները: Յուրաքանչյուր ոլորտի ստուգման գործընթացը կազմված կլինի այնպես, որ վերահսկողները կարողանան.

- բացահայտել տվյալ ոլորտում հնարավոր ռիսկերը և ձեռնարկել միջոցներ՝ դրանք կանխարգելելու համար,
- գնահատել՝ արդյոք ընկերությունը ունի տվյալ ոլորտի կարգավորման պատշաճ ներքին կանոնակարգում և ներքին հսկողության համակարգ (պատշաճ գործընթացներ և ներքին հսկողություն),
- պարզել՝ արդյոք ապահովագրական ընկերությունը գործում է օրենսդրությանը, ներքին քաղաքականություններին, ընթացակարգերին համապատասխան (պատշաճ կիրարկում),
- գնահատել՝ արդյոք ընկերությունը գործունեությունը պատշաճ ձևով հաշվառում և արտացոլում է հաշվետվություններում (պատշաճ հաշվառում),
- գնահատել՝ որքանով են ընկերության ներքին կանոնները համապատասխանում օրենսդրության և իրավական ակտերին (իրավական համապատասխանություն):

Որպես վաղ ահազանգման գործիք՝ կկիրառվի ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականը՝ «ՔԱՌԱՄԵԼՍ»-ը (ընդունվել է 2007 թվականին): Այն թույլ կտա գնահատել ընկերության ֆինանսական կայունությունը ըստ հիմնական ցուցանիշների՝ կապիտալ, ակտիվներ, պահուստներ, ակտուարական հաշվարկներ, կառավարում, եկամտաբերություն, իրացվելիություն և շուկայի նկատմամբ զգայունություն:

Արժեթղթերի շուկայի հատված

Արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով մի շարք միջոցառումներ կիրականացվեն, որոնք կնպաստեն արժեթղթերի շուկայի միջոցով փող ներգրավողների և այդ շուկայի միջոցով խնայողություններ կատա-

րողների թվի ավելացմանը: Այդ առումով՝ իրականացվող քաղաքականությունը կունենա մի քանի ուղղություններ:

Հաշվի առնելով, որ շվեդական բորսայի օպերատոր O-էմ-էքս-ը 2008 թվականի հունվարի 3-ից հանդիսանալու է Հայաստանի ֆոնդային բորսայի և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի սեփականատերը, ՀՀ կենտրոնական բանկը, արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով, սերտորեն կհամագործակցի O-էմ-էքս-ի հետ: Մասնավորապես, կշարունակվի O-էմ-էքս-ի հետ Հայաստանի արժեթղթերի շուկայի զարգացման հեռանկարների ուսումնասիրության և զարգացման առաջարկությունների ծրագրի իրագործումը:

Իրականացվելու են 2007 թվականի հոկտեմբերի 11-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքից բխող բազմաթիվ իրավական ակտերի մշակման և նախկինում մշակված իրավական ակտերի վերանայման աշխատանքներ:

2008թ. ընթացքում Կենտրոնական բանկը նախատեսում է մշակել ներդրումային հիմնադրամների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը: Դրա նպատակը այն մեխանիզմների ձևավորումն է, որոնց միջոցով մանր ներդրողները հնարավորություն կստանան միավորելու իրենց միջոցները և իրականացնելու միասնական բազմազանեցված ներդրումներ: Ներդրումային հիմնադրամների վերաբերյալ օրենսդրության ձևավորումը նաև անհրաժեշտ իրավական հիմքեր կստեղծի վենչուրային, արժեթղթավորման հիմնադրամների, ինչպես նաև կենսաթոշակային ակտիվների կառավարիչների և պահառուների գործունեության համար:

2008թ. ընթացքում նախատեսվում է վերամշակել նաև բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ օրենսդրությունը, որի արդյունքում բաժնետիրական ընկերություններում կներդրվեն կորպորատիվ կառավարման լավագույն սկզբունքները: Այդ փոփոխությունների շնորհիվ ակնկալվում է օրենսդրությունը դարձնել առավել բարենպաստ՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման և այդ կազմակերպաիրավական ձևի ընդլայնման համար և, միևնույն ժամանակ, չխոչընդոտող՝ արդեն գործող ընկերությունների համար:

Մասնավորապես, մշակվելու են նորմատիվ իրավական ակտեր, որոնք կարգավորելու են ներդրումային ընկերությունների լիցենզավորման և գրանցման ընթացակարգերը, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեությունը, ներդրումային ընկերությունների, ֆոնդային բորսայի օպերատորի և կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, ներդրումային ընկերությունների տնտեսական նորմատիվները:

Շարունակվելու են «Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» ԱՀՄԿ-ի (International Organization of Securities Commissions) բազմակողմանի համաձայնության հուշագրին (Multilateral Memorandum of Understanding (MOU) concerning consultation and cooperation and the exchange of information) միանալու աշխատանքները: Այս հուշագրին միանալը հնարավորություն կընձեռի հարցման հիման վրա օտարերկրյա կարգավորողներից ստանալու արժեթղթերի շուկայի վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև ցուցաբերելու լիակատար փոխադարձ աջակցություն:

Միևնույն ժամանակ, հրապարակային առաջարկի միջոցով կշարունակվի աջակցությունը արժեթղթերի թողարկումներ իրականացնողներին:

«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» և «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքների նախագծերը ԱԺ կողմից հաստատվելուց հետո, 2008 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ կողմից կմշակվեն Արժեթղթավորման հիմնադրամների գործունեության լիցենզավորման և կարգավորման վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերը:

Վճարահաշվարկային համակարգ

2008 թվականին Կենտրոնական բանկը կշարունակի բարեփոխել ՀՀ վճարահաշվարկային բնագավառը կարգավորող իրավական դաշտը: Արդեն ընթացքի մեջ են «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի լրամշակման աշխատանքները, որոնք կավարտվեն 2008 թվականին: Դա թույլ կտա ապահովել վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության ամբողջական կարգավորումը: Օրենքում հստակեցվում են նաև վճարային համակարգերին անդամակցությանը վերաբերող պահանջները: Նախատեսվում են նաև «էլեկտրոնային փող» թողարկող կազմակերպությունների գործունեության կարգավորման աշխատանքներ:

Ֆինանսական կայունության համակարգ

Ներկայումս աշխարհում, ֆինանսական համակարգի առանձին բաղկացուցիչների ռիսկերի ուսումնասիրությունից և վերահսկումից զատ, օրախնդիր է դարձել երկրի ընդհանուր ֆինանսական համակարգի զարգացումների, ռիսկերի և կայունության խոչընդոտների գնահատումը, կարգավորումն ու վերահսկումը: 2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկը ստանձնել է ամբողջ ՀՀ ֆինանսական համակարգի վերահսկողությունը: Ֆինանսական կայունության ապահովման համատեքստում կարևորվում է ինչպես ֆինանսական հատվածում, այնպես էլ մակրոտնտեսության բոլոր հատվածներում (իրական, հարկաբյուջետային, արտաքին) առաջացող ռիսկերի մանրակրկիտ ուսումնասիրությունը: ՀՀ ֆինանսական համակարգի գործունեության կայունության ապահովման շրջանակներում 2008 թվականին Կենտրոնական բանկը կշարունակի բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկաների, ինչպես նաև ֆինանսական համակարգի այլ մասնակիցների ռիսկերի համալիր ուսումնասիրության, բացահայտման, վերահսկողության և կարգավորման աշխատանքները:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը դրանց մասնաճյուղերը

Առևտրային բանկեր		Մասնաճյուղեր	
		31.12.2006	31.12.2007
1	ՎՏԲ Հայաստան բանկ	98	89
2	Արդշինինվեստբանկ	51	53
3	Հայէկոնոմբանկ	43	45
4	Արցախ բանկ	14	14
5	Կոնվերս բանկ	16	23
6	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ	16	27
7	Յունիբանկ	27	29
8	Անելիք բանկ	8	8
9	Առէկսիմբանկ	8	9
10	Ինեկո բանկ	4	5
11	Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	2	7
12	Պրոմեթեյ բանկ	2	3
13	Հայներարտբանկ	-	-
14	Զարգացման հայկական բանկ	-	2
15	Հայբիզնեսբանկ	1	12
16	Մելլաթ բանկ	-	-
17	Կասկադ բանկ	-	-
18	Բիբլոս Բանկ Արմենիա	4	4
19	ԲՏԱ ինվեստ բանկ	2	3
20	Արարատ բանկ	3	14
21	Արմսվիսբանկ	-	-
22	ՊրոԿրեդիտ բանկ	-	-
Ընդամենը		**299**	**347**

Հավելված 2. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

Ցուցանիշներ	Արժույթ	31.12.05	31.12.06	Փոփոխությունը 31.12.06-31.12.05	31.03.07	Փոփոխությունը 31.03.07-31.12.06	30.06.07	Փոփոխությունը 30.06.07-31.03.07
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	11193271	15372106	37.3%	14456203	-6.0%	14856839	2.8%
	Ա	15791693	15198111	-3.8%	16804204	10.6%	19423062	15.6%
